ԱՒԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՄԱՍ 1

ԼՈՍ ԱՆԺԵԼԷՍ 1997

9(47.925)
Հ-31

ԱՌԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

52332

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԼՈՍ ԱՆԺԵԼԸՍ - 1997

«Ո՛վ հայ ժողովուրդ,

քո միակ փրկութիւնը

քո հանգանակն ոգի մեջ է»:

Եղիշե Չարենց

ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԱՐԵԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ

25-ՐԴ

ԱՄԵԱԿԻՆ



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԿՏԱԿԸ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Գիրքը Բովանդակում է հայկական հարցի և հայերի ցեղասպանութեան վերաբերող Պրոֆ. Աւետիս Փափազեանի 1994-1996 թթ. Լոս Անճելեսի հայկական մամուլում* լոյս տեսած գիտական յօդուածները, նորայայտ փաստագրական նիւթերը, նամակները, գրախօսութիւնները և թարգմանութիւնները օսմաներէն բնագրերից /արաբատառ թուրքերենից/, որոնք նոր լոյս են սփռում Ազգուլ համիտեան բռնատիրութեան և երիտթուրքերի կառավարութեան կողմից դաժանօրէն կազմակերպուած արևմտահայերի զանգուածային տեղահանութիւնների ու կոտորածների մասին:

Գրքում չեն ընդգրկուած հեղինակի հետևեալ երկու յօդուածները՝ ,,Իրավիճակը մեծ եղեռնի նախաշեմին'' /Տես ,,Նոր Օր'' եռօրեայ, Ապրիլ 23, 1994, էջ 7 / և ,,Հայերի ցեղասպանութիւնը թուրքական աղբիւրների մեկնաբանութեամբ''/Տես ,,Ասպարէզ'' , Ապրիլ 23,1994/, քանի որ այդ նիւթերը հրապարակուել են 1996թ. լոյս տեսած Աւետիս Փափազեանի ,,Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում'' աշխատութեան մեջ:

Գիրքը բաղկացած է երկու մասից:

Անհրաժեշտ ծանոթագրութիւնները տրուած են յուրաքանչիւր յօդուածի վերջում:

---

* Տես ,,Նոր Օր'' , ,,Ասպարէզ'', ,,Մասիս'', ,,Հայ կեանք'': Նշենք, որ յօդուածների գերակշռող մասը հրատարակուել է ,,Նոր Օր'' Եռօրյայում,որպէս այդ թերթի աշխատակից:

Գրքի առանձին էջերում բերուած են հեղինակի նկարչական գործերից նմուշներ :

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

1. ԵՐԿՈՒ ԽՕՍՔ
2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ և ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ---------- էջ 1
3. ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՔԵԱՄԻԼ ՓԱՇԱՆ ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 19-րդ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ---------- 7
4 ՕՍՄԱՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՋԵԼԱԼ ՆՈՒՐԻՒ ԵՐԿԵՐՈՒՄ ---------- 34
5. 1915 թ. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆԸ ՅՂՈՒԱԾ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ---------- 48
6. ԳՐԻԳՈՐ ՋՕՀՐԱՊԻ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՎԵՐՋԻՆ ՃԻԳԵՐԸ ---------- 56
7. ՀԱՅՆ ՏԱՌԱՊԵԼՈՑ ---------- 66

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

8. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ և ՄԵԾ ԵՂԵՌՆԸ-- 1
9. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 80-րդ ՏԱՐԵԼԻՑԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ ---------- 23
10. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ և ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԽԵՂԱԹԻՒՐՈՒՄՆԵՐԸ ---------- 30
11. ՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՌՆԱՐ ԼԵՎԻՆԻՆ ,,ՈՉ ԹԷ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՌՆԱԳԱՂԹ, ԱՅԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ'' ---------- 53
12. ԲՌՆԱԳԱՂԹ ԹԷ՞ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ---------- 58
13. ԲԱՑ ՆԱՄԱԿ LE MONDE ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ---- 62

14. ԲԱՑ ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆ ԹԱՆԷՐ ԱՔԶԱՄԻՆ ---69
15. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ,,ԶԱՄԱՆ'' ԹԵՐԹԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԻ ՄԱՍԻՆ ----------73
16. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՊՐՈՖ.ԵՐՈՒԱՆԴ ՍԱՐԳՍԵԱՆԻ ,,ԴԱՎԱԴԻՐ ԳՈՐԾԱՐՔ'' ԳՐՔԻ ՄԱՍԻՆ ----------76
17. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆ ՅԱՎՈՒԶ ԷՐԶԱՆԻ ,,ՀԱՅԵՐԸ ԴԻՄԱԿԱԶԵՐԾՎՈՒՄ ԵՆ'' ԳՐՔԻ ՄԱՍԻՆ---82
18. ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՅԱՎՈՒԶ ԷՐԶԱՆԻ ,,ՀԱՅԵՐԸ ԵՒ ԻՐԱՆԸ'' ԳՐՔԻ ՄԱՍԻՆ----------89
19. ՀԱՅԵՐԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՑԱԳՈՐԾ ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ---------94
20. ՆԱՄԱԿ ,,ՆՈՐ ՕՐ'' ԵՌՕՐԵԱՅ ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ ՅԱՐԳԵԼԻ ՊՐՆ. ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆԻՆ ---------- 99
21. ԵՐԲ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԵՆՔ ՄԵՐ ՕԹԹՕ ՈՒՈՒԼՖԵՐԸ---102
22. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ ԱՆԱԹՈԼ ՖՐԱՆՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ----------105
23. ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐԻՑ---------- 108
24. ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ---------- 112

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ

1877-78 թուականներին տեղի ունեցաւ ռուս-թուրքական պատերազմը, որն աւարտուեց Ռուսաստանի կատարեալ յաղթանակով: Պատերազմն սկսուեց Պալկանեան եւ Կովկասեան ռազմաճակատներում միաժամանակ: Ռուսական բանակը մէկը միւսի ետեւից գրաւելով պուլղարական քաղաքները ընդհուպ մօտեցաւ Կ. Պոլսի մատոյցներին:

Պուլղարները ցնծութեամբ էին դիմաւորում ռուսական բանակի յաղթական երթը, որը ինչ խօսք, բուռն աշխուժացրեց պուլղար ժողովրդի ազգային ազատագրական պայքարը թօթափելու համար թուրքական դարաւոր լուծը:

Ռուսական զօրքերը մեծ յաջողութիւնների հասան նաեւ կովկասեան ռազմաճակատում: Նոյն ոգեւորութիւնը տիրում էր նաեւ Արեւմտեան Հայաստանում: Հայերը ռուսական զօրքերին դիմաւորում էին, որպէս օսմանեան ծանր լծից իրենց ազատարարների: Ատիճանաբար մեծ վերելք ապրեց նաեւ արեւմտահայութեան ազգային ազատագրական պայքարը:

1878 թ. Մարտ 3-ին Կ. Պոլսից 12 քմ. հեռաւորութեան վրայ գտնուող Սան-Ստեֆանոյում ստորագրուեց հաշտութեան պայմանագիրը: Այն բաղկացած էր 29 կէտերից, որի 16-րդ յօդուածը վերաբերում էր Արեւմտեան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու մասին, հետեւեալ բովանդակութեամբ.

«Նկատի ունենալով, որ ռուսական զօրքերի կողմից Հայաստանում գրաւած վայրերի մաքրումը, որոնք պէտք է վերադարձուեն Թուրքիային, կարող է այնտեղ ընհարումների եւ բարդութիւնների առիթ տալ, որոնք կարող են վնասակար անդրադառնալ երկու պետութիւնների բարեկամական յարաբերութիւնների վրայ, բարձրագոյն դուռը պարտաւորւում է անյապաղ իրագործել բարւոքումներ եւ բարենորոգումներ, որոնք կը ծագեն հայաբնակ գաւառների տեղական պահանջներից ու ապահովել հայերի անվտանգութիւնը քրտերից եւ չերքեզներից»:

Այսպիսով բարձրագոյն դուռը ճանաչում էր Հայաստանի եւ Հայ ազգի գոյութիւնը Օսմանեան կայսրութիւնում եւ բարենորոգումների անուան տակ հայկական հարցը դառնում էր միջազգային դիւանագիտութեան հարց:

16-րդ յօդուածը ցնծութեամբ ընդունուեց հայ հասարակական հոսանքների կողմից: Նրա կարեւորութիւնը կայանում էր նրանում, որ բարենորոգումները պէտք է անցկացուէին Ռուսական զօրքերի Արեւմտեան Հայաստանում գտնուելու ընթացքում: Բնականաբար Եւրոպական մեծ տէրութիւնները չէին հանդուրժելու Ռուսաստանի միակողմանի յաջողութիւնը: Ուստի պահանջեցին միջազգային վեհաժողով հրաւիրել եւ համատեղ քննարկել հաշտութեան պայմանագիրը:

Տուեալ ժամանակ Եւրոպական պետութիւնները բոլորն էլ իրենց տնտեսական եւ քաղաքական հաշիւներն ունէին եւ ձգտում էին շահարկել հայկական հարցը միայն իրենց դիրքերը ամրապնդելու նպատակներով: Իսկ Թուրքիան ազգային ազատագրական պայքարի ելած ժողովուրդներին ձգտում էր վայրագօրէն խեղդել արեան մէջ: Հայերի բարենորոգումների հարցը համարում էր Թուրքիայի ներքին գործը, ամէն կերպ խուսափելով իրագործել այն:

Ահա այս իրավիճակում, 1878 թ. Յունիս 13-ին բացուեց Պերլինի վեհաժողովը՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Աւստրօ-Հունգարիայի եւ Թուրքիայի պատուիրակների մասնակցութեամբ:

Առանձին նիստերին ներկայ գտնուեցին Յունաստանը, Ռումինիան, Սերպիան, Զեռնոգորիան եւ Իրանի ներկայացուցիչները: Պուլգարական եւ հայկական պատուիրակութիւններին հնարաւորութիւն չտրուեց մասնակցել վեհաժողովին: Յայտնի է, որ վեհաժողովին մասնակցելու համար Պերլին էին մեկնել Մ. Խրիմեանը, նրա քարտուղար Մինաս Զերազը, Նար-Պէյը(Խորէն Գալֆայեան), Ստեփան Փափազեանը:

Յուլիս 8-ին Անգլիայի արտաքին գործերի նախարար՝ Սոլսբերին վեհաժողովին ներկայացրեց հայերին վերաբերող յօդուածի իր մշակած նախագիծը, որը մասնակի խմբագրութեամբ ընդունուեց որպէս 61-րդ յօդուած հայկական բարենորոգումներ անուան տակ հետեւեալ տեսքով.

«Բարձրագոյն Դուռը յանձն է առնում հայկական վայրերում անյապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ ու բարենորոգումներ եւ ապահովել հայերի անվտանգութիւնը քրտերից ու չերքեզներից: Այդ նպատակով ձեռնարկուած միջոցառումների մասին նա պարտաւոր էր պարբերաբար հաղորդել պետութիւններին, որոնք պէտք է հսկեն դրանց գործադրութիւնը»:

Ինչպէս տեսնում ենք այստեղ արդէն Հայաստան բառը չկար: Եթէ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը Թուրքերին պարտաւորեցնում էր բարենորոգումներ անցկացնել Արեւմտեան Հայաստանում ռուսական բանակի առկայութեամբ(6 ամսեայ ժամկէտում), Պերլինի պայմանագրով այն փոխարինւում էր մեծ պետութիւնների բարենորոգումներին վերահսկելու համատեղ, բայց անպատասխանատու, մշուշոտ երաշխաւորութեամբ: Յայտնի չէր թէ չկիրառելու դէպքում ինչ միջոցներ պիտի ձեռնարկուէին Թուրքիայի հանդէպ:

Եւ այսպէս Պերլինի վեհաժողովից յետոյ, երբ հայկական հարցը միջազգային բնոյթ ընդունեց, սուլթանական կառավարութեան ազգային եւ կրօնական հալածանքները, կեանքի ու գոյքի անապահովութիւնը, հարկային ծանր գանձումներն ու գաւառային պաշտօնեաների չարաշահումներն աւելի մեծ չափերի հասան:

Առանձին Թուրք պետական գործիչներ, ինչպէս օրինակ մեծ վեզիր Քեամիլ փաշան, բացայայտ յայտարարում էին Օսմանեան կայսրութիւնում Հայ ազգը բնաջնջելու մասին:

1891 թ. Ապտուլ Համիտի նախաձեռնութեամբ կազմակերպուեցին հիմնականում քրտերից կազմուած «Համիտիէ» անկանոն զօրագնդերը, որոնց գլխաւոր նպատակներից մէկն էր հալածել ու կոտորել Հայ բնակչութեանը:

Միւս կողմից Հայ ժողովուրդը Նկատելով Պերլինի վեհաժողովից յետոյ մեծ պետութիւնների անտարբեր վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ, իր փրկութեան համար բռնեց սեփական ուժերով պայքարելու ուղին: Բուռն վերելք ապրեց Օսմանեան բռնակալութեան լծից Հայ ժողովրդի ազատագրման շարժումը:

1887 թ. Հնչակեան եւ 1890 թ. Դաշնակցութիւն կուսակցութիւնների ստեղծումով աննախադէպ պայքար սկսուեց Հայ ժողովրդին զէնքի ուժով ազատագրելու ծրագրի իրականացմանը: Միեւնոյն ժամանակ կազմակերպւում էին հակակառավարական ելոյթներ ու ցոյցեր, որպէսզի գրաւեն Եւրոպական դիւանագիտութեան ուշադրութիւնը հայկական հարցի վրայ:

Օրինակ, 1890 թ. Յուլիս 15-ին Կարինում տեղի ունեցած հայերի հալածանքների համար, Հնչակեանները Կ. Պոլսում ցոյց կազմակերպեցին: Այն տեղի ունեցաւ հայոց մայր եկեղեցու եւ առաջնորդարանի գտնուած Գում-Գափուի անունը կրող թաղամասում: Եղան բախումներ եւ մահացութիւններ: Յետագայում 1895 թ. Սեպտեմբեր 30-ին, Հնչակեան կուսակցութիւնը կազմակերպեց Կ. Պոլսի Պապ-Ալիի խաղաղ ցոյցը, որպէսզի մամիսեան բարենորոգումների գործադրման խնդրում հրաւիրեն Եւրոպական տէրութիւնների ուշադրութիւնը: 1896 թ. Օգոստոսին Կ. Պոլսում Դաշնակցութիւն կուսակցութիւնը կազմակերպեց Պանք Օթոմանի գրաւումը, այնուհետեւ 1897 թ. Խանասորի արշաւանքը եւայլն:

Ապտուլ Համիտի վարչակարգի հալածած քաղաքականութեան դէմ ուղղուած ժողովրդական յուզումները լայն թափ ստացան յատկապէս Սասունում:

Հայ ժողովուրդը սկսեց բուռն պայքար մղել թօթափելու Թուրքական ծանր լուծը: 1890-ական թուականներից սկսած սասունցիները ինքնապաշտպանական կռիւներ մղեցին Թուրք բռնակալների դէմ եւ շեշտակի հակագրոհներով ետ շպրտեցին Թուրքական յարձակումները: Սակայն թշնամու գերակշռող մարտական սպառազինութեան դէմ չկարողացան մինչեւ վերջ դիմակայել եւ ազատագրական պայքարը հասցնել իր յաղթական աւարտին:

1894թ. Օգոստոսին Թուրքական բանակը ծաւալուն յարձակում է նախաձեռնում Սասունի վրայ: Տեղի ունեցաւ մի սարսափելի ջարդ, որին զոհ դնացին անխտիր տղամարդիկ, կանայք ու երեխաներ: Սասունում եւ յարակից հայաբնակ նահանգներում, ինչպէս նաեւ յե-

տագայում Կ.Պոլսում տեղի ունեցած կոտորածները բողոքի մեծ ալիք բարձրացրին միջազգային հանրութեան շրջանում: Մեծ տէրութիւններից պահանջւում էր միջամտել եւ կանխել հայերի կոտորածը: Ի վերջոյ տեղի տալով այդ բողոքներին 1895 թ. Յունուարին Սասուն ժամանեց կառավարական մի յանձնաժողով, որի կազմում որպէս դիտորդներ մասնակցում էին Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի ներկայացուցիչները:

1895 թ. Մայիս 11-ին Ռուսաստանը, Ֆրանսիան եւ Անգլիան համատեղ մի ծրագիր ներկայացրին բարձրագոյն Դռանը հայաբնակ նահանգներում (Էրզրում, Պիթլիս, Վան, Սեբաստիա, Խարբերդ եւ Տիարպէքիր) բարենորոգումներ անցկացնելու համար: Այն վաւերացուեց Բարձրագոյն Դռան կողմից Հոկտեմբեր 18-ին բայց չգործադրուեց կեանքում, որովհետեւ մեծ տէրութիւնները հետամուտ չեղան իրենց միջեւ գոյութիւն ունեցող ներքին հակասութիւնների պատճառով: Իսկ Ապտուլ Համիտը օգտուելով այդ հանգամանքից շարունակեց իր հայահալած քաղաքականութիւնը Արեւմտեան Հայաստանում:

Իսկ Պեռլինի վեհաժողովի Արեւմտեան Հայաստանի բարենորոգումների իրագործման վերաբերող 61-րդ յօդուածը դարձաւ մեծ պետութիւնների ձեռքին դիւանագիտական շահարկման առարկայ, որը ինչպէս տեսանք խիստ բացասական հետեւանք ունեցաւ արեւմտահայերի ճակատագրի համար: Անցեալ դարավերջին Արեւմտեան Հայաստանում տեղի ունեցած այդ ահաւոր կոտորածներին զոհ գնացին մօտ 300 հազար անմեղ հայեր:

Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում հայերի բնաջնջման վերաբերող այս նենգ արարքները նոյնութեամբ որդեգրեցին նաեւ 1908 թ. իշխանութեան գլուխ եկած երիտթուրքական կառավարութիւնն ու «Իթթիհատ վե Թերաքքի»(Միութիւն եւ առաջադիմութիւն) կուսակցութեան պարագլուխները: Դրա վառ ապացոյցն է 1909 թ. Ապրիլին Ատանայում եւ Կիլիկիայի մի շարք վայրերում տեղի ունեցած հայերի կոտորածները, որոնք նախօրոք նախապատրաստուած եւ հրահրուած էին երիտթուրքերի կողմից: Ապրիլեան այդ կոտորածների ընթացքում հայերը կորցրին 30 հազար մարդ:

Տուեալ ժամանակի Գերմանացի գիտնական-արեւելագէտ Ժոզէֆ Մարկվարտը այդ առիթով յանգել է հետեւեալ եզրակացութեան.

«Նոյնիսկ «Սահմանադրութեան» հռչակումից յետոյ էլ Օսմանեան քաղաքականութեան հիմնական լոզունգն էր «եթէ չլինեն հայերը, ուրեմն չի լինի նաեւ «հայկական հարցը»: Ատանայի դաժան կոտորածը ցոյց տուեց, որ երիտթուրքերը, որոնք զարմանալիօրէն Եւրոպայում իրենց համար լիբերալ համբաւ ունենալու հասարակական կարծիք էին ստեղծել, իրենց դաժանութեամբ ոչնչով չզիջեցին մեծ մարդասպան Ապտուլ Համիտին»:

Իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին արեւմտահայութեան վիճակը առաւել վատթարացաւ: Գաւառներում կրկին տեղի էին ունենում վայրագ սպանութիւններ, բռնաբարութիւններ, ունեցուածքի հափշտակութիւններ, իսկ յանցագործները մնում էին անպատիժ: Հասկանալի է, որ հայկական հալածանքների հիմնական դրդապատճառը տուեալ ժամանակ կապուած էր հայկական հարցի աշխուժացման հետ, քանի որ հայաբնակ 6 նահանգներում բարեփոխումներ անցկացնելու նպատակով բանակցութիւններ էին տեղի ունենում մեծ տէրութիւնների շրջանակներում: Չնայած այն ի վերջոյ ստորագրուեց Թուրքական կառավարութեան կողմից (Փետրուարի 8-1914 թ.), սակայն հենց սկզբից Թուրքերը դէմ էին դրսից պարտադրուող բարենորոգումներին եւ հսկողութեանը եւ երբեւէ նպատակ չունէին կեանքի կոչելու այն:

Եւ այդպէս արեւմտահայութեան վիճակը աստիճանաբար դարձաւ աւելի վտանգաւոր եւ օրհասական: Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան ղեկավարները իրենց գաղտնի նիստերում երբ ընդունեցին հայերին բռնի տեղահանելու, կոտորելու եւ իսպառ ոչնչացնելու որոշումը, դա պատահական չէր, քանի որ նախորդ տարիներին արդէն նկատւում էին դրա պարզորոշ նշանները, ուղղակի սպասում էին յարմար ժամանակի: Եւ այդ յարմար ժամանակը հանդիսացաւ Համաշխարհային պատերազմը:

Եւ սկսեցին կոտորել հայերին, այն էլ ինչպիսի բարբարոսական ձեւերով:

Այնպէս որ զանգուածային տեղահանութիւններն ու կոտորածները Արեւմտեան Հայաստանի քաղաքներում եւ գիւղերում, ինչպէս նաեւ փոքր Ասիայի տարածքում գտնուող հայաբնակ վայրերում, չէին առնչւում ռազմական նկատառումներով կատարուող միջոցառումների հետ, քանի որ հայութեան բնաջնջման հարցը նախօրոք մշակուած եւ որոշուած էր «Միութիւն եւ Առաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից: Հայկական հարցը լուծելու համար երիտթուրքերն ընտրել էին արեւմտահայութեանը իսպառ բնաջնջելու ճանապարհը:

«Ամենուրեք սկսեցին հաւաքել հայերին,-գրում է թուրք գործիչ Մեւլան Զատէ Ռիֆաթը,- նոյնիսկ առանց հաշուի առնելու հիւանդներին, ծերերին ու երեխաներին: Նրանց, ովքեր ընդունում էին մահմեդականութիւն, ժամանակաւորապէս դուրս էին հանում քարաւաններից, իսկ միւսներին խմբերով, ժանտարմների հսկողութեան ներքոյ ուղարկում էին նախատեսուած ճանապարհներով»:

Այնուհետեւ այդ անգէն ու անպաշտպան քարաւանները մարդկանց տեսողութիւնից հեռու, ամայի վայրերում ենթարկւում էին հայերի բնաջնջման նպատակով ստեղծուած «թէշքիլաթ-ը մահսուսէ»ի(յատուկ կազմակերպութիւն) հրոսակախմբերի յարձակմանը: Իսկ հրաշքով ազատուածները, քաղցից եւ ծարաւից ծայրաս-

տիճան հիւծուած ու ոսկրացած ուրուականների նման յայտնւում էին Միջագետքի եւ Սիրիայի անապատներում:

Եւ այդպէս 1915-16 թուականներին երիտթուրքերի կառավարութեան կիրառած ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով արեւմտահայութիւնը կանգնեց իսպառ ոչնչացման վտանգի առջեւ, տալով մէկուկէս միլիոնից աւելի անմեղ զոհեր:

80 տարի անցաւ 20-րդ դարի սկզբին թուրքական կառավարութեան կողմից մտայղացուած եւ գործադրուած այդ ահաւոր արարքից, բայց պայքարը շարունակւում է: Հայ ժողովուրդը տեւապէս պայքարել է եւ պայքարելու է, որպէսզի միջազգային արենայում պաշտօնապէս ճանաչուի եւ դատապարտուի հայերի ցեղասպանութիւնը եւ արդար հատուցում ստանայ նրա հողային արդար պահանջատիրութիւնը:



ԹՈՒՐՔ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՔԵԱՄԻԼ ՓԱՇԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին արեւմտահայութեան հետ առնչուող իրադարձութիւնների շուրջ լոյս են տեսել բազմաթիւ փաստաթղթերի ժողովածուներ, ուսումնասիրութիւններ եւ մենագրութիւններ, որոնց հեղինակները այս կամ այն չափով տուել են ճշմարտացի եզրահանգումներ: Յատկապէս վերջին շրջանում լուրջ աշխատանք է կատարուած Հայաստանի եւ սփիւռքի հայ պատմաբանների կողմից, որոնք հաւաստի փաստաթղթերի եւ արխիւային նիւթերի հիման վրայ պարզաբանել են իրական եղելութիւնները:

Ինչ վերաբերում է թուրքական աղբիւրներին, առանձին հետաքրքրութիւն կարող են ներկայացնել տուեալ ժամանակաշրջանի թուրք պետական եւ մշակութային գործիչների յուշագրութիւններում արեւմտահայութեան վիճակի մասին տեղ գտած նկարագրութիւններն ու նրանց տեսակէտները: Սակայն, դրանց մեծ մասը շարադրուած է օսմաներէն լեզուով եւ մինչեւ այսօր մատչելի չի եղել հայ ընթերցողին եւ յատկապէս պատմաբաններին: Այդ յուշագրութիւններում մեծ տեղ է յատկացուած Արեւմտեան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կէսերից ծաւալուած հայ ժողովրդի ազատագրական պայքարի հարցերին, ինչպէս եւ հայկական հարցի նկատմամբ Օսմանեան կայսրութեան եւ մեծ պետութիւնների դիրքորոշման խնդրին:

Չնայած նրանց թուրքամէտ դատողութիւններին, դէպքերի նկարագրման ընթացքում դրսեւորած կողմնապահութեան, նրանց յուշերն ու մենագրութիւնները պարունակում են զգալի չափով ուշադրութեան արժանի նիւթեր:

Ստորեւ հրապարակում ենք 19-րդ դարի Օսմանեան կայսրութեան յայտնի քաղաքական գործիչներից մեծ վեզիր (Եպարգոս) Քեամիլ փաշայի յուշագրութիւնից արեւմտահայութեանն առնչուող նիւթերն ու Սուլթան Ապտուլ Համիտ 2-ին (1876-1909 թթ.) ուղղուած զեկուցագրերը, որոնք օսմաներէնից հայերէն են թարգմանւում առաջին անգամ:

Հարկ է նշել, որ Քեամիլ փաշան իր հիմնական ուսումը ստացել է Եգիպտոսի զինուորական ուսումնարանում: Եղել է Եգիպտոսի Նահանգապետ Արբաս փաշայի քարտուղար-թարգմանիչը: Արբաս փաշան, որը անգլիական քաղաքականութեան կողնակիցներից էր, մեծ ազդեցութիւն է ունեցել Քեամիլ փաշայի քաղաքական հայեացքների ձեւաւորման վրայ: Մի խօսքով 1884-1912

թուականների ընթացքում Քեամիլ փաշան չորս անգամ վարել է Օսմանեան կայսրութեան մեծ վեզիրի պաշտօնը: Գրել է Օսմանեան կայսրութեան պատմութիւնը սկզբից մինչեւ 1861 թուականները «Օսմանեան պետութեան քաղաքական պատմութիւնը» խորագրով, որը տպագրուել է 1909-10 թուականներին 3 հատորով: Նա ծրագրել էր երեք հատորով հրատարակել իր քաղաքական յուշերը, սակայն լոյս է ընծայել միայն առաջին հատորը՝ 1911 թ.:

Քեամիլ փաշայի յուշագրութեան մէջ հայութեանն առնչուող նիւթերը եւ Ապտուլ Համիտ 2-ին ներկայացրած նրա զեկուցագրերը հիմնականում վերաբերում են 1894 թ. ամրանը տեղի ունեցած Սասունի ջարդերին եւ 1895 թ. Արեւմտեան Հայաստանում բարենորոգումների վերաբերեալ երեք մեծ տէրութիւնների բարձրագոյն դրանը ներկայացրած յուշագրերին: Առանձնայատուկ հետաքրքրութիւն են ներկայացնում Քեամիլ փաշայի քաղաքական հայեացքները հայկական հարցի եւ մեծ տէրութիւնների դիրքորոշմանը վերաբերող նրա մեկնութիւններն ու խորհրդածութիւնները:

19-րդ դարի վերջին քառորդում մեծ վեզիրի պաշտօն է ունեցել նաեւ մի այլ թուրք պետական գործիչ՝ Սայիդ փաշան, որը իր յուշագրութեան մէջ մանրամասն նկարագրել է 1895 թ. Սեպտեմբերին Հնչակեան Կուսակցութեան կազմակերպած կ. Պոլսի ցոյցը:

Քեամիլ փաշան աչքի էր ընկնում իր հայատեացութեամբ: Դեռեւս 1880-ական թուականներից սկսած նրա մօտ որոշակիօրէն երեւան են գալիս ծայրայեղ ազգայնամոլական գաղափարներ, որոնք զարգանալով յետագայում յանգեցրին ցեղասպանութեան գոկտրինային (ուսմունքին): Նա շնականօրէն յայտարարում էր. «Եթէ Եւրոպան մէջ մեր ծոցը օձ սնուցինք, սակայն պէտք չէ, որ նոյն յիմարութիւնն ընենք մեր Ասիական Տաճկաստանի մէջ, խելօքութիւնը ջնջել վերացնելն է այն ամէն տարերքը, որ օր մը կրնան մեզ նոյն վտանգը ծնանիլ եւ օտարին ձեռնամխութեան առիթ ու գործիք լինել: Հիմա, այսօր գոնէ, Անգլիոյ շահերն կը պահանջեն, որ Փոքր Ասիոյ (մենք եւ Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը ճնչող կլակները պէտք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութենէն եւ միջամտութեան ամէն առիթներէն, ուստի այդ սուրբ նպատակին համար պէտք է եւ պետական իրաւունքը պահանջէ, որ որեւիցէ կասկածելի տարր անհետ ընենք, որպէսզի ապագան ապահովենք, ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ եւ անճիտ ընելու ենք: Եւ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. ամէն գործիք պատրաստ ունինք՝ քիւրտ-չերքէզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ, կրօնական պատերազմ մը կը հրապարակենք եւ դիւրին

պատերազմ այնպիսի ազգի մը դէմ, որ ոչ զենք ունի, ոչ զինուորութիւն եւ ոչ պաշտպան, երբ, ընդհակառակը, մենք զենք էլ ունինք, զինուորութիւն էլ, աշխարհիս ամենամեծ տէրութիւններէն մէկը (Անգլիան -Ա.Փ), եւ ամէնէն հարուստը մեզ զինակից է եւ մեր Ասիական աշխարհին երաշխաւոր: Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի եւ քրիստոնեայ Եւրոպա կրօնակից մը փնտռէ եւ չի գտնէ տաճկական Ասիոյ մէջ, կը թողու զմեզ հանգիստ եւ այն ատեն կը զբաղինք ներքին գործերով եւ բարեկարգութեամբ»:

(Տե՛ս «Փորձ», 6-7, Տփխիս, 1879, էջ 204-205):

Բերուած հատուածը պարզորոշ ցոյց է տալիս, թէ Քեամիլ փաշան ինչպիսի նենգ մտայզացումներ է ունեցել արեւտամահայութեան նկատմամբ:

Յայտնի է, որ Պերլինի վեհաժողովից յետոյ սուլթանական կառավարութեան ջարդարարական քաղաքականութիւնը հայերի նկատմամբ առաւել բացայայտ դարձաւ յատկապէս 1890-ական թուականներին: Թուրքական իշխանութիւնների անկաշկանդ կամակայութիւնները, հարկերի արտակարգ ծանրութիւնը եւ անասելի հարստահարութիւնը այլեւս անհնարին էր տանել: Սասունի հերոս հայութիւնը, զգալով իրեն սպառնացող վտանգը, պատրաստում է հակահարուածի: 1894 թ. Օգոստոսին թուրքական բանակը ծաւալուն յարձակում է նախաձեռնում Սասունի վրայ: Սուլթանի կողմից զինուած զինուորները սարսափելի ջարդի մատնեցին հայ տղամարդկանց, կանանց ու երեխաներին:

Իրենց վրայ բարդուած մեղադրանքը թեթեւացնելու միտումներով թուրքական կառավարութիւնը յաճախ ձգտել է հերքել կառավարական զօրքերի մասնակցութիւնը Սասունի կոտորածներին: Քեամիլ փաշայի յուշագրութեան մէջ պարզ կերպով նշուած է, որ ջարդը տեղի է ունեցել Ապտուլ Համիտի հրամանով: Այն իրագործել է Պիթլիսի 4-րդ բանակի հրամանատարութիւնը՝ Զէքի փաշայի գլխաւորութեամբ:

Սասունի կոտորածները մեծ յուզում առաջացրին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Մամուլում լոյս տեսան բազմաթիւ յօդուածներ, որոնք լիովին բացայայտում էին անմեղ մարդկանց կոտորելու պատճառները եւ մեղադրում էին Ապտուլ Համիտը հայերի հանդէպ վարած վայրագ քաղաքականութեան համար: Անգլիայում առաջադէմ հասարակայնութիւնը կառավարութիւնից պահանջում էր դիմել գործնական միջոցների՝ կանխելու համար հայերի հալածանքները Օսմանեան կայսրութիւնում:

Բողոքների ճնշման ներքոյ ի վերջոյ սուլթանական կառավարութիւնը համաձայնեց յանձնաժողով ուղարկել Սասուն՝ կոտորածի հանգամանքները ուսումնասիրելու նպատակով: Սակայն այդ յանձնաժողովի հետաքննութիւնները առանձնապէս արդիւնք չտուին, քանի որ սուլթանական կառավարութիւնը արդէն վաղօրօք յանձնարարել

էր նրան, առանց քննութեան, արդարացնել տեղական իշխանութիւններին եւ մեղադրանքը բարդել հայ զիւղացիութեան վրայ:

Այդ յանձնաժողովին մասնակցեցին նաեւ երեք մեծ տէրութիւնների դիտորդ պատուիրակները: Յանձնաժողովի կազմում էին Ճալալ պէյը, Մէհմիտ պէյը, Թեվֆիք փաշան: Գլխաւորում էր Շեֆիք պէյը: Յանձնաժողովը Սասուն հասաւ 1895 թ. Յունուարի 23-ին: Թուրքական յանձնաժողովը դէպքերը ձգտում էր ներկայացնել խեղաթիւրուած տեսքով: Իսկ թուրքական իշխանութիւնները բոլոր միջոցներով աշխատում էին խանգարել նրա աշխատանքը, յատկապէս արտայայտուելու ականատեսվկաներին:

Միւս կողմից մեծ պետութիւնները, իրենց ընդհանուր շահերից ելնելով, հրահանգել էին իրենց ներկայացուցիչներին՝ չսրել յարաբերութիւնները թուրքական յանձնախմբի հետ:

Երեք տէրութիւնները, բնականաբար, իրենց շահերն ունէին Թուրքիայում: Հայերի եւ հայկական հարցի համար թուրքական կառավարութեանը յայտագիր ներկայացնելու ձեւական արարողութիւնից բացի նրանք ոչ մի քայլ առաջ չգնացին: Իսկ թուրքական կառավարութիւնը ամէն կերպ փորձում էր նուազեցնել հայերի թիւը, որպէսզի հիմնաւորէր բարենորոգումների աւելորդութիւնը:

Դէպքերին ժամանակակից Երանդ Օտեանը այդ օրերին շատ դիպուկ գրում էր.

«Հայերը կը ջարդուին, հայերը կը կողոպտուին, հայ կիները կ'առեւանգուին, հայերուն հողերը կը յափշտակուին: Կառավարութիւնը կ'ուզէ այդ չարիքներուն դարման մը տանել՝ ասոր համար ի՞նչ հարկ կայ նախ հասկանալու թէ քանի՞ հայ, քանի՞ թուրք քանի՞ միւրտ կայ այդ նահանգներուն մէջ: Ասոնց քանակութեանը չափո՞վ արդարութիւնը պիտի գործադրուի միթէ: Մեծամասնութեան համեմա՞տ բարենորոգումներ պիտի ներմուծուին: Ենթադրենք, որ գաւառի մը մէջ հազար հայ եւ հարիւր հազար միւրտ գտնուի, միթէ այդ հազար հայերը արդարութիւն պահանջելէ պիտի զրկուի՞ն, կամ հարիւրի մէկ համեմատութա՞մբ իրենց բողոքները պիտի լսուին»: (Երուանդ Օտեան, երկեր, Երեւան, 1956, էջ 722):

Հայերին զանգուածաբար բնաջնջելով եւ նրանց թիւը արհեստականօրէն նուազեցնելով, թուրքական կառավարութիւնը ձգտում էր մոռացութեան տալ Պերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը, ինչպէս նաեւ 1895 թ. մայիսեան բարենորոգման ծրագիրը: Միեւնոյն ժամանակ սուլթանական կառավարութիւնը մեծ ջանքեր է թափում հանդարտեցնելու միջազգային հասարակայնութեան կարծիքը կոտորածների կապակցութեամբ: Այս առթիւ Քեամիլ փաշան հետեւեալ խորհուրդն էր տալիս Ապտուլ Համիտին. «Սասունի դէպքը, աւելի շուտ այնտեղի ապստամբութեան ճնշումը հայերի կողմից այնպէս է ուռճացուել եւ անգլիական մամուլում այն աստիճան դաժանութեամբ է նկարագրուել, որ այդ հրապարակումները չէին կարող ազդեցութիւն չգործել ոչ միայն Անգլիայում, այլեւ նոյնիսկ այստեղ՝ Օսմանեան կայսրութեան տարբեր հպատակների վրայ» Hatirat-i Sadri esbak Kamil paşa, Kostantinya, 1329, s. 180 (*արաբատառ*) «Եւ եթէ այժմ որեւիցէ հրատապ բան կայ անելու, դա այն է, որ հետաքննող յանձնաժողովի զեկոյցը շտապ կերպով հրատարակուի Անգլիայում, որպէսզի հանդարտեցուի ընդհանուրի տրամադրութիւնը: Եւ այդ հանդարտեցման նպատակին հասնելու համար բաւական է, որ յիշեալ զեկոյցը հրապարակուի օտար պաշտօնեաների ստորագրութեամբ»:

(I.H. Uzunçarşili, II-ci Abdul Hamid devrinde Kamil paşa, "Belleten", 1955, No. 78, s. 227):

Քեամիլ փաշայի խորհրդով Ապտուլ Համիտը փորձեց հերքել կատարուած եղելութիւնը եւ դրանց վերաբերեալ եղած հաղորդումները: Նրա հրամանով եւրոպական հանդէսներին ուղարկուեցին հերքումներ՝ աշխատելով փոխել միջազգային հասարակայնութեան կարծիքը: Սակայն Ապտուլ Համիտի այս նենգ քայլը չտուեց սպասուած արդիւնքը: Այդ առթիւ ռուսական պետական խորհրդական Ժադովսկին իր զեկուցագրում յայտնում է. «Վրդովեցուցիչ ռազմական միջոցառումների մանրամասնութիւններն արդէն թափանցել են եւրոպական մամուլ եւ ամենուրեք մերկացնող յօդուածների փոթորիկ են բարձրացրել Հայաստանի քրիստոնեայ բնակչութեան նկատմամբ թուրքական զօրքի կատարած գազանային գործողութիւնների դէմ: Այդ պախարակումների ստայօդ եւ անամօթ հերքումները, որ մօտ օրերս սուլթանի անձնական հրամանով ուղարկել են արտասահմանի թուրքական ներկայացուցչութիւններին, հնարաւորին չափ լայն հրապարակման համար, չկարողացան ցանկալի տպաւորութիւն թողնել Եւրոպայի հասարակական կարծիքի վրայ եւ չկանգնեցրին մեղադրանքների ու մերկացումների հեղեղը, որի պատճառով բարձրագոյն դուռը արգելեց օրերս օտարերկրեայ գրեթէ բոլոր լրագրերի մուտքը»: (*Տե՛ս հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան կայսրութիւնում, փաստաթղթերի ժողովածու, Մ.Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ, Երեւան, 1982, ռուսերէն*):

1895 թ. Մայիսի 11-ին Անգլիայի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի դեսպանների կողմից բարձրագոյն դրանը համատեղ ներկայացրած բարենորոգումների նոր ծրագիրը, իր թերութիւններով հանդերձ, նոյնպէս կեանքի չկոչուեց: Այն բաղկացած էր 13 գլուխներից եւ 40 յօդուածներից: Բարձրագոյն դուռը որոշ ժամանակ անց դեսպաններին ներկայացրեց իր ծրագիրը, որտեղ ամէն կերպ խուսանաւում էր ընդունելու դեսպանների ներկայացրած առաջարկութիւնները: Բարձրագոյն դրան առաջարկած ծրագիրը բոլորովին չէր կարող ապահովել հայերի կեանքը, գոյքը, թուրքական պաշտօնեաների կամայականութիւն-

ներից, քրտերի հարստահարութիւն-ներից: Մեծ տէրութիւնները չընդունեցին բարձրագոյն դրան ծրագիրը, եւ շարունակուեցին բանակցութիւնները: Այս ընթացքում տեղի ունեցաւ Կ. Պոլսի հայութեան կոտորածը (1895 թ. Սեպտեմբերին): Կոտորած տեղի ունեցաւ նաեւ Տրապիզոնում: Եւրոպական պետութիւնների եւ համաշխարհային հասարակայնութեան պահանջով 1895 թ. Հոկտեմբերին Սուլթան Ապտուլ Համիտի կարգադրութեամբ մեծ վեզիր Սայիտ փաշան ստորագրեց բարենորոգումների ծրագիրը, սակայն նրա մէջ մտցնելով այնպիսի փոփոխութիւններ, որոնք կարող էին նպաստել թուրքական բռնութիւններին: Ապտուլ Համիտը ամէն կերպ աշխատում էր չկատարել ծրագրի պահանջները եւ նոյնիսկ սպառնում էր նոր կոտորածներով:

Յետագայում յիշեալ բարենորոգումների իրականացման հարցում տարակուսանք է յայտնել նաեւ Քեամիլ փաշան.

«Ընթերցելու ընթացքում ես նկատել էի,- գրում է նա,- որ այդ

յօդուածները հազիւ թէ գործադրուէին կեանքում, քանի որ քրտերի գինաթափումը եւ քրիստոնեայ պաշտօնեաների նշանակումը ծանր էր անդրադառնալու քրտերի վրայ: Այնուամենայնիւ քանի որ տուեալ որոշումը հաստատուել էր կայսերական հրամանով, եւ ես իմ հերթին ստիպուած էի ստորագրել այն, մատնանշելով նաեւ, որ տուեալ յօդուածների կիրառումը կապուած է դժուարութիւնների հետ»: (Hatirati Kamil paşa, s. 186):

Յատկանշական է, որ ժամանակակից թուրք պատմաբանները իրենց ուսումնասիրութիւններում, շրջանցելով պատմական իրական փաստերը, նենգափոխում են նոյնիսկ իրենց ազգակից նախորդների գրի առած վկայութիւնները:

1954 թ. Հիլմի Քեամիլ Պայուրը Անքարայում լոյս ընծայած «Սադրազամ Քեամիլ փաշայի քաղաքական կեանքը» խորագիրը կրող իր աշխատութեան առաջաբանում չեշտում է, որ ինքը ձգտել է բերել փաստացի նիւթեր եւ յատկապէս ամբողջական հատուածներ Քեամիլ փաշայի յուշերից: Սակայն, բերուած հատուածների եւ բնագրի մեր կողմից կատարուած համեմատութիւնից պարզուեց, որ Հիլմի Պայուրը դիտումնաւոր կրճատել եւ աղաւաղել է բնագրից քաղուած հատուածները: Նախ բոլորովին հանուած են քրտերի մասին եղած տեղեկութիւնները, քանի որ այսօր թուրքերի կարծիքով Թուրքիայում քրտեր կամ քրտական հարց գոյութիւն չունի: Բերուած հատուածներում բաց է թողել արեւմտահայութեան վիճակին վերաբերող այն մասերը, որոնք նպատակայարմար չի գտել: Օրինակ Սասունի դէպքերին վերաբերող հատուածից հանել է հետեւեալ խօսուն տողերը՝ «(Սասունի հարցում) Ապտուլ Համիտը յանդիմանել էր գլխաւոր քարտուղար Սուրէյա փաշային խիստ հեռագիր ուղարկելու համար: «Ես ասել էի խփէ՛ք, այլ ոչ թէ կոտորած սարքէք»:

Համեմատել - Hatirati-i Kamil paşa, s. 180 Hilmi Kamil Bayur, Sadrazam Kamil paşanin siyasi Hayati, Ankara, 1954, s. [173]).

Ժամանակակից թուրք պատմաբանները պնդում են, որ թուրքերը չեն կոտորել հայերին: Մինչդեռ բերուած հատուածում կայ «կոտորած» բառը: Կոտորածի փաստի մասին է խօսւում նաեւ ստորեւ բերուած հատուածում, որը Պայուրը անտեսել է Քեամիլ փաշայի յուշագրութիւնից քաղուած հատուածից՝ «Նա (Աւստրիայի դեսպանը) յայտնեց, որ նախորդ օրը տեղի ունեցած ժողովում, հիւպատոսարաններից դեսպանատները ուղարկուած զեկուցագրերի ընթերցումից պարզուել է, որ կոտորուել են հազարաւոր հայեր, որ Տիարպէքիրում քրտերի կողմից առանց խտրականութեան քրիստոնեաների սպանութիւնները, կողոպուտն ու բռնութիւնները, ինչպէս նաեւ Անատոլիայի այլ վայրերում տեղի ունեցած նոյն խժդժութիւնները տուեալ դարում չտեսնուած բաներ են:

Ծանուցագիրը գրուած է 15 Ջեմազի էլ-էվվել 1313 թ. (Նոյեմբեր 3, 1895 թ.): Տե՛ս Hatirat-i Kamil paşa, s. 188):

Ինչպէս ասուեց վերեւում, սուլթանական կառավարութիւնը միշտ ձգտել է կեղծել եւ նուազեցնել հայերի թիւը Արեւմտեան Հայաստանում՝ արդարացնելու համար բարեփոխութիւնների ձգձգման իր նենգ դիտաւորութիւնը: Հայերի մեծամասնութիւն կազմելու փաստի մասին ուշադրութեան արժանի խոստովանութիւն է Քեամիլ փաշայի «Անատոլիայի (իմա՝ Արեւմտեան Հայաստան,- Ա.Փ.) այն գիւղերում եւ քաղաքներում ուր հայերը մեծամասնութիւն էին կազմում ապստամբութիւնը առաւել կազմակերպուած բնոյթ էր կրում»:

(Hatirati-i Kamil paşa, s. 186):

Այսպիսով, բերուած հատուածները, որոնք դիտումնաւոր կերպով կրճատուած են Հիլմի Պայուրի աշխատութեան մէջ, ցոյց են տալիս, թէ ինչպէս թուրք ժամանակակից պատմագրութիւնը խեղաթիւրում եւ աղաւաղում է հայ ժողովրդի պատմութիւնը:

Ահա այս առումով անհրաժեշտ են դառնում թուրքական պատմական բնագրերի եւ այդ թուում նաեւ Քեամիլ փաշայի յուշերի գիտական թարգմանութեան հրապարակումը: Քեամիլ փաշայի յուշերից քաղուած ծաւալ բերուած նիւթերը թարգմանելիս աշխատել ենք հարազատ մնալ նրա ոճական առանձնայատկութիւններին: Տրւում են նաեւ անհրաժեշտ ծանօթագրութիւններ:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԲՆԱԳՐԻՑ

Ապտուլ Համիտը հայերի ապստամբութեան եւ Սասունի դէպքերի կապակցութեամբ հարցնում է նախկին մեծ վեզիր Քեամիլ փաշայի կարծիքը:

Իմ պաշտօնավարութեան ընթացքում աշխատել եմ բոլորովին չվշտացնելու նորին պայծառափայլութիւն փադիշահին, հաւատարմութեամբ ծառայել եւ պաշտպանել պետութեան շահերը եւ փառապանծ սուլթանութեան իրաւունքները: Նոյնիսկ մի շարք հարցերում առաջ եկած տարաձայնութիւններն էլ հարթուել են յետագայում: Այժմ էլ, առանց վշտացնելու նորին պայծա-

ռափայլութեանը, պատրաստ եմ պատասխանելու այդ հարցերին: Երեք պետութիւնների կողմից կատարուած առաջարկի մասին ոչինչ չեմ կարող ասել:[1] Նրանց հետ չփում չունենալու պատճառով ոչինչ չեմ կարող ասել նաեւ յիշեալ առաջարկը ձեւափոխելու հնարաւորութեան մասին: Այդ առաջարկը փոխուելու հնարաւորութեան մասին կարող եմ ասել, հիմնուելով միմիայն դեսպանների հետ ունեցած իմ յարաբերութեան վրայ: Սակայն ի՞նչը կարող է պատճառ հանդիսանալ այդ առաջարկին: Մայրայեղ դէպքում այդ առաջարկին կարող են հիմք ծառայել Պերլինի դաշնագիրը կամ էլ իսլամի հանդէպ ունեցած նրանց վրէժխնդրութիւնը: Այսուհանդերձ այն չի կարող դաշնագրի հետեւանքով առաջ գալ, քանի որ դաշնագրից առաջ եկած սխալների համար պետութիւններին նախազգուշացման իրաւունք է վերապահուում: Հետեւաբար յիշեալ առաջարկի համար պէտք է հիմք ծառայի վրէժխնդրութիւնը: Քանի որ Սասունի դէպքերը չափից աւելի ուռճացուելով՝ Եւրոպայում արտակարգ լուրեր տարածուեցին, որ, իբր թէ, (կառավարութեան) հրամանով զինուորներ են առաքուել, որոնք բռնութիւն եւ դաժանութիւն են գործադրել հայերի նկատմամբ եւ ոչնչացրել 10,000 հայեր: Եւ քանի որ այդ սուտ լուրերը եւ չափազանցութիւնները չհերքուելով լռութեան մատնուեցին, ապա այդ դէպքերը նկատի առնուեցին որպէս իրականութիւն:

Անգլիական հասարակայնութիւնը ցասումով արտայայտեց իր յուզմունքը այդ առթիւ: Տեղի ունեցան բազմաթիւ միթինկներ, որտեղ արտասանուեցին զանազան անհեթեթութիւններ պարունակող ճառեր: Ստեղծուեց այնպիսի վիճակ, որ ոչ անգլիական կառավարութիւնը եւ ոչ էլ անգլիական դեսպանութիւնը չեն կարող այս խնդրում մի բան անել: Ինչ վերաբերում է Ռուսաստանին եւ Ֆրանսիային, ինչպէս ասուեց, մասնակցել են նրանք այդ առաջարկին ոչ թէ (Օսմանեան) պետութեան իրաւունքներն ու շահերը պաշտպանելու եւ Անգլիայի ցասումը հանդարտեցնելու նպատակով, այլ մի գուցէ, Անատոլիայում անգլիացիների ազդեցութիւնը թուլացնելու եւ իրենցը ուժեղացնելու նկատառումներով: Այնպէս որ յիշեալ պետութիւնների կողմից այդ առաջարկի գործադրումը, եթէ վճռականապէս հաստատուել է, ապա դրա չընդունելը բաւականին վտանգաւոր կը լինէր, քանի որ, հակառակ դէպքում, նրանք կարող են դիմել այլ միջոցների: Եւ եթէ նրանք վճռականօրէն են տրամադրուած այդ առաջարկի նկատմամբ, ապա անհնար կը լինի այն փոփոխութեան ենթարկել: Հետեւաբար, եթէ այժմ որեւիցէ հրատապ բան կայ անելու, դա այն է, որ հետաքննող յանձնաժողովի զեկոյցը շտապ կերպով հրապարակուի Անգլիայում, որպէսզի հանդարտեցուի ընդհանուրի տրամադրութիւնը: Եւ այդ նպատակին

հասնելու համար բաւական է, որ յիշեալ զեկոյցը հրապարակուի օտար պաշտօնեաների ստորագրութեամբ: Այդ զեկոյցի հրապարակումից յետոյ կարելի է տուեալ առաջարկի աւելորդութեան մասին հարցապնդում կատարել երեք տէրութիւններին:

Այս զեկոյցը հրատարակել է Ի.Հ. Ուզունչարշըլը: Տ'ես I.H. Uzunçarşili, II-ci Abdulhamid devrinde Kamil paşa. "Belleten", 1955, No. 78, s. 227):

1. Ծանօթագրութիւնը թարգմանիչի Ա.Փ.: Նկատի ունի 1895 թ. Մայիսի 11-ին Անգլիայի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի դեսպանների կողմից բարձրագոյն դրանը համատեղ ներկայացրած բարենորոգումների ծրագրին:

* * *

1311 (1894) թուականի սկզբին Անատոլիայում բռնկուեց հայերի ապստամբութիւնը: Սասունում սկսուած մի վտանգաւոր իրադարձութեան հետեւանքով մի գիշեր սուլթանի մտերիմներից հաճի Ալի պէյը բնակարանս գալով յայտնեց, որ փաշիշահը ինձ ուզում է տեսնել: Հէնց որ պալատ հասայ, դարպասի առաջ սպասող երկու ծանօթ անձնաւորութիւններ ինձ առաջնորդեցին հարեմի հատուածը: Ներս մտնելիս նկատեցի, որ փաշիշահը ոտնկայս գտնւում էր չափազանց տագնապալի վիճակում: Նա, խօսքը ինձ ուղղելով, ասաց. «Ախ, ինչո՞ւ չէք հետաքրքրւում, երեք օր է քուն չունեմ»: Իսկ ես, մտնելով նրա յուսահատ դրութեան մէջ, ցանկացայ իմանալ նրա տագնապի պատճառների մասին: Վեհապետը ինձ բացատրեց Սասունի ապստամբած հայերի դաժան արարքները եւ աւելացրեց, որ ինքը հրամայել է հեռագրել 4-րդ բանակի հրամանատարութեանը՝ ապստամբներին ճնշելու համար եւ որ այդ հրամանի գործադրումը շարժառիթ է դարձել Անգլիայի միջամտութեանը: Նա աւելացրեց, որ ինքը յանդիմանել էր գլխաւոր քարտուղար Սուրէյա փաշային խիստ հեռագիր առաքելու համար: «Ես ասել էի խփէք, այլ ոչ թէ կոտորած սարքէք» (ընդգծումը մերն է Ա.Փ.): Այնուհետեւ սուլթանը հրամայեց, որպէսզի ես գնամ անգլիական դեսպանի մօտ եւ յորդորանքով յայտնեմ իր կարգադրութիւնը այն մասին, որ դեսպանի կողմից հետաքննութեան համար դէպքի վայրը ուղարկուած յատուկ պաշտօնեային ընկերանան նաեւ Ֆրանսիայի եւ Ռուսաստանի ներկայացուցիչները, եւ տեղի դատարանում դատավճիռ կայացնելու համար կազմուի նաեւ բողոքարկման յանձնաժողով, որպէսզի տեղում ի կատար ածուի վերջնական դատավճիռը:

Ես անմիջապէս մեկնեցի դեսպանատուն, որտեղ դիւրագրգիռ բնաւորութիւն ունեցող դեսպանին՝ պարոն Ֆիլիփ Քերրիին գտայ յուզուած վիճակում: Մտերմիկ զրոյցից յետոյ նրան յայտնեցի վեհապետի հրամանը: Իր պատասխանում դեսպանը յայտնեց, որ փաշիշահի կողմից այդ առթիւ նախօրօք իր մօտ եկած արտաքին գործերի մինիստրին ինքը հարցում էր կատարել, թէ Ֆրանսիայի եւ Ռուսաստանի դեսպանները այդ

գործին ինչ պայմաններով էին ներգրաւուելու: Այնուհետեւ նա կարդաց Անգլիայի արտաքին գործերի մինիստրութեան իր գրած հեռագրերի պատճէնները, իսկ դէպքի վայրում բողոքարկման յանձնաժողով ստեղծելու հարցի շուրջ ակնարկութիւն չարեց: Վերադարձիս իրադրութիւնը յայտնեցի փաշային:

Որոշ ժամանակ անց, երբ փոփոխութիւն տեղի ունեցաւ կաբինետում, սուլթան Համիտը իր Սէր Կարինի (սուլթանի մտերիմ եւ հաւատարիմ անձնաւորութիւն, Ա.Փ.) միջոցով ինձ յայտնեց, որ մտադիր է ինձ յանձնել պետական խորհրդի նախագահութեան պաշտօնը: (Ծանօթագր. թարգմանչի- Ա.Փ., 1895 թ. հայկական հարցը, երբ կրկին միջազգային դիւանագիտութեան կարեւոր հարցերից մէկը դարձաւ, Ապտուլ Համիտը երկրորդ անգամ մեծ վեզիրութեան պաշտօնին նշանակեց հայատեաց Քեամիլ փաշային):

Իսկ ես անցեալի դէպքերը մտաբերելով խուսափում էին վեզիրութիւնից եւ դրա համար էլ իմ պատասխանում նշեցի, որ կայսրութիւնում պաշտօնական ծառայութեան մէջ գտնուելը պատուի հարց է, ես պաշտօնից դուրս էլ միշտ պատրաստ եմ եղել ծառայելու իմ վեհապետին:

Հայերի ապստամբութիւնը, հետզհետէ ընդարձակուելով, սկսել էր տարածուել նաեւ Անատոլիայի այլ շրջանները, մեծ հոգս պատճառելով պետութեանը: Միւս կողմից էլ անգլիական, ռուսական եւ ֆրանսիական պետութիւնները, միաձայնութեան գալով, մի յուշագիր էին ներկայացրել բարձրագոյն դրանը, որպէսզի բարենորոգումներ անցկացուէին Անատոլիայում: Ահա այս դժուարին կացութիւնից դուրս գալու համար սուլթան Համիտը արձակել էր մի հրաման, որպէսզի ձեռք առնուէին անհրաժեշտ միջոցներ: Այդ առթիւ ես էլ յայտնել էի իմ կարծիքը հետեւեալ գրութեամբ: (Տե՛ս Hatirati Kamil Pasa, s. 180:

ՅԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

«Թէ ինչ վտանգաւոր հետեւանք կ'ունենայ հայկական հարցի շուրջ երեք պետութիւնների կողմից կատարուած առաջարկը, ակնյայտ է: Այդ առաջարկները հաստատելու համար եթէ բարձրագոյն դուռը համաձայնութիւն տայ դեսպաններին, ըստ երեւոյթին, կը խաբուի մեր ապահովութիւնը եւ կը թուլանայ կայսրութեան ունեցած իրաւունքները»:

Այս հարցադրումը կատարել էր նորին մեծութեան մտերիմներից մէկը՝ ծածկագրութեան գրասենեակի քարտուղար Քեամիլ էֆէնտին, միեւնոյն ժամանակ առաջարկելով մի ելք գտնել այդ խնդրի լուծման համար:

Ինչպէս ինձ յայտնի է, սրանից երեք-չորս ամիս առաջ, այսինքն այս հարցում՝ անգլիացիները միջամտութեան ժամանակ մի գուցէ հնարաւոր էր նրանց առաջ քաշած պահանջները, այդ թուում մեզ համար աննպաստ բարենորոգումներ

անցկացնելու ծրագիրը կանխել: Մինչդեռ այսօր, ներկայ առաջարկի մերժումը վտանգաւոր լինելով հանդերձ, նրա փոփոխման համար պահանջ ներկայացնելն անգամ արդեօ՞ք ընդունելի կը համարուէր նրանց կողմից, թէ ոչ, ինձ համար անյայտ է: Անհրաժեշտ է նախ պարզել, թէ որքանով հնարաւոր է այն փոփոխել: Բացի այդ, տուեալ յուշագրի մէջ պետութիւնների կողմից նախատեսուած կէտերի փոփոխման հարցը կախուած է այն բանից, թէ մինչեւ հիմա այդ հարցի շուրջ դեսպանների հետ տեղի ունեցած բանակցութիւնների եւ զրոյցների ընթացքում ինչպիսի դիրքորոշում են ունեցել երկու կողմերը: Այնուհանդերձ, եթէ բարձրագոյն դուռը կարողանայ ճիշդ ուղու վրայ կանգնել, ապա իմ կարծիքով հնարաւոր է ուղղել երեք պետութիւնների, յատկապէս Անգլիայի սխալ տեսակէտները: Իսկ եթէ Օսմանեան կայսրութեան Անատոլիայում ունեցած իրաւունքներին միւս պետութիւններն էլ իրենց մասնակցութիւնը ցուցաբերեն, ապա մօտ ժամանակներս նոյն իրավիճակը կը տարածուի նաեւ Ռումելիի, (ծանօթագր. թարգմանչի Ա.Փ., Օսմանեան կայսրութեան եւրոպական տիրոյթները կոչւում է Ռումելի): Միջերկրական ծովում գտնուող կղզիների եւ այնուհետեւ այլ վիլայէթների վրայ, այնպէս որ Արեւելեան հարցը կը լուծուի իւրովի, առանց պատերազմի:

Եթէ ուշադրութիւն դարձուի պետութիւնների առաջարկութեան բովանդակութեանը, ապա հայկական հարցում կարելի է անել հետեւեալ երկու ենթադրութիւնները: Մէկը՝ Պերլինի պայմանագրի հիման վրայ հայաբնակ նահանգներում բարենորոգումների պահանջն է, միւսը՝ տեղի ունեցած կոտորածների պատրուակով, ապստամբած հայերին արդարացնելը, եւ Օսմանեան կայսրութեան իրաւունքները վրէժխնդրութեամբ խլել նրա ձեռքից: Իմ կարծիքով, անգլիացիների դիրքորոշումը յանգում է այս երկրորդ ենթադրութեանը: Սրա պատճառն էլ, այսինքն՝ անգլիացիներին նման դատարկ համոզման յանգեցնողը մեր լռակեցութիւնն է: Սասունի դէպքը, աւելի շուտ այնտեղի ապստամբութեան ճնշումը, հայերի կողմից այնպէս է ուռճացուել եւ անգլիական մամուլում այն աստիճան դաժանութեամբ է նկարագրուել, որ այդ հրապարակումները չէին կարող ազդեցութիւն չգործել ոչ միայն Անգլիայում, այլ նոյնիսկ այստեղ՝ Օսմանեան կայսրութեան տարբեր հպատակների վրայ:

Լոնտոնում տեղի ունեցած մեծ ժողովներում հայերը արդարացուել են իրենց ապստամբութեան համար, իսկ Օսմանեան կայսրութեան պաշտօնեաները ենթարկուել խիստ պարսաւանքի: Այնպէս, որ հայերի ապստամբութիւնը վերագրուել է վատ կառավարման եւ յատկապէս կրօնական խտրականութեան հետեւանքով կառավարութեան կողմից

հայերի հանդէպ ցուցաբերած դաժանաբարոյ արարքների: Հասարակութեան կարծիքը մեր հանդէպ այնպէս էր բռնկուել, որ անգլիական կառավարութիւնը մտքերը հանդարտեցնելու համար, առանց սպասելու տեղում հետաքննութիւն կատարող յանձնաժողովի զեկոյցներին, իր դաշնակիցներ՝ Ռուսաստանի եւ Ֆրանսիայի հետ նպատակադրուել էր պահանջելու Պերլինի դաշնագրով Օսմանեան կայսրութեան կողմից ստանձնուած բարենորոգումների գործադրումը: Նոյնիսկ իրենց վերագրելով այդ բարենորոգումների կատարման իրաւասութիւնը, ձգտել էին զրոյի հաւասարեցնել Օսմանեան կայսրութեան իրաւունքները:

(Ծանօթագր. թարգմանչի- Ա.Փ., Տուեալ ժամանակ Անգլիայի կողմից հայկական հարցի աշխուժացումը հետապնդում էր որոշակի նպատակ, բխում էր անգլիական բուրժուազիայի շահերից: Անգլիական կառավարութեան ուշադրութեան կենտրոնում էին Հնդկաց Ովկիանոսի եւ Պարսկական Ծոցի հետ կապող ցամաքային եւ ծովային ուղիները):

Մինչդեռ իրականում, որոշ ժամանակից ի վեր հայերի ապստամբութեան դիմելը, պետութեան վատ կառավարման կամ դաժանաբարոյ արարքների հետեւանք չէր, այլ՝ դաշնագրից բխած մի երեւոյթ: Ամէն մի պատերազմի վերջում կնքուած պայմանագրով բերւում է այնպիսի յօդուած, որը կարող էր նոր նուաճումների տենչով պատերազմ հրահրելու առիթը ծնել: Այսպիսով, Ռուսաստանի դիւանագիտական միջոցառումներից մէկն էլ հանդիսացաւ Պերլինի դաշնագրով վերահաստատուած Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, որը թէ՛ Ռումելիի նահանգների եւ թէ՛ Անատոլիայի հայաբնակ նահանգների համար բովանդակում էր մէկական յօդուածներ: Կասկած չկայ, որ հայերի ապստամբութեան ելակէտը հանդիսացաւ Պերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը: Դրանից առաջ նոյն ձեւով անկախութեան հասած Ռումինիայի, Սերպիայի, Չեռնոգորիայի, Յունաստանի եւ Պուլկարիայի ժողովուրդների նման, հայերը եւս ինքնուրոյն մի պետութիւն հիմնելու մտադրութեամբ սկսեցին յիշեալ դաշնագրի կնքումից յետոյ նախապատրաստուել ապստամբութեան:

Իմ կարծիքով ներկայումս հանգուցակէտը ոչ անգլիական դեսպանի եւ ոչ էլ նրա կառավարութեան ձեռքին է: Այս հարցում առաջին հերթին անհրաժեշտ է մտափոխել անգլիական հասարակայնութեան կարծիքը: Եթէ մի կողմից հնարաւոր լինի որոշ ժամանակ յետաձգել դեսպանների յուշագրերի պատասխանները, ապա միւս կողմից անհրաժեշտ է, որ չէզոք մի անձնաւորութիւն հանդէս գայ Լոնտոնի մամուլում, մատնանշելով, որ հայերի ապստամբութիւնը լոկ դաշնագրից բխած մի երեւոյթ է: (Ծանօթագր. թարգմանչի, Ա.Փ., Քեամիլ փաշայի այս նենգ մտայղացումը գործադրուել է

կեանքում: Դրա վառ օրինակը կարող է հանդիսանալ 1993 թ. թուրք պատմաբան Եավուզ Էրջանի հրատարակած «Հայերը դիմակազրկւում են» Զ.Պ. Նորմանի զեկուցումը (գրուած 1896 թ.) որի բովանդակութիւնը լիովին համընկնում է Քեամիլ փաշայի այս դաւադիր ծրագրի հետ: Տուեալ «զեկուցման» մէջ Նորմանը ձգտել է Սասունում եւ այլուր տեղի ունեցած արիւնալի իրադարձութիւնների մեղքը բարդել հայկական կուսակցութիւնների վրայ: Միտումնաւոր խեղաթիւրուել են իրական եղելութիւնները, ֆօղարկուել են 1894-96 թթ. անմեղ հայերի կոտորածները, արդարացնել Ապտուլ Համիտի հայերի նկատմամբ դրսեւորած դաժան քաղաքականութիւնը: Այս մասին մանրամասն տե՛ս մեր գրախօսականը Եավուզ Էրջանի խմբագրած այդ գրքի մասին- «Նոր Օր» եռօրեայ, 8 Յունիս, 1994: Իսկ Օսմանեան պետութիւնը պէտք է բողոքարկելու ուղիներ որոնի Անգլիայի անիրաւացի դիրքի որոշման դէմ:

Անհրաժեշտ է Լոնտոնի մեր դեսպանութեան միջոցով յայտարարել նաեւ, որ կառավարական եւ զինուորական պաշտօնեաների հրամաններից բացի հայ ապստամբներին ճնշելու եւ հնազանդեցնելու գործում օրէնքից դուրս գործողութիւններ ծաւալողները դատի են տրուելու եւ պատժուելու են ըստ օրէնքի: Բացի դա, մինչեւ հիմա հետաքննող յանձնաժողովի բացայայտած փաստերը առանց ուշացնելու անհրաժեշտ է հրապարակել Լոնտոնում, Փարիզում եւ Պետերբուրգում՝ բացայայտելով դէպքերի ուռճացումը: Այնուհետեւ, կարծում եմ, որ բանակցելով դեսպանների հետ կարելի կը լինի սահմանափակել ներկայացուած առաջարկութիւնները:

Այս հարցում կամքն ու հրամանը Նորին պայծառափայլութիւն սուլթանինն է: 17 Մայիս 1311 (1895 թ.) (Տե՛ս Hatirat-i Kamil paşa, s. 180):

Նուաստիս յատուկ գրութիւնը Նորին պայծառափայլութիւն սուլթանին, վերջերս երեք պետութիւնների կողմից հայաբնակ վիլայէթներում բարենորոգումներ անցկացնելու կապակցութեամբ 6 կէտերից բաղկացած առաջարկութեան վերաբերեալ:

Նորին պայծառափայլութիւնը իր մտերիմներից՝ Ֆայիք պէյի միջոցով կարգադրել էր իմանալ նուաստիս կարծիքը երեք պետութիւնների կողմից Օսմանեան կայսրութեան հայաբնակ վիլայէթներում բարենորոգումներ անցկացնելու կապակցութեամբ 6 կէտերից բաղկացած առաջարկութեան մասին, այն իմաստով, որ կառավարութեան կողմից այդ առաջարկը ընդունելու դէպքում կարո՞ղ էր արդեօք կայսրութեան ապահովութեանը վտանգ սպառնալ:

1) Բարենորոգումների գործադրման խնդրում դեսպանատան ներկայացուցիչների իրաւունք էր վերապահուելու անհրաժեշտութեան դէպքում դիմելու բարենորոգման յանձնաժողովին:

2) Ժանդարմերիայում ունենալ քրիստոնեայ սպաներ:

3) *Նահիէի* (գիւղախումբ, ծանօթագր. թարգմանչի Ա.Փ.) *տեսուչները պէտք է նշանակուեն կայսրութեան վիլայէթներին վերաբերող կանոնադրութեան համաձայն. այսինքն՝ տեսուչները պէտք է նշանակուեն տեղի մարդկանցից:*

4) *Դաշտային պահակների նշանակումը:*

5) *Բանտերին վերաբերող կանոնադրութեան գործադրումը:*

6) *Համաձայն կանոնադրութեան նշանակել քրիստոնեայ պաշտօնեաներ:* (Ծանօթագր. թարգմանչի, Ա.Փ.– նկատի ունի 1895 թ. Մայիսի 11-ին Կ. Պոլսում Անգլիայի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի դեսպանների կողմից թուրքական կառավարութեանը ներկայացուած բարենորոգումների ծրագիրը: Այն հիմնականում նախատեսւում էր հայաբնակ 6 վիլայէթներում (Կարին, Բաղեշ, Վան, Սվազ, Խարբերդ, Տիարպէքիր) կենտրոնական իշխանութեան ամրապնդում, հասարակական կեանքի զարգացում, արտադրութեան եւ տնտեսական դրութեան կարգաւորում: Խաղաղ ժամանակ «Համիդիէ» գնդերը զէնք եւ համազգեստ չպէտք է կրէին: Բոլոր քաղաքացիական եւ ոստիկանական պաշտօնեաները պէտք է բաշխուէին մահմետականի եւ քրիստոնեայի միջեւ համաչափ: Նահանգապետերը պէտք է լինէին ընդունակ եւ բարեխիղճ անձնաւորութիւններ եւ նշանակուէին պաշտօնի առանց կրօնի խտրականութեան 5 տարի ժամկէտով: Որոշ ձգձգումներից եւ դիտողութիւններից յետոյ Սուլթանը ի վերջոյ համաձայնութիւն տուեց վաւերացնել այն 1895 թ. Հոկտ. 8-ին: Այնուհանդերձ այդ ծրագիրը եւս չգործադրուեց կեանքում եւ հայկական կոտորածները շարունակուեցին նոր թափով):

Տուեալ առաջարկութիւնների դրդապատճառը Պերլինի պայմանագիրը լինելով հանդերձ, Սասունի դէպքերի համար հայերին արդարացնելու պատրանքով տարուած անգլիացիները, կատարելով սխալ հետեւողութիւն, առաւել բարդացրին Պերլինի դաշնագիրը եւ սկսեցին հանդէս գալ այնպիսի յայտարարութիւններով, որ Օսմանեան կայսրութեան հայաբնակ վայրերի տեղական կարիքների համար անհրաժեշտ բարենոգորումները թելադրուելու են իրենց կողմից, միեւնոյն ժամանակ հսկողութեան տակ առնելով դրանց գործադրումը: Եւ քանի որ բարձրագոյն դուռը ժամանակին չի նախաձեռնել ուղղելու այդ սխալ հետեւութիւնները, ապա ընդհանուր հասարակական կարծիքը համակուել էր այն համոզմունքով, որ հայերի ապստամբութիւնն արդիւնք է յոռի կառավարման: Ներկայումս անհրաժեշտ է մեզմ վերաբերուել առաջ եկած որոշ հարցերին: Բացի այդ, նկատի ունենալով, որ Ռուսաստանը եւ Ֆրանսիան եւս այս խնդրում միացել են Անգլիային, ուստի այս երեք պետութիւնների պահանջներին ընդհանրապէս դիմակայելը կարող է վտանգաւոր հետեւանք ունենալ: Այս խնդրում ամենակարեւոր կէտը Օսմանեան կայսրութեան իրաւունքների պահպանման հարցն է, այնպէս որ դեսպանների հետ վիճելի հարցերը հարթելու ընթացքում անհրաժեշտ է, որ այդ պարագան լինի ուշադրութեան կենտրոնում: Հետեւաբար նկատի ունենալով, որ Պերլինի պայմանագրի 61-րդ յօդուածի համաձայն պետութիւններին իրաւունք է վերապահուել հսկելու հայաբնակ վիլայէթներում Օսմանեան կայսրութեան կողմից ստանձնուած բարենորոգումների ծրագրի գործադրումը, ապա իմ կարծիքով չպէտք է առարկութիւն յարուցել դեսպանների այս առաջարկութեանը: Սակայն տուեալ հսկողութիւնը պէտք է տարածուի ոչ թէ բարենորոգումների յանձնաժողովի վրայ, այլ այն վայրերի վրայ, որ գործադրուելու է տուեալ բարենորոգումը, այսինքն՝ վիլայէթներում իրագործուող բարենորոգումների հսկողութիւնը անհրաժեշտ է թողնել իր հայեցողութեանը: Երկրորդ եւ երրորդ կէտերում նշուած՝ քրիստոնեայ սպաների նշանակումը ժանդարմերիայում, վիլայէթների կանոնադրութեան համաձայն տեսուչների տեղացի լինելու խնդիրը, ինչպէս այլ կանոններում նշուած քրիստոնեայ պաշտօնեաների նշանակման հարցը հաստատուել է դեռեւս մեր նախկին վսեմափայլ սուլթանների կողմից տրուած բարենորոգումների ֆերմաններով, ուր մատնանշուել է ոչ-մահմեդական հպատակների հաւասարութեան հարցը, ինչպէս նաեւ նրանց ընդհանուր օրէնքներից օգտուելու իրաւունքը: (Ծանօթագրութիւն թարգմանչի Ա.Փ.– նկատի ունի 1839 եւ 1856 թուականների հրապարակուած կայսերական հրովարտակները, որոնք խոստանում էին ապահովել Օսմանեան կայսրութեան բոլոր հպատակների կեանքը, պատիւը եւ ունեցուածքը, հարկերի արդարացի գանձումը, վերացնել կապալային սիստեմը, կանոնաւորել զինուորական ծառայութեան ժամկէտը, դատական գործը, ժառանգութեան հարցը, վերացնել կաշառակերութիւնը, չարաշահումները եւ այլն: Սակայն քրիստոնեաների վիճակը բարելաւելու վերաբերեալ սուլթանական կառավարութեան բազմաթիւ խոստումները մնացին թղթի վրայ եւ չգործադրուեցին կեանքում):

Ներկայումս այդ խնդրում գոյութիւն ունեցող կայսերական հրամանների եւ կանոնադրութիւնների գործադրումից խուսափելը առաւել կը գրգռէր օտար պետութիւնների միջամտութիւնը, այնպէս որ այս պարագային առանց առիթ տալու անհրաժեշտ է առաջին հերթին ջանք գործադրել Անգլիայի հասարակական կարծիքը վերափոխելու շուրջ, ինչպէս մատնանշել եմ, անհրաժեշտ է որոշ վերապահումներով հաւանութիւն տալ նրանց առաջարկութիւններին, այսինքն հայաբնակ նահանգների համար անգլիական, ֆրանսիական եւ ռուսական պետութիւնների կողմից առաջարկուած բարենորոգումների ծրագրերի շուրջ բանակցութիւնների մէջ մտնել դեսպանների հետ եւ նրանց առաջարկութիւնները ընդունելով հանդերձ որոշ ուղղումներ մտցնել, որպէսզի

հսկողութիւնը ապահովուի վիլայէթներում նախատեսուած բարենորոգումների վրայ, առանց վտանգելու Պերլինի դաշնագրով հաստատուած Օսմանեան կայսրութեան իրաւունքները: Յետագայում այս առաջարկութեան գործադրման ընթացքում ուշադրութիւն կը դարձուի թէ՛ վերոյիշեալ 6 կէտերի գործադրման եւ թէ՛ քրտերին առանց վկայականի զէնք կրելու հարցերին: Միւս կողմից, մի գուցէ անհրաժեշտ կը լինի մտածել անիրագործելի թուացող այդ բարենորոգումների եւ քրտերին զէնքից զրկելու անհնար գործի մասին: Այսպիսով դեսպանների հետ բանակցելու համար հրատապ թուացող հարցը միմիայն բարենորոգումների գործադրմանը հսկելու խնդիրն է: Իսկ բարենորոգումը աստիճանաբար գործադրելու դէպքում էլ բարձրագոյն դուռը իրագրութեան մասին առաջին հերթին կը տեղեկացնի դեսպաններին: Իմ կարծիքով, եթէ տեղերում իրենց կողմից հսկողութիւն կատարելու պարագան հաւանութեան արժանանայ եւ նշուի բարենորոգումների ծրագրի մէջ, տուեալ հարցը դուրս կը գայ իր ճգնաժամային վիճակից:

Այս հարցում կամքն ու հրամանը նորին պայծառափայլութիւն սուլթանին է:

(Տե՛ս Hatirat-i Kamil paşa, s. 184-187):

★★★★

Այդ ժամանակ Սեր Կարին Հաջի Ալի պէյը, նախկինում վեհափառ սուլթանի ժամանակ ընդունուած սովորութեան համաձայն, հրամաններ հաղորդելու կապակցութեամբ ամէն օր գալիս էր ինձ մօտ: Շարունակելով այդ սովորութիւնը, ամէն գիշեր գաղտնապէս այցելում էր ինձ եւ այցելութեան ընթացքում աշխատում էր համոզել ինձ, որպէսզի ստանձնեմ Մեծ վեզիրի պաշտօնը: Այդ ընթացքում Ստամպուլում առաջ եկած առաջին հայկական ապստամբութիւնը ժողովրդին մատնել էր ահ ու սարսափի, որը խառնաշփոթ վիճակ էր ստեղծել բարձրագոյն դրանը եւ պալատում:

(Մանօթագրութիւն թարգմանչի· Ա.Փ., նկատի ունի 1895 թ· Սեպտեմբերին Հնչակեան Կուսակցութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած Կ· Պոլսի խաղաղ ցոյցը, որի նպատակն էր մայիսեան բարենորոգումների գործադրման խնդրում հրաւիրել եւրոպական տէրութիւնների ուշադրութիւնը: Մօտ երկու հազար հայեր հաւաքւում են Քում Քափուի եկեղեցու բակում՝ պահանջելով իրագործել «Մայիսեան» ծրագիրը: Այնուհետեւ ցուցարարների թափորը շարժւում է դէպի բարձրագոյն դուռ: Դրանից էլ ցոյցը ստացաւ «Պապը Ալիի ցոյց» անունը: Զօրքը եւ մահմետական ամբոխը (հիմնականում սոֆթաները-մահմետական կրօնական դպրոցների սաները) փակում են ցուցարարների ճանապարհը: Այդ օրերին սրի քաշուեց աւելի քան Երկու հազար հայեր):

Զեռք առնուած միջոցառումները չէին հանդարտեցրել մահմետական ժողովրդի մտքերը: Մահմետական ժողովուրդը, հայերի մի նոր շարժման սպասելով, մնացել է աչալուրջ վիճակում: Նոյնիսկ օտարները զգուշացել են այս խնդրի վտանգաւոր հետեւանքներից: Այնպէս որ դեսպանները, ուշադրութիւն բեւեռելով այս խնդրին, տեւական ծանուցագրեր են յղել Օսմանեան պետութեանը:

Երեք օր տեւած այդ խառը վիճակի առթիւ Հաջի Ալի պէյը, կրկին գիշերուայ ընթացքում ընակարանս գալով, ասաց· «Վեհապետը Ձեզ է ուզում եւ կարծում եմ այս անգամ ձեռքից չես պրծնելու»: Ալի պէյի ընկերակցութեամբ մեկնեցի պալատ: Պալատում սուլթանի մտերիմներից Արիֆ պէյը յայտնեց, որ փատիշահը նպատակայարմար է գտել ինձ յանձնելու վեզիրութեան պաշտօնը, նկատի ունենալով, որ ներքին անկարգութիւններին աւելացել են նաեւ արտաքին միջամտութիւնները, իրադրութիւնը դարձել է առաւել վտանգաւոր եւ նոյնիսկ հասել է այնպիսի մի աստիճանի, որ չէր կարելի անտարբերութեամբ անցնել այդ բոլորի կողքով եւ պետութեան իրաւունքները պաշտպանելու համար հարկ էր ձեռք առնել անհրաժեշտ միջոցները:

Հաշուի առնելով այս յոյժ կարեւոր իրավիճակը աւելորդ համարեցի ծառայութիւնից խուսափել: Եւ նոյնիսկ աչքի առաջ ունենալով պալատի բանսարկութիւնները, տուեցի իմ համաձայնութիւնը: Այնուհանդերձ նախքան կայսերական կնիքը ստանձնելս եւ մինչեւ պաշտօնապէս գործի անցնելս, համաձայն սուլթանի հրամանի, այդ գիշերուանից անցայ մեծ վեզիրութեան պաշտօնին եւ կատարեցի անհրաժեշտ կարգադրութիւններ՝ ուղղուած մի շարք վիլայէթներին եւ պաշտօնատներին:

Այդ գիշեր մնացի պալատում: Յաջորդ օրը պաշտօնական համազգեստով ներկայացայ նորին պայծառափայլութիւն սուլթանին, որը իր մաղթանքների հետ զուգընթաց ինձ յանձնեց կայսերական կնիքը: Այնուհետեւ կայսերական հրամանագիրը տանող գլխաւոր քարտուղարի, ինչպէս նաեւ շէյխ ուլիսլամի ընկերակցութեամբ մեկնեցինք բարձրագոյն դուռ, ուր ընդունուած արարողութիւնից յետոյ անցայ պաշտօնի: Առաջին հերթին ճգնաժամի դրդապատճառները չէզոքացնելու համար ձեռնարկուեցին անհրաժեշտ միջոցառումներ: Դրանց հետեւանքը եղաւ այն, որ Կ· Պոլսում վերահաստատուեց անդորրն ու խաղաղութիւնը:

1313 թ· ուրի ուլ-ահիրի 13-ին (Հոկտեմբեր 8, 1895 թ·) մեծ վեզիր պայծառափայլ Սայիտ փաշան նախքան իր պաշտօնաթողութիւնը, երեք դեսպանների հետ բանակցելու ընթացքում համաձայնութեան գալով ստորագրել էր բարենորոգումների ծրագիրը: Վերոյիշեալի պատճառից հեռանալու պատճառով անհրաժեշտութիւն էր զգացուել իմ կողմից եւս ստորագրելու այն: Սակայն ընթերցելու ընթացքում ես նկատել էի, որ այդ յօդուածները հազիւ թէ գործադրուէին կեանքում, քանի որ քրտերի զինաթափումը եւ

քրիստոնեայ պաշտօնեաների նշանակումը ծանր էր նստելու քրտերի վրայ: Այնուհանդերձ, քանի որ տուեալ որոշումը հաստատուել էր կայսերական հրամանով, ես ստիպուած ստորագրել էի այն, միմիայն մատնանշելով, որ տուեալ յօդուածների կիրառումը կապուած է դժուարութիւնների հետ, որ յօդուածները փոփոխելու համար անհրաժեշտ է համաձայնութեան գալ դեսպանների հետ:

Այնուհանդերձ գաւառներում հայերի ապստամբութիւնը գնալով ընդլայնւում էր: Անատոլիայի այն գիւղերում եւ քաղաքներում, ուր հայերը մեծամասնութիւն էին կազմում ապստամբութիւնը առաւել կազմակերպուած բնոյթ էր կրում, եւ այդ հանգամանքը ստիպում էր կառավարութեանը առաւել զբաղուելու ապստամբութիւնը ճնշելու միջոցառումներով:

Սրանով հանդերձ, Եւրոպայում հայերի խռովութեան պատճառը վերագրւում էր կառավարութեան բիրտ քաղաքականութեանը, իսկ Սասունի դէպքը՝ յատկապէս սուլթան Համիտի վարած բռնատիրութեանը: Այնպէս որ վեհապետը Անգլիայի լիբերալ կուսակցութեան կողմից քննադատութեան թիրախ դարձաւ, իսկ կառավարութիւնը թէ ներքին եւ թէ արտաքին քաղաքականութեան ասպարէզում գտնւում էր մեծ դժուարութիւնների մէջ: Մեծ պետութիւնների դեսպանների բարձրագոյն դրան ներկայացրած յայտարարութիւնն ու յուշագիրը իրօք, որ արտացոլում էին տուեալ իրավիճակի յոյժ կարեւոր լինելը: Այս կապակցութեամբ ստորեւ բերւում է փատիշահին ուղղուած յատուկ ծանուցագրի պատճէնը:

(Sb'u Hatirat-i Kamil paşa, s. 186):

ՅԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Գերմանիայի, Ռուսաստանի, Աւստրիայի եւ Իտալիայի դեսպանները, ինչպէս նաեւ Անգլիայի հաւատարմատարը եւ Ֆրանսիայի դեսպանութեան գլխաւոր թարգմանը, միատեղ այցելելով արտաքին գործերի մինիստրութիւն, յայտնել են, որ հայերի աղէտը, փարատուած լինելով հանդերձ, մի շարք վիլայէթներում նկատւում է, որ քրիստոնեաները համակուած են տեւապէս սարսափի տագնապով: Նոյնիսկ հայ բնակչութիւնից զուրկ Մուսուլը, Պաղտատը եւ Սիրիան կլանուած են օրըստօրէ աճող վտանգներով: Այս կապակցութեամբ դեսպանները պահանջեցին, որպէսզի բարձրագոյն դուռը շուտափոյթ ձեռնարկի ազդեցիկ միջոցներ: Հակառակ դէպքում նրանք պարտաւորուել էին տուեալ իրաւունքը տեղեկացնել իրենց կառավարութիւններին:

Այս կապակցութեամբ դեսպաններից մի քանիսը ցանկացել են իմանալ, թէ Օսմանեան կառավարութիւնը ինչպիսի՞ մտադրութիւն ունի այդ խռովութիւններին վերջ տալու գործում, իսկ ոմանք էլ յայտնել են, որ այդ խառնակ իրադրութեան տուրք տուողները՝ լինեն մահմետականներ կամ հայեր

խռովութիւնը կանխելու խնդիրը վերաբերում է Օսմանեան պետութեանը: Դեսպանները հնարաւոր են համարել նաեւ, որ կայսրութեան վիլայէթներում կոտորածները յարատեւելու դէպքում անհրաժեշտութիւն էր զգացուելու խորհրդաժողով գումարելու եւ պահանջ ներկայացնելու իրենց պետութիւններին: Իսկ Ռուսաստանի դեսպանը, նկատի ունենալով Էրզրումում առաջ եկած խռովութիւնը, ակնարկել էր տուեալ վայրում արտակարգ դրութիւն մտցնելու միտքը, աւելացնելով, որ հնարաւոր չէ հայերին զանգուածաբար ձերբակալութեան ենթարկել: Այս բոլոր ակնարկութիւններին արտաքին գործերի մինիստր-փաշան տուել էր համապատասխան բացատրութիւն եւ այնուհետեւ գրաւոր ծանուցագրեր:

Այսօր ինձ այցելած Գերմանիայի դեսպանը, ակնարկելով Անատոլիայում տեղի ունեցող խռովութիւնները, նշեց դրանց վերացնելու անհրաժեշտութիւնը: Նա ասաց նաեւ, որ ինքը չի կասկածում, որ Օսմանեան կայսրութիւնն ունի բաւականին կարողութիւն այդ խռովութիւնները կանխելու համար: Մինչդեռ, նրանից յետոյ ինձ այցելած Աւստրիայի դեսպանը, այդ խռովութիւնների կապակցութեամբ յայտնեց, որ քրիստոնեաների ծանր վիճակը զանազան վիլայէթներում այնպէս չէ, ինչպէս որ այն ցոյց է տրուել վալիների եւ մութասարիֆների կողմից բարձրագոյն դրանը ներկայացուած զեկուցագրում: Նա յայտնեց, որ նախորդ օրը տեղի ունեցած ժողովում հիպատոսարաններից դեսպանատները ուղարկուած զեկուցագրերի ընթերցումից պարզուել է, որ կոտորուել են հազարաւոր հայեր, որ Տիարպէքիրում քրտերի կողմից, առանց խտրականութեան, քրիստոնեաների սպանութիւնները, կողոպուտն ու բռնութիւնները, ինչպէս նաեւ Անատոլիայի այլ վայրերում տեղի ունեցած նոյն խժդժութիւնները տուեալ դարում չտեսնուած բաներ են: Նա աւելացրեց նաեւ, որ միմիայն Զէյթունում կայսերական զօրքերի յարձակման հետեւանքով զոհուած հայերի թիւը հասել է 4500-ի: Եթէ Օսմանեան պետութիւնը չուտափոյթ կերպով այս կոտորածների առաջը չ'առնի, ապա հայերով բնակեցուած նահանգները եւ Սիրիան կ'առնուեն մեծ պետութիւնների զինուորական պաշտպանութեան ներքոյ կամ անհրաժեշտ կը լինի մի խորհրդաժողով գումարել եւ կայացնել համապատասխան որոշում:

Ես իմ պատասխանում նշեցի, որ հայերի շարժման հետեւանքով մահմետականները ձեռք են առնում պաշտպանողական միջոցներ, որ մենք ձգտում ենք բացայայտել յեղափոխականների գաղտնի նպատակը, որ քանի նրանց ապստամբութիւնը ընդարձակուի, աւելացուելու է նաեւ նրանց դէմ ուղարկուող զինուորների քանակը, որպէսզի չուտափոյթ ճնշուի այդ խռովութիւնը: Այնուհանդերձ յիշեալ դեսպանը կրկին առարկելով յայտնեց, որ եթէ այդ վտանգաւոր

իրաւունքեանը վերջ չտրուի, ապա նորին մեծութիւն սուլթանից պահանջուելու է մահապատժի ենթարկել այդ կոտորածները սանձազերծող անձանց: Նա մեկնելուց առաջ ասաց նաեւ, որ այդ գործում բարձրագոյն դուռը միջամտութեան կարիք չունի, որ իրենց պահանջարկը պաշտօնապէս ներկայացուելու է արտաքին գործերի մինիստրութիւն:

Զէյթունից ոչ մի լուր չլինելու պատճառով դեսպանի յայտնած տեղեկութիւնը բաւականին յուզեց ինձ, ուստի մի հեռագրով հարցում կատարեցի Մարաշի մութասարրիֆութեանը: Ստացուած պատասխանից պարզուեց, որ այն զօրքը, որ պէտք է շարժուէր Զէյթուն, դեռեւս չէր էլ դուրս եկել Մարաշից: Ուստի վերոյիշեալ դեսպանի եւ նրա գործընկերների յայտնած սուտ տեղեկութեան ազդեցութեան տակ չմնալու համար ստացուած հեռագրի պատասխանի մի օրինակը ուղարկեցի նրան: Բացի այդ, ընդհանուր եզրակացութիւն կազմելու համար գաւառներից ստացուած այլ լուրերն էլ ուղարկեցի նրանց:

(Մանօթագրութիւն թարգմանչի Ա.Փ.- Քեամիլ փաշան բացայայտօրէն ձգտել է խեղաթիւրել իրական դէպքերը: Սուլթանական կառավարութեան կողմից Էրզրումում, Սասունում, Կ. Պոլսում եւ այլուր կազմակերպուած կոտորածները զգաստացրել էին զէյթունցիներին: Եւ իրոք կառավարութեան ուշադրութիւնից չվրիպեց նաեւ դիւցազնական Զէյթունը: Թուրքական չորրորդ բանակի զինուորները յարձակուելով Զէյթունի հայաբնակ գիւղերի վրայ, կոտորում էին քնակչութեանը, աւերում ու թալանում բնակավայրերը: Իսկ զէյթունցիների ինքնապաշտպանական ջոկատները հերոսական դիմադրութիւն էին ցուցադրում թուրքական կանոնաւոր բանակին: Այդ օրերին սուլթան Ապտուլ Համիտը յայտարարում էր, որ «Քարտէզի վրայից պէտք է ջնջել Զէյթունը»: Ապտուլ Համիտի այս ցանկութիւնը իրականացաւ 1915 թ. Մայիսի 15-ին, արեւմտահայերի կոտորածի ընթացքում, երբ սուլթան Մեհմետ Ռեշատը կայսերական հրամանագրով Զէյթունի կազան վերանուանուեց Սուլէյմանլը: Տե՛ս Dustur, Tertip-i Sani, c.7, Dersaadet, 1336, s. 615 (արաբատառ)· Այս հրամանագիրը հրապարակուած է նաեւ Takvim-i Vekayi պաշտօնական թերթում, տե՛ս Յունիս 8,1915 թ· no. 2196 (արաբատառ):

Այնուհանդերձ դեսպանների ուշադրութիւնը գրաւած այս խնդիրը բաւականին կարեւոր հարց էր եւ անհրաժեշտութիւն էր զգացւում միջոցներ ձեռնարկել եւ հիմնականում ջանք թափել ոտքի ելած քրտերին ապանձակութիւնները կանխելու համար: Այս կապակցութեամբ վաղը տեղի ունեցող մինիստրների խորհրդում այս հարցը քննելուց յետոյ անհրաժեշտ էր ծանուցագիրը յղել նոր պայծառափայլութիւն սուլթանին:

1313 թ· 15 Ջեմազի ուլ-էվվել (Նոյեմբեր 3, 1895 թ·):

(Hatirat-i Kamil paşa, s. 187):

Նորին պայծառափայլութեան այն հարցին, թէ դժուարին կացութիւնից դուրս գալու համար ինչ հնարաւորութիւն կարելի է գտնել, ես բաւականին մտածեցի եւ եկայ այն եզրակացութեան, որ նման վիճակից դուրս գալու միակ միջոցը, կը լինէր այն, որ պետութեան կառավարումը առաջուայ նման յանձնուէր բարձրագոյն դռան:

(Մանօթագրութիւն թարգմանչի, Ա.Փ.- Ապտուլ Համիտի բռնատիրութեան շրջանում երկրի ամբողջ կառավարումը գտնւում էր նրա ձեռքում: Բոլոր հարցերը վճռւում էին «Եըլտըզի» պալատում: Այդ մասին վկայում է պալատի գլխաւոր բարտուղար Թահսին փաշան· «Այն ինչ կատարւում էր ամբողջ երկրի ներսում, դեռեւս, համապատասխան պաշտօնատները հաղորդակից չեղած, հասցւում էր սուլթանի ականջին: Որեւիցէ խնդրի վերաբերեալ, երբ մինիստրութիւնները զեկոյց էին ներկայացնում պալատ, սուլթանը արդէն վաղօրօք գիտէր այդ մասին: Լինում էին նաեւ այնպիսի հարցեր, որոնք դեռեւս բարձրագոյն դուռ չհասած վճռւում էին պալատի մէջ»: (Տե՛ս Tahsin Paşa, Esbak Mabeyn başkatibi, Yildiz Hatrialari, Istanbul, 1931, s. 32):

Դրանով մի կողմից վեհապետը կ'ազատուէր նման գործերի պատասխանատուութիւնից, իսկ միւս կողմից, եթէ ջանք թափուէր երկրում կարգ ու կանոն հաստատելու եւ արդարութիւնը պաշտպանելու խնդրում, ապա կարելի կը լինէր շահել ընդհանուրի համակրանքը: Երկրի ընդհանուր վիճակը կայունացնելու եւ դեսպանների առաջարկութիւնը իրականացնելու անհրաժեշտ միջոցը այս համարելով, սուլթանին յղեցի ստորեւ բերուած յատուկ ծանուցագիրը, առանց հաշուի առնելու, որ այն կարող էր վատ հետեւանք ունենալ ինձ համար:

(Hatirat-i Kamil pasa, s. 189):

ՅԱՏՈՒԿ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Որոշ ժամանակից ի վեր Օսմանեան կայսրութեան դէմ ստեղծուած լարուածութիւնը առիթ էր տուել ընդհանուրի դժգոհութեանը, եւ մարդկանց սրտերում թաքնուած ատելութիւնը սկսել էր ի յայտ գալ այն ժամանակ, երբ մեծ պետութիւնները հանդէս եկան հայերին պաշտպանելու առաջարկութիւններով: Այդ մարդկանց բողոքները հասան նոյնիսկ մինչեւ Եւրոպա: Այս խնդրում մահմետականները եւ քրիստոնեաները նոյն կարծիքին էին: Եթէ մի քանի պետութիւններ գոհ էին նման իրադրութիւնը օգտագործելու համար, ապա միւսները, իրենց քաղաքական շահերից ելնելով, շահագրգռուած էին պահպանելու Օսմանեան կայսրութեան գոյութիւնը:

Այս կապակցութեամբ էլ նրանք մեծ ուշադրութեամբ հետեւում էին, որ Օսմանեան կայսրութիւնում յեղափոխութիւն տեղի չունենայ, որպէսզի չխախտուի պետութիւնների միջեւ գոյութիւն ունեցող հաւասարակշռութիւնը: Ուստի նրանք ձգտում էին վնասազերծել ճգնաժամի պատճառները:

Անցեալ օրը, երբ տեսակցութիւն ունեցայ ֆրանսիական դեսպանի հետ, պարզուեց, որ մինչ այդ նա եղել էր նորին պայծառափայլութիւն սուլթանի մօտ եւ յանձնել էր նրան կարեւոր մի ծանուցագիր: Նա նշեց նաեւ, որ անգլիական դեսպանը եւս համակարծիք է այդ ծանուցագրի բովանդակութեանը: Ընդհանուրի մօտ առաջացած դժգոհութեան պատճառը դեսպանների կողմից պարզաբանուել է այն բացատրութեամբ, որ չկայ բոլոր գործերի համար պատասխանատուութիւն կրող մի կառավարական յանձնաժողով: Իբր թէ գործերի կառավարումը կայսերական պալատ տեղափոխելուց յետոյ, նորին պայծառափայլութիւն սուլթանի զանազան գործերով ծանրաբեռնուածութիւնը առիթ է տուել նրա մի շարք մտերիմներին հանդէս գալ իրենց շահադիտական նպատակներով եւ ցանկացած ուղղութեամբ թեքել վեհապետի ուշադրութիւնը, հաշուի չառնելով, որ դրանով նրանք վնասում են ընդհանուր կարգ ու կանոնին:

Այնպէս որ այս հողի վրայ առաջ եկած բարդութիւնները ժողովուրդը թիւրիմացաբար վերագրում է նորին մեծութիւն Սուլթանին: Այս կապակցութեամբ Պր. Կամբոնը (ծանօթագրութիւն թարգմանչի Ա.Փ.– Կամբոն Պոլ (1843–1924) ֆրանսիացի դիւանագէտ, 1891–1898 թթ. Ֆրանսիայի դեսպանը Կ. Պոլսում) առաջարկում է, որ Օսմանեան կայսրութեան գոյատեւման եւ վսեմափայլ սուլթանի յարատեւութեան համար սուլթանի հովանաւորութեան ներքոյ, մինիստրներից մէկի նախագահութեամբ, նազմուի մինիստրների խորհուրդ եւ այդ խորհրդի վրայ գրուի կայսրութեան ամբողջ գործերը վարելու պարտականութիւնը: Իսկ առանձին հարցերում խորհրդի անյաջողութեան դէպքում, կարելի կը լինի այդ խորհրդի պատգամաւորներին փոխել: Այսպիսով, նախկինում գոյութիւն ունեցող սովորութեան համաձայն, այսինքն մեր փառապանծ սուլթանների ժամանակ գործածութեան մէջ եղած օրէնքներով, եթէ մօտ ժամանակներս շնորհուի համապատասխան կայսերական հրամանագիր եւ երկիրը կառավարելու համար հաւատարիմ պաշտօնեաներից կազմուի մի խորհուրդ, ապա, կարծում ենք, որ ամէն ինչ կ'ընթանայ իր բնական հունով եւ երկրի կառավարման գործում էլ կը թեթեւանայ նորին պայծառափայլութիւն սուլթանի ծանրաբեռնուածութիւնը: Բնական է, որ սուլթանի հրամանագրով կը հաստատուեն նաեւ պետութեան կարիքների համար խորհրդի կողմից ներկայացուած առաջարկութիւնները: Այսպիսով, թէ երկրի ներսում եւ թէ Եւրոպայում կ'ապահովուի հասարակական կարծիքը եւ կը կանխուի օտար պետութիւնների միջամտութիւնը մեր ներքին գործերին:

Այս հարցում կամքն ու հրամանը նորին պայծառափայլութիւն սուլթանին է:

23 թեչրին ուլ–ավվալ 1311 (2 Նոյեմբեր 1894 թ.) (Տե՛ս Hatirat-i Kamil paşa, s. 189):

* * *

Այս ծանուցագրի յանձնումից մէկ օր յետոյ, երբ ես եղայ սուլթան Ապտուլ Համիտի ընդունարանում, նկատեցի, որ նրա երեսին չկար առանձին մի թշնամական արտայայտութիւն: Իսկ երկու օր յետոյ սուլթանն արդէն հրամանագիր էր տուել մինիստրների խորհուրդ կազմելու մասին: Այնուհանդերձ ինձ համար չպարզուեց, թէ այդ հարցում նրա տուած հրամանագիրը շինծու էր, թէ ճշմարիտ: Յետագայում, երբ գործերը հակառակ ընթացք ունեցան, պարզուեց, որ այդ ծանօթագրի պատճառով սուլթանի մտերիմները դաւադրութիւն էին նախապատրաստել իմ պաշտօնանկութեան համար:

(Տե՛ս Hatirat-i Kamil paşa, s. 191):

* * *

Արեւելքի երկրների հետ առնչութիւն ունեցող պետութիւնները, իրենց քաղաքական գործունէութիւնը նախաձեռնում են համաձայն ռուսական ծրագրերի, նկատի ունենալով, որ Արեւելքում քաղաքական հարցերը խթանող ուժը ռուսական դիւանագիտութիւնն է: Արեւելքի երկրներում իւրայատուկ շահեր ունեցող պետութիւնները, եթէ դաշնակցեն եւ համագործակցեն Ռուսաստանի հարեւան երկրներից առաւելապէս ճնշման ենթարկուած Օսմանեան պետութեան հետ, ապա նրանք արգելք կը հանդիսանան ռուսական պետութեան յարատեւող ընդարձակման եւ յատկապէս Միջին Ասիայում նրա ծաւալած գործողութիւններին: Մինչդեռ, այդ պետութիւնների միջեւ այլ երկրամասերում քաղաքական տարաձայնութիւնները, զլխաւորապէս Արեւելքի հարցերում նրանց մեկուսացումն ու անհամաձայնութիւնը հնարաւորութիւն են տալիս ռուսական պետութեանը ուզածին պէս իրականացնելու նուաճողական նկրտումները:

Արեւելքի հարցերում մեծ զգուշութիւն հանդէս բերող անգլիական պետութիւնը, ելնելով իր շահերից, տեւապէս աշխատել է հովանաւորել Օսմանեան կայսրութեանը եւ իր հնդկական գաղութը ռուսական վտանգից ապահովելու համար մշտապէս զգացել է որոշ միջոցառումների գործադրման անհրաժեշտութիւնը: Որպէս ամենակարեւոր գործօն այդ միջոցառման նկատի է ունեցել Օսմանեան պետութեանը: Նախկինում էլ այդ ասպարէզում ամէն կերպ (Անգլիան) ձգտել է կանխել պատերազմը, թոյլ չտալ Օսմանեան կայսրութեան իրաւունքների թուլացման, նոյնիսկ Ռումելիում եւ Անատոլիայում սուլթանութեան սահմանները տարաձայնութեան առիթ չդարձնելու համար ընդունել է ռուսական առաջարկութիւնը՝ որոշ սահմանային փոփոխութիւնների մասին: Իսկ երբ ճակատագրի բերումով առաջ եկած պատերազմում (ծանօթագրութիւն թարգմանչի, Ա.Փ.– նկատի ունի 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմը): Փոքր Ասիայում կարեւոր յենակէտեր Պաթումը, Կարսը եւ Արտահանը անցել են Ռուսաստանի

ձեռքը: Անգլիան, նկատի ունենալով այս եւ յետագայ իրաղարձութիւնները, իր շահերը ապահովելու համար ջանացել է Օսմանեան կայսրութեան հետ մի յատուկ համաձայնագիր կնքել, (ծանօթագրութիւն թարգմանչի, Ա.Փ.-Նկատի ունի Անգլիայի եւ Թուրքիայի միջեւ 1878 թ. Յունիսի 4-ին կնքուած պաշտպանական գաղտնի պայմանագիրը: Ըստ այդ պայմանագրի Անգլիան պարտաւորւում էր զենքով օգնել Թուրքիային՝ ասիական տիրապետութեան սահմանները պաշտպանելու համար: Դրա դիմաց Անգլիան ստանում էր Կիպրոսի նուաճման իրաւունքը). որի հիման վրայ էլ Կիպրոս կղզու կառավարումը անցել է Անգլիական կառավարութեանը: Այս համաձայնագիրը երկու կողմերի համար էլ օգուտ է բերել Անգլիային:

Այնպէս որ Օսմանեան կայսրութեան Ռումելիում առաջացած դժուարութիւնները անտեսելով, տուեալ համաձայնագիրը միմիայն ծառայել է կանխելու ռուսների առաջխաղացումը Անատոլիայում: Եթէ ուշադրութեան առնուեն Անգլիայի հետապնդած քաղաքական նպատակները եւ Օսմանեան կայսրութեան ընդհանուր շահերի դժուարութիւնները տուեալ ասպարէզում, ապա կը բացայայտուի տուեալ վայրի յոյժ կարեւոր լինելու խնդիրը: Այնպէս որ Օսմանեան կայսրութիւնը իր իրաւունքը պաշտպանելու համար պէտք է մեծ ուշադրութիւն դարձնի անգլիական կառավարութեան նախաձեռնութիւններին եւ մշտապէս վերլուծութեան ենթարկի դրանք: Անհրաժեշտ է որ յիշեալ կառավարութիւնը Օսմանեան կայսրութեան հետ կնքի համագոր իրաւունքներով համաձայնագիր՝ ռուսական քաղաքականութեան դէմ: Մինչդեռ Անգլիան Ասիայում երկու կողմերի ընդհանուր շահերը պաշտպանելու համար, փոխանակ զօրավիգ լինելու Օսմանեան կայսրութեան հզօրացման եւ բարգաւաճման, վարում է բոլորովին այլ քաղաքականութիւն:

Նախ եւ առաջ, ընդառաջելով հայերին, ուռճացրել է նրանց չինծու բողոքները՝ ուղղուած Օսմանեան կայսրութեան դէմ, հասցնելով նրանց ինքնավարութեան պահանջի: Երկրորդ, այն ժամանակ, երբ ջանք էր գործադրւում կարգաւորելու մեր եւ Կարադաղի միջեւ առաջ եկած խնդիրը, Անգլիան, այլ պետութիւններին եւս ընդգրկելով, նաւատորմ ուղարկեց Իլկիւնի շրջանը: (Ծանօթագրութիւն թարգմանչի, Ա.Փ.- գտնւում է Զեռնոգորիայի հարաւում, Ադրիական ծովի ափին, Դրինեան ծովախորշում): Երրորդ, Յունաստանի հետ մեր ունեցած սահմանային հարցերում նա բռնել է Յունաստանի կողմը: Չորրորդ, նա աչք է փակել, երբ Օսմանեան կայսրութեան ծայրամասում գտնուող Թունիսի վիլայէթը նուաճել են Ֆրանսացիները: Հինգերորդ, Ֆրանսիական կառավարութեան հետ համաձայնութեան գալով, Եգիպտոսում սուլթանի գերիշխանութեան իրաւունքները կրճատելու անարգ մի որոշմամբ, խղիւութեան վերածելու

առաջարկով յուշագիր է ուղարկել Եգիպտոս:

Անգլիական կառավարութեան գործադրած այս անօրինական արարքների մէջ թաքնուած մտայնութիւնը բացայայտելու դէպքում հնարաւոր կը լինի կռահել նրա յետագայ նկրտումները: Իմ կարծիքով անգլիական կառավարութեան Օսմանեան կայսրութեան հետ համաձայնագիր կնքելու նպատակը այն է, որ, բարձրագոյն դրանը իր ազդեցութեան ոլորտում պահելով, կ'իրականացնի իր ծրագիրը: Ռուսների առաջխաղացումը դէպի Եփրատ խափանելու նրա ջանքերը յաջողութիւն չունեցան, քանի որ յետագայում տեղի ունեցած Օսմանեան նուաճումների հետեւանքով՝ մեծ մասամբ Ռուսաստանի հետ սահմանամերձ Օսմանեան վիլայէթներում բնակչութիւն հաստատած հայերին նա տեսաւ Ռուսաստանով հրապուրուած: Այնպէս որ, եթէ ռուսական զօրքը հասնէր Եփրատ, բնական է, որ յառաջանալով մինչեւ Փորթ-Սայիտ, խափանելու էր դէպի Հնդկաստան գնացող անգլիական նաւերի ընթացքը: Այնուհանդերձ, երբ Անգլիան իմացաւ, որ այդ արգելքը տեղի չի ունենայ, սկսեց ջանք գործադրել հայերին իր կողմը գրաւելու եւ խրախուսելու նրանց բարենորոգման յաւակնութիւնները: Իբր թէ մեծամասնութեամբ հայերով բնակեցուած Տրապիզոնի, Էրզրումի, Վանի եւ Պիթլիսի վիլայէթները մեծ պետութիւնների հովանաւորութեան նեղքոյ մի ինքնավար վարչաձեւի մէջ դնելով Սեւ ծովից մինչեւ Իրանի սահմանը մի պատնէշ են քաշելու Ռուսաստանի առաջ, իսկ եթէ, ռուսերը ճեղքեն անցնեն այս սահմանը, ապա ծրագրուել էր ստեղծել մի այլ խոչընդոտ եւ անհրաժեշտ դիմադրութիւն ցոյց տալու համար ուղարկուելու էին եւրոպական զօրքեր: Այս վերջին խոչընդոտների համար մտադիր էին Սիրիան եւս վերցնել պետութիւնների պաշտպանութեան ներքոյ եւ այն դարձնել մի ինքնավար վիլայէթ:

Հէնց այդ ժամանակ էլ Անգլիան Անատոլիայի բոլոր մասերում նշանակեց արտակարգ հիւպատոսներ եւ կարեկցանք ցուցաբերելով հայերին, սկսեց լսել նրանց բողոքներն ու պահանջները, միեւնոյն ժամանակ այդ բոլորը թելադրել բարձրագոյն դրանը: Այնուհետեւ Սիրիա ժամանեց դեսպանութեան խորհրդական Մալետը, իսկ յետոյ՝ անձամբ դեսպան Լայերդը (ծանօթագրութիւն թարգմանչի, Ա.Փ.-Լայերդ Հենրի Առստեն, Կ. Պոլսում Անգլիայի դեսպան), որոնք եւ ձեռնարկեցին մի շարք միջոցառումներ: Բնական է, որ այս ասպարէզում անգլիական պետութեան նախաձեռնած միջոցառումները վնասաբեր էին եւ մեր պետութեան ներքին գործերին նրանց միջամտութիւնը բարեացակամօրէն չընդունուեց բարձրագոյն դրան կողմից: Ուստի, որոշ ժամանակ անց անգլիական պետութիւնը փոխեց իր գործելակերպը եւ առաջ եկած հարցերը հարթելու նպատակով հրաւիրեց նաեւ այլ պետութիւններին եւ իրագործեց նաւատորմ

ուղարկելու իր մտադրութիւնը: Այսպիսով հայերի տեւական դատարկ բողոքներին ընդառաջ գնալով, ձեռք բերեց միւս պետութիւնների համաձայնութիւնը եւ գործադրեց նաւատորմ ուղարկելու իր ծրագիրը: Իսկ երբ հերթը եկաւ Անատոլիայի բարենորոգման հարցին, ամէն կերպ ձգտեց իրագործել իր ծրագիրը: (Ծանօթագրութիւն թարգմանչի, Ա.Փ.- Արեւելեան հարցի նկատմամբ անգլիական քաղաքականութեան վերաբերեալ այս խորհրդածութիւնները Քեամիլ փաշան գրի է առել 1883 թ.: (Տե՛ս Hilmi Kamil Bayur, Sadrazam Kamil paşa, Siyasi hayati, Ankara, 1954, s. 18):

* * *

...Եթէ Անգլիան եւս ջանքեր գործադրի, որպէսզի Ռուսաստանի հարաւային սահմաններում ամուր մի պատնէշ կանգնեցնելու նկատառումով մեծ պետութիւնների հովանաւորութեան եւ պաշտպանութեան ներքոյ Հայաստանում ստեղծուի մի ինքնավար պետութիւն, ապա պէտք է նկատի ունենայ այն պարագան, թէ ինչպէս ռուսական զօրքը, անցեալ պատերազմի (ծանօթագրութիւն թարգմանչի, Ա.Փ.- նկատի ունի 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը) ժամանակ, ճեղքեց անցաւ նոյն ինքնավար վիճակում գտնուող Վալախիան եւ Մոլտավիան, եւ ինչպէս ռումինական զօրքին եւս ներքաշեց պատերազմի մէջ:

Անգլիայի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ կնքուած պայմանագրում Անատոլիային վերաբերող հարցի մասին, բնականաբար, իր ժամանակին իշխան Գորչակովը (ծանօթագր. թարգմանչի, Ա.Փ.- Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր 1856-79 թուականներին) մտածել էր եւ Փոքր Ասիայի հանդէպ Ռուսաստանի ծրագրի կապակցութեամբ աւելացրել մի յօդուած: (Ծանօթագրութիւն թարգմանչի, Ա.Փ.- նկատի ունի 1878 թ. Մարտի 3-ի Սան-Ստեֆանոյի հաշտութեան պայմանագիրը):

Անատոլիայում գտնուող հայերի եւ քրտերի սանձը Ռուսաստանը նախապէս արդէն վերցրել էր իր ձեռքը, այնպէս որ Անգլիան ներկայումս որքան էլ որ ձգտի հայերին կարեկցել, օգուտ չունի:

Բոլորի համար պարզ է, որ Օսմանեան կայսրութիւնը թուլանալու դէպքում Անգլիան իր ուզածի պէս հայերին հրահրելու է Ռուսաստանի դէմ: Հետեւաբար, նուաստիս կարծիքով, Անգլիայի համար անհրաժեշտ խնդիրը այն է, որ նա, որպէս ամուր մի դաշնակից եւ օգնական, աւելացնի իր ազդեցութիւնը Օսմանեան կայսրութեան վրայ եւ ամրացնի մեր պետութիւնը Անատոլիայում: Այնպէս, որ տուեալ տարածքում մեր պետութեան ազդեցութեան թուլացումը թէ Թուրքիայի եւ թէ Անգլիայի շահերը վնասելուց բացի մի այլ հետեւանք չի կարող ունենալ:

Ուստի Անգլիան չպէտք է, որ իր ջանքերը խնայի Օսմանեան կայսրութեանը բարեկամաբար օժանդակելու եւ նրա փառքն ու անկախութիւնը պաշտպանելու գործում: Միեւնոյն ժամանակ անհրաժեշտ է անկեղծ եւ մտերմաբար իր լուման ներդնի Օսմանեան կայսրութեան վարչակարգում պաշտօնեաների ուռճացուած չարաշահումների դրդապատճառները բացայայտելու, շուտափոյթ կերպով դրանք վերացնելու, ինչպէս նաեւ երկրում բարենորոգում անցկացնելու համար գտնի հնարաւոր միջոցներ եւ աշխատի, որպէսզի դրանք գործադրուեն ատիճանաբար:

(Այս հատուածը բերուած է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում եւ նախօրեակին Զէյթունի դէպքերի առիթով Քեամիլ փաշայի ներկայացրած զեկուցագրից (տե՛ս H.K. Bayur, Sadrazam Kamil paşa, Siyasi hayati, Ankara, 1954, s. 17):

ՆՈՐ ՕՐ Նոյեմբեր, Հոկտեմբեր 1994,
Թիւ 75, 76, 77, 78, 79:

ՀԱՅՐԱՊԱՏ ՈՒՍԱՀԱՐԱԿ

Մի կամ մի քանի փոքր ոսկիներ:

Բոլոր ոսկիները, որոնք գտնվում են Հայրապետանոցի գանձարանում, մեծ մասամբ հնագույն ժամանակներից մնացած հնություններ են, որոնք ունեն մի ինչպես ոսկեղեն, այնպես էլ արծաթեղեն, ինչպես նաև պղնձեղեն հարդարանքներ, ինչպես նաև գանձեր, որոնք գտնվել են Ալաշկերտի դաշտում, Ալաշկերտ գյուղի մոտ, Ալաշկերտ գետի ափերին, Ալաշկերտ գետի ստորին հոսանքում, Ալաշկերտ գետի միջին հոսանքում, Ալաշկերտ գետի վերին հոսանքում, Ալաշկերտ գետի գետաբերանում, Ալաշկերտ գետի գետաբերանի մոտ, Ալաշկերտ գետի գետաբերանի մոտ գտնվող գյուղերում, Ալաշկերտ գետի գետաբերանի մոտ գտնվող գյուղերի մոտ գտնվող դաշտերում, Ալաշկերտ գետի գետաբերանի մոտ գտնվող գյուղերի մոտ գտնվող դաշտերի մոտ գտնվող գյուղերում:

1878 թ. ՊԵՏԵՐԻՆԻ ԿԵՇՏՈՒՂԻԿԻ ՄԱՍԻՆ

Գործ՝ Ավետիս Փափազյանի

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

ՕՍՄԱՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ՋԵԼԱԼ ՆՈՒՐԻԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Օսմանիզմի (Osmanlilik) *գաղափարախօսութիւնը ծնունդ է առել դեռեւս 19-րդ դարի կէսերից եւ լայն կիրառում է ունեցել Օսմանեան կայսրութեան պետական մարմինների քաղաքական գործունէութեան ասպարէզում, հիմականում հետապնդելով Թուրքիայի ոչ-մահմետական ժողովուրդներին մէկ «Օսմանեան» ազգութեան մէջ միաձուլելու ծրագիրը: Օսմանիզմի գաղափարախօսութեան առաջին ջատագովողներն էին տուեալ ժամանակաշրջանի յայտնի թուրք պետական գործիչներ Ալի եւ Ֆուատ փաշաները, որոնք օսմանիզմի գաղափարախօսութեան իրականացումով ձգտում էին փարատել կայսրութիւնում բուռն կերպով աճող ազգային ազատագրական շարժման վտանգը: Այնուհանդերձ, ինչպէս իրաւամբ եզրակացնում է թուրքագէտ պատմաբան Ռուբէն Սաֆրաստեանը իր «Օսմանիզմի դոկտրինան Օսմանեան կայսրութեան քաղաքական կեանքում» շահեկան աշխատասիրութեան մէջ, այդ շարժումը դարձաւ լոկ մի պատրանք, քանի որ այն իր մէջ բովանդակում էր իրարամերժ տեսակէտներ: Այսինքն՝ մի կողմից պահանջւում էր պահպանել իսլամի տիրապետող դրոյթներն ու թուրքական էթնոսը, իսկ միւս կողմից՝ «հաւասարութիւն» դնել մահմետականների եւ քրիստոնեաների միջեւ:*[1]

Յետագայում 60-70-ական թուականներին «Նոր Օսմանները» պնդում էին, որ բաւական է կազմալուծել բռնապետական ռեժիմը, եւ կայսրութեան ժողովուրդները կը միանան «ընդհանուր հայրենիքի» սահմաններում եւ կ'ապրեն համերաշխ, կը վերանայ ազգային եւ կրօնական պայքարը նրանց միջեւ:

Իրականում «Նոր օսմանները» բացայայտօրէն ձգտում էին պահպանել թուրքերի տիրապետող դիրքը ազգային բարեփոխուած պետութեան մէջ: Այդ թուում յոյների, հայերի, սլաւոնական ժողովուրդների, արաբների եւ քրտերի, ինչպէս նաեւ այլ ժողովուրդների նկատմամբ:

Ապտուլ Համիտ Երկրորդի բռնապետութեան շրջանում օսմանիզմի գաղափարախօսութիւնը դուրս մղուեց կայսրութեան քաղաքական գործունէութեան ասպարէզից, քանի որ արիւնոտ սուլթանը ինչպէս յայտնի է իր նախընտրած մեթոդով, այսինքն՝ դաժան հալածանքների եւ կոտորածների միջոցով ձգտեց լուծել ազգային հարցը կայսրութիւնում:

Օսմանիզմի գաղափարախօսութիւնը նոր երանգներով գործունէութեան բուռն թափ ստացաւ 1908 թ. երիտթուրքերի յեղափոխութիւնից յետոյ: Սակայն այս անգամ եւս նկատուեց օսմանիզմի յետադիմական գաղափարախօսութեան սնանկութիւնը:

Երիտթուրքական գաղափարախօսները ամէն կերպ փորձում էին միաձուլել Օսմանեան Կայսրութեան ոչ-մահմետական ժողովուրդներին մէկ «Օսմանեան ազգութեան» մէջ, որը իրականում զրկում էր ոչ թուրք ժողովուրդներին ազգային ինքնորոշման արդարացի իրաւունքից: Երիտթուրքերի ղեկավարները հետեւողականօրէն ջատագովում էին «օսմանիզմի» գաղափարախօսութիւնը, այն է, որ Օսմանեան Կայսրութիւնում բացի Օսմանեան ազգից ուրիշ ազգութիւններ չկան, կայսրութիւնում մէկ ազգ կայ՝ օսմանցի ազգը:

Իրականում կայսրութիւնում «իսկական» քաղաքացի կարող էին ճանաչուել թուրքերը, եւ նրանք, ովքեր հաւատափոխ կը լինէին, կը մոռանային սեփական լեզուն եւ կը ձուլուէին թուրքերի մէջ: Դեռեւս 1910 թ. Սալոնիկում կայացած «Միութիւն եւ առաջադիմութիւն» (Իթթիհատ վէ Թերաքքի) կուսակցութեան տեղական կոմիտէի գաղտնի նիստում Թալեաթը յայտարարել է. «Դուք գիտէք, որ սահմանադրութեամբ մահմետականների եւ քրիստոնեաների հաւասարութիւն է հաստատուել, բայց դուք բոլորդ միասին եւ ամէն մէկդ առանձին գիտէք եւ զգում էք նաեւ, որ դա անիրականալի գաղափար է, Շարիաթը, մեր անցեալի ամբողջ պատմութիւնը, հարիւր հազարաւոր մահմետականների զգացմունքները եւ նոյնիսկ իրենց՝ քրիստոնեաների զգացումը, որոնք յամառօրէն դիմադրում են իրենց օսմանականացման ամէն մի փորձի դէմ, անյաղթահարելի պատնէշ են իսկական հաւասարութեան համար...: Ուստի հաւասարութեան մասին խօսք անգամ չի կարող լինել մինչեւ այն ժամանակ, քանի դեռ մենք յաջողութեամբ չենք պսակել կայսրութեան օսմանականացման մեր նպատակը»:[2]

Իսկ աւելի ուշ 1911 թ. Հոկտեմբերին կրկին Սալոնիկում տեղի ունեցած իթթիհատականների համագումարը կայացրեց հետեւեալ որոշումը.

«Վաղ թէ ուշ պէտք է իրագործուի Թուրքիայի բոլոր հպատակների օսմանականացումը, բայց մի բան պարզ է, որ դա երբեք չի կատարուի համոզելով, այլ պէտք է իրականացուի զէնքի ուժով»:[3]

Իսկ 1911-1913 թթ. պալքանեան պատերազմների եւ յատկապէս Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին փանթուրքիզմը

եւ փանիսլամիզմը դարձան երիտթուրքերի ներքին եւ արտաքին քաղաքականութեան գաղափարական առանցքը: Տուեալ ժամանակ այս գաղափարախօսութիւնների առաւել աչքի ընկնող ներկայացուցիչներն էին Զիյա Կէօքալփը, Եուսուֆ Ակչուրան, Ֆուաղ Քէօփրիւլիւն, Իսմայիլ պէյ Գասպրինսկին, Զելալ Նուրին, որոնք իրենց առանձին մենագրութիւններում եւ մամուլում հրապարակած յօդուածներում փրոպականդում էին Թուրքերի «գերազանցութիւնը» կայսրութիւնում բնակուող այլ ազգութիւնների նկատմամբ, հետեւաբար եւ պահանջում էին վերջիններիս միաձուլումը մէկ ազգութեան մէջ:

Փանթուրքիզմը միաժամանակ Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ ժողովուրդներին բռնի ուծացնելու խնդրում երիտթուրքերի ազգայնամոլ քաղաքականութեան մի նոր ուղղութիւն էր: Այսպիսով երիտթուրքերը ամբողջապէս որդեգրեցին Ապտուլ Համիտի արիւնարբու քաղաքականութիւնը՝ իրենց դաժանութեամբ գերազանցելով նրան: Կայսրութիւնում ազգային հարցը լուծելու համար նրանք ընտրեցին ազգերին ոչնչացնելու ճանապարհը:

Ի միջի այլոց նշենք, որ մեր օրերում օսմանիզմի գաղափարախօսութիւնը համարեա թէ նոյնութեամբ իր արտայայտութիւնն է գտնում նաեւ արդի թուրքական պետական գործիչների ելոյթներում: Այսպէս, վերջերս Թուրքիայի Հանրապետութեան նախագահ՝ Սուլէյման Տեմիրէլը ուշագրաւ ակնարկութիւն է արել օսմանիզմի մի գաղափարախօսութեան մասին քրտական հարցի հետ կապուած, որը արձագանգուել է Թուրքական «Սապահ» թերթի Մարտի 21, 1994 համարում հրատարակուած լրագրող Ֆաթիհ Չեքիրկէի յօդուածում: Սուլէյման Տեմիրէլը մատնանշել է, որ «Թուրքիայում տարբեր ազգային եւ կրօնական պատկանելութիւն ունեցող մարդիկ պէտք է ապրեն սահմանադրական քաղաքացիութեան դրօշի ներքոյ: Այդպէս էին անում օսմանցիները»:

Ս. Տեմիրէլի քրտական հարցին վերաբերեալ արտայայտուած խորհրդածութիւններին միանգամայն ճիշդ մեկնաբանութիւններ է տուել մեր գործընկեր թուրքագէտ-պատմաբան Մուրատ Բոյոլեանը, «Տեմիրէլը պատմական էքսկուրսներ է անում» իր շահեկան յօդուածում: Վերլուծելով վերոյիշեալ յօդուածը Մ. Բոյոլեանը յանգել է հետեւեալ եզրակացութեան.

«Սա մօտ մէկ հարիւրամեակ տեւած եւ երկրի բոլոր բնակիչներին մէկ ազգի մէջ ձուլելու քաղաքականութեան իրաւական արտայայտութիւնն է: ...Ս. Տեմիրէլը որեւէ նոր բան չի ասում, այլ պարզապէս վերադառնում է մէկ հարիւրամեակ ետ ու փորձում վերակենդանացնել տիրահռչակ փանօսմանիզմի գաղափարը: Նոյնն է նաեւ նպատակը, այդ ժամանակ դրուած էր ամէն գնով Օսմանեան Կայսրութեան, այսօր էլ Թուրքիայի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան պահպանման հարցը»:[4]

Ինչպէս վերը նշեցինք «Օսմանիզմի», ինչպէս նաեւ փանթուրքիզմի եւ փանիսլամիզմի աչքի ընկնող գաղափարախօսներից էր նաեւ երիտթուրքական յայտնի գործիչ Զելալ Նուրին (1877-1939): Նա եղել է պատմաբան, հրապարակախօս եւ իրաւաբան: 1908 թ. ընտրուել է մէջլիսի (մինիստրների խորհուրդ) անդամ, որպէս Կալիբոլիի պատգամաւոր: Իր ժամանակին բազմաթիւ հրապարակային յօդուածներ է հրատարակել «Le Courier D'orient» (Արեւելեան սուրհանդակ), "Le Jeune Turc" (Երիտասարդ Թուրք) ֆրանսերէն թերթերում, ինչպէս նաեւ "Ikdam" (Առաջադիմութիւն), "Ati" (Ապագայ), "Ileri" (Առաջ) եւ այլ զանազան թուրքական թերթերում եւ հանդէսներում Պատմական, գրական, քաղաքական, իրաւաբանական բովանդակութեամբ հրատարակել է նաեւ մի շարք մենագրութիւններ, որոնցից առաւել ուշադրութեան արժանի են 1912-1913 թթ. լոյս տեսած նրա "Ittihat-i Islam" (Իսլամի Միութիւն), եւ "Tarih-i Istikbal" (Պատմութիւն ապագայի մասին) գրքերը: (Արաբատառ օսմաներէնով):

Զելալ Նուրին բացայայտօրէն Թուրքիայի ոչ-մահմետական ժողովուրդներից պահանջում էր հաշտուել իրենց իրաւազուրկ վիճակի հետ եւ հրաժարուել ազգային ձգտումներից: Նա ամէն կերպ ձգտում էր համոզել, որ հայերը, արաբները, քրտերը, չպէտք է պայքարեն իրենց ազատագրութեան համար, քանի որ Թուրքիայում տիրապետող կարգերը, որոնք հիմնուած են մահմետական կրօնի վրայ, ամենաառաջաւորն ու իդէալականն են: Փաստօրէն, Թուրքիայում իսկական քաղաքացի էին հռչակուելու միայն Թուրքերը, կամ նրանք, ովքեր կը Թրքանային, կը մոռանային սեփական լեզուն եւ կը ձուլուէին Թուրքերի հետ: Զելալ Նուրին ամէն կերպ գովաբանում էր իսլամի դոգմաները, մատնանշելով որ այն միաժամանակ բարոյական օրէնսգիրք ու կառավարման ձեւ է:

Զելալ Նուրին եւ երիտթուրքերի վերոյիշեալ գաղափարախօսները ամէն կերպ փորձում էին փանիսլամիզմը օգտագործել Օսմանեան կայսրութեան մահմետական ժողովուրդների վրայ իրենց իշխանութիւնը ամրապնդելու համար: «Այսօր մահմետականութիւնը չափազանց կարեւոր ուժ է,-գրում էր Զելալ Նուրին,- եւ յետագայում էլ նա ընդունակ է շատ կարեւոր դեր խաղալու»:

Փանիսլամիզմի գաղափարախօսութիւնը եւս զուրկ էր պատմականօրէն զարգանալու հեռանկարից: Թուրքիայի երիտասարդ պուրժուազիան, առաջ քաշելով այն, ձգտում էր ինչ-որ ձեւով պահպանել Օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը:

Ստորեւ օսմաներէն բնագրից առաջին անգամ թարգմանաբար հայ ընթերցողէն ենք ներկայացնում Զելալ Նուրիի օսմանիզմի գաղափարախօսութեան հետ առնչուող երկու աշխատանք. 1. «Օսմանիզմի ապագան» գրքից «Հայկական եւ

քրտական հարցերը» գլուխը: 2. Մի բաց նամակ ուղղուած «Ազատամարտ» թերթին, որոնցում լիովին բացայայտուում են նրա հայեացքներն ու նկատառումները այդ գաղափարախօսութեան շուրջ: Ընթերցողը պարզ կը նկատի թէ յանձինս Ջելալ Նուրիի, երիտթուրքերը ինչպիսի երկդիմի եւ ազգայնամոլական ծրագրեր են ունեցել հայ եւ քիւրտ ժողովուրդների հանդէպ: Չնայած որ առանձին տեղերում Ջելալ Նուրին գովաբանում է հայերի վեհանձնութիւնն ու աշխատասիրութիւնը, ինչպէս նաեւ մարդկային բարձր արժանիքները, սակայն միւս կողմից հանդէս են գալիս նրա մոլի ազգայնական տեսակէտները հայերին օսմանացնելու եւ թուրքերի հետ ձուլելու խնդրում: Թարգմանութեանը կցուած են անհրաժեշտ ծանօթագրութիւններ:

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՔՐՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Ռումելիի[1] կորստից յետոյ օսմանցիներից որպէս հիմնական տարր մնացին թուրքերը եւ արաբները: Յոյներին ընդհանրապէս հաշուի չեմ առնում, քանի որ նախորդ գլուխներում ես արդէն բացատրութիւն էի տուել նրանց ոչ-օսմանցի լինելու մասին: Այստեղ ես խօսելու եմ միմիայն այն տարրերի մասին, որոնք իրենց զգացումներով կարող են օսմանցի համարուել: Օսմանեան կայսրութիւնում հայերից եւ քրտերից բացի կան նաեւ մի շարք այլ փոքր ազգութիւններ, որոնք ոչ մի տեղ մեծամասնութիւն չեն կազմում եւ ընդհանրապէս իրենց ազգի նկատմամբ էլ առանձին յոյսեր չեն կապում: Ուստի ես նրանց մասին առանձին ակնարկութիւն չեմ անելու: Միայն որոշ հանգամանքների բերումով գրքիս 3-րդ հատորում խօսելու եմ հրեաների մասին:

Իմ հրատարակած յօդուածներում եւ գրքիս զանազան գլուխներում նշել էի, որ օսմանիզմը մի ընդհանուր ազգային հասարակութիւն է, բոլոր տարրերի հաւասար իրաւական հիմունքներով: Անկեղծ ասած օսմանիզմը ընդունողները օգտուում են ամէն տեսակի իրաւունքներից: Իսկ նրանք, որոնք չեն ընդունում, կարող են միմիայն երկրի ներսում մարդկային եւ քաղաքացիական իրաւունքներից օգտուել, այլ ոչ քաղաքական իրաւունքներից:

Օսմանեան հայրենիքի ամենակարեւոր տարրը հանդիսացող թուրքերի եւ արաբների մասին ես արդէն խօսեցի վերեւում: Փոքր տարրերը բացառուում են: Այստեղ խօսելու եմ միայն հայերի եւ քրտերի մասին: Եթէ յոյների նման սրանք ես օսմանիզմի հանդէպ ճշմարիտ զգացում չունենային, ապա աւելորդ կը լինէր նրանց մասին ես խօսելը: Ես մի քիչ վշտացած եմ հայերից: Ինչպէս որ եղբայրը վրդովւում է եղբօր հանդէպ, այնպէս էլ ես հոգեպէս վշտացել եմ նրանցից:

Անցած տխուր պատերազմի[2] ընթացքում ես հայերից առ աւելի

օսմանիզմ էի սպասում: Հայ հեղինակները, ինձ համար արդէն սովորական դարձած ձեւով ասելու են, որ «ահա մենք էլ մասնակցեցինք պատերազմին. մենք էլ զոհ տուինք, էլ ի՞նչ էք ուզում»: Ո՛չ, այդ այդպէս չէ: Թող օրհնեալ լինի հայ զոհերի հոգիները եւ անթառամ մնայ նրանց յիշատակը: Այսուհանդերձ պէտք է ասեմ, որ բոլոր այդ պատերազմների եւ յատկապէս պարտութիւնների ընթացքում հայերի հոգին տակնուվրայ եղաւ: Հայերին ջարդող եւ հայերին կեանք տուող թուրքերը, որպէս իշխող տարր մէջտեղից չքացան: Պուլկարները թուրքերից աւելի նախամեծար դասուեցին: Այդ պարտութիւնները իբր տեղի են ունենում Աստծոյ հրամանով, որպէսզի զգաստացուցէին ջարդարար թուրքերը: «Այդ պարտութիւնները նրանց համար պատիժ էին: Նախախնամութիւնը հայերի արժանի վրէժը ն է առնում: Հայ ժողովուրդը չունչ կը քաշի այն բարեբաստիկ րոպէին, երբ խաչը կրկին կը դրուի Այա Սոֆիա եկեղեցու վրայ»: Ահա այս զգացումները տիրեցին հայ մտաւորականներին: Իսկ Ռոդոսի դէպքին[3] ժամանակ մի խումբ պարզամիտ հայեր իրենց անխոհեմութեամբ նոյնիսկ բացայայտօրէն արտայայտեցին իրենց այս զգացումները: Ես կը ցանկանայի, որ հայերը լինէին աւելի հաստատամիտ, առաւել արդարադատ: Ես միշտ էլ հանդէս եմ եկել հայերի պաշտպանութեան հրատարակութիւններով, որտեղ առաջարկել եմ, որ նրանք մոռանան նախկին միապետի[4] օրօք տեղի ունեցած բռնութիւնները, իմանան իրենց շահերը եւ ընդհանրապէս կը ցանկանայի, որ վերջ տրուէին անյայտ պատճառներով հայերի նկատմամբ թուրքերի տածած թշնամանքին: Ես կարծում եմ, որ իշխողը թուրք կը լինի թէ ոչ, հայերի համար դա միեւնոյն է: Այսուհանդերձ հայերը պէտք է ըմբռնեն, որ իրենց համար թուրքերից առաւել մեղմ իշխող չի կարող գոյութիւն ունենալ:

Այսօր, Աստուած մի արասցէ, եթէ արեւելեան վիլայէթները Ռուսաստանի կողմից նուաճուեն եւ այդ վայրերը ուղարկուեն (ռուսա) հպատակները նորից մահմետական տարրը փոքրամասնութիւն չի կարող դառնալ:[5] Հետեւաբար հայերը ստիպուած են մահմետականների հետ խառնուելու (միաձուլուելու -Ա.Փ.): Հայերը, թուրքերի եւ քրտերի հետ ապրելու են յաւիտենապէս եւ այդ կապակցութեամբ էլ կազմելու են համաձայնութեան մի ծրագիր: Անհրաժեշտ է վերջ տալ ատելութեան զգացումներին եւ անկեղծ ու մտերմական կապերի մէջ մտնել: Եւ դուք կը տեսնէք, որ այդ ժամանակ ամենակարեւոր հարցերը լուծուելու են հեշտութեամբ:

Ես իմ հայ եղբայրների մօտ երկու միտք, երկու զգացում եմ տեսնում: Մէկը՝ բացայայտ եւ պաշտօնական, իսկ միւսը՝ գաղտնի եւ ոչ պաշտօնական: Այս երկրորդից պէտք է խուսափեն: Մենք պէտք է, որ կատարելապէս մոռանանք հին հաշիւները, քանի որ դրանցից ոչ մի արդիւնքի չենք կարող հասնել:

Դրանք այլեւս անցել են պատմութեան գիրկը: Այդ կոտորածների պատճառները[6] եթէ նոյնիսկ բացայայտենք էլ, անցեալը չենք կարող վերականգնել: Հայերի խելքը պէտք է, որ յաղթահարի իրենց զգացումներին:

Շահրիկեան[7] էֆէնտին իմ «Օսմանեան կայսրութեան անկումը» գրքի մասին Ատոմ կեղծանունով մի ընդարձակ գրախօսական է գրել, որտեղ թէեւ գովաբանել է իմ անձը, սակայն սուր քննադատութեան է ենթարկել իմ մտքերը: Ես կարդացի թուրքերէնի թարգմանուած այդ գրախօսականը:[8] Բարեբախտաբար, մի քիչ առաջ վերեւում արտայայտուած իմ մտքերը նոյնութեամբ գտայ այդ գրախօսականի մէջ: Միայն թէ, այն հակասութիւնները, որոնք նա բացայայտել է իմ աշխատութեան մէջ՝ հայութեան եւ քրիստոնեաների պաշտպանութեան խնդրում, իհարկէ ծիծաղելի է: Գրախօսականում տեղ գտած քննադատութիւնը եթէ գրուած լինէր ոչ թէ այդ մտքերի, այլ զուտ պատմական հողի վրայ, ի հարկէ ես ցոյց կը տայի դրա երեւակայական լինելը: Ես անհրաժեշտութիւն չեմ գտնում խօսելու այդ մասին: Թող նա պնդի, որ ինքը սոցիալիստ է: Պատմական հարցերում նրա ասածներից ոչ մէկը չի կարող վէճի առարկայ դառնալ: Ինձ մօտ հայերին պաշտպանելը անհեթեթութիւն է, քանի որ ես ինքս արդէն պաշտպանում եմ նրանց. եւ Ատոմ էֆէնտին պէտք է լաւ իմանայ, որ մէկ Ջելալ Նուրիի, կամ էլ մէկ Ալի Վէլիի[9] հովանաւորութիւնը առաւել արդիւնաւէտ կը լինի, քան որեւէ Յակոբի կամ Գրիգորի ներդրած ջանքերը: Հայերը պէտք է հեռու կանգնեն վերոյիշեալ մտքից եւ զգացումից. եւ այդ ժամանակ ես նրանց աւելի բարձր կը դասեմ: Թող վստահ լինեն, որ ես այս տողերը գրում եմ հաստատուն մտքերով, այլ ոչ թէ երկերեսանիութեամբ: Նրանք խորապէս սխալուած կը լինեն, եթէ կասկածեն իմ մտքերի վրայ եւ իմ խաղացած դերին տան այլ իմաստ: Ինչպէս որ յոյների հանդէպ բացայայտօրէն գրել եմ իմ խեթ մտքերը, այնպէս էլ կարող էի նոյնը անել հայերի նկատմամբ:

Հայերը կարող են իսկական, անկեղծ եւ էապէս օսմանցի դառնալ: Նրանց շահաէտութիւնը օսմանցիութեան մէջ է: Այսուհանդերձ պէտք է ասել, որ այն ժամանակ, երբ մեր պետութիւնը պատերազմական դրութեան մէջ էր գտնուում եւ զլուխ քորելու ժամանակ չունէր, հայերի բարձրացրած խռովութիւնը Արեւելքում չէր կարելի օսմանցիութեան հետ հաշտեցնել: Եթէ հայերը ճշմարիտ պահանջ էլ ունենային, ապա այդպիսի վտանգաւոր րոպէներին պէտք է լուռ մնային: Բացի դա, հայերի բորբոքած այդ շարժումներից ես ոչ մի օգուտ չեմ տեսնում:[10] Ի՞նչ կարող է բխել դրանցից: Այդ սխալ ընթացքով ի՞նչ կարելի է շահել:

Հայերը չափազանց աշխատասէր եւ իրենց աշխատանքում համարձակ, նախաձեռնող, շատ լաւ ժողովուրդ են եւ Օսմանեան ժողովրդի համար շատ անհրաժեշտ մի տարր: Տնտեսութեան ասպարէզում թուրքերի յետամնացութիւնը կարելի է զարգացնել հայերի ունեցած առաջադիմութեամբ: Այնպէս որ, այս երկու տարրերը կարող են լրացնել իրար թերի կողմերը: Հետեւաբար օսմանցիութեան եւ թրքութեան տեսակէտից հայերի զարգացումը չափազանց անհրաժեշտութիւն է: Նման գաղափարները արտայայտելու ժամանակ պէտք է մեր մտքերը յաղթահարեն մեր զգացումներին: Միւս կողմից թուրքերի առաջադիմութիւնն էլ հայերի համար կեանքի խնդիր է: Թուրքերի հետ համեմատած հայը փոքր բաժնետէր է: Մեծ բաժնետէրի գործը պէտք է լաւ գնա, որ փոքրը շահի:

Դժբախտաբար, երբեմն մի շարք հնարամիտ հայեր, չկարողանալով մարսել Ամերիկայում եւ յատկապէս Ռուսաստանում ստացած իրենց ուսումը, սկսում են մոլորեցնել ժողովուրդին: Այսուհանդերձ յոյսով եմ, որ խելամիտ հայերը այսուհետեւ կը հասկանան այս ճշմարտութիւնը եւ կ'աշխատեն ուղիղ ճանապարհի վրայ կանգնեցնել ժողովուրդին:

Բոլոր այս թշնամական ակնարկութիւնները ուղղելով հայերին, չեմ կարող նաեւ մեզ էլ դասել անմեղների շարքը, քաւ լիցի: Հայերով եւ քրտերով բնակեցուած վիլայէթներին անհրաժեշտ է ոչ թէ ինքնավարութիւն, այլ տեղական վարչութիւնից առաւել մի ընդհանուր «վարչակարգի» ստեղծում: Դեռեւս, ես չեմ հասկանում, թէ ինչու այդ վայրերը անորոշաբար թողնուած եմ երեսի վրայ: Մենք խուսափում ենք բարեփոխութիւնից եւ բաւարարւում ենք վէրքին լոկ սպեղանի քսելով: Մինչդեռ մենք պարտաւոր ենք ապահովել հայրենիքի բնակչութեան անդորրն ու երջանկութիւնը[11] եւ մեր հեռաւոր վիլայէթները Ռուսաստանի նկրտումներից ազատելու համար ստիպուած ենք տուեալ վայրերում ստեղծելու ընդարձակ մի վարչակարգ: Եւ եթէ ստեղծուի մի այնպիսի վարչակարգ, որը կարողանայ ապահովել արդարութիւնն ու խաղաղութիւնը, զիւրացնի մշակոյթի եւ առեւտրի զարգացումը, ես հաստատ համոզուած եմ, որ հայերը 25–30 տարի ապահովուած կը լինեն:

Արեւելեան վիլայէթներին չի կարելի ինքնավարութիւն տալ: Եթէ նոյնիսկ տրուի էլ, դրանից առաւելապէս տուժելու են փոքրամասնութիւն կազմող հայերը: Մինչդեռ, մի ապահով վարչակարգով հայերը կարող են վերելք ապրել թէ առեւտրի եւ թէ ազգային զարգացման ասպարէզում եւ ապագայում ձեռք բերել քաղաքացիական աւելի լայն իրաւունքներ: Անհրաժեշտ է, որ հայ ժողովրդի իրաւունքները օրինականացուեն.

այդ դէպքում հայերը միրաւի օսմանցի կը դառնան: Լեհերի հարաբուրգներին ցուցաբերած հաւատարմութեան չափ, եթէ հայերն էլ օսմանցիներին հնազանդուեն, երկու կողմերն էլ հանգիստ կեանք կ'ունենան: Բոլոր դէպքերում նրանց (հայերի) հարցը կարելի է շտապ լուծել՝ բոլորին կոտորելով (ընդգծումը մերն է,- Ա.Փ.):

Այդ դէպքում ժամանակի խնայողութիւն էլ կը լինի: Ցամենայնդէպս ես համաձայնութեան գալու կողմնակից եմ եւ ես չեմ կարծում, որ մեր միջեւ չլուծուող հարցեր լինեն:

Այժմ անդրադառնանք քրտերին: Իմ մտքովս անգամ չի անցնում առարկութիւն անել քիւրտ ազգի դէմ: Սակայն ես կտրականապէս դէմ եմ քրտերին օտարացնելու մտքի հետ: Քրտութիւնը մի երկրորդական ազգութիւն է եւ կարող է իր գոյութիւնը պահպանել միայն որպէս երկրորդական ազգութիւն: Այնպէս, ինչպէս օրինակ Ֆրանսիայում պահպանուել են պասքերն ու միւս գաւառացի ազգութիւնները, Լեհաստանում՝ լիթվացիները կամ Մեծն Բրիտանիայում սկովտիացի ազգը: Սրանք բոլորն էլ իրենց անձն ունեն մի ընդհանուր ազգութիւն հանդիսացող Ֆրանսիացիութեան, լեհութեան եւ անգլիութեան մէջ: Եթէ նրանք հեռանան այդ ընդհանուր ազգութիւնից, ապա, ամէն ինչ կը կորցնեն: Մտածեցէ՛ք, ի՞նչ կարող է դառնալ մի պասք, եթէ դէմ լինի եւ չընդունի Ֆրանսիցիութիւնը:

Հետեւաբար մեր քրտերն էլ պէտք է լաւ հասկանան, որ երկրորդական ազգերը կարող են գոյատեւել միմիայն մեծ ազգերի միութեան մէջ: Քրտերը, ինչպէս նաեւ չերքէզները, լազերը եւ միւս փոքր ազգութիւնները իրենց ուրոյն տեղն կարող են ունենալ միմիայն թուրքական մեծ ընտանիքի մէջ: Եւ այդ տեղը նրանց համար պատուաբեր է: Ես առաջարկում եմ, որպէսզի քրտերը իրենց ազգութեան խնդրում չափազանցութիւնների մէջ չընկնեն: Եթէ դրանից իրենց համար մի օգուտ լինէր, ապա բոլոր ազգութիւնների կողմնակիցը հանդիսացող այս հեղինակը (Նկատի ունի իր անձը, -Ա.Փ.) եւս այդ խնդրում խորհրդածութիւններ չէր անի: Ի վերջոյ քրտութիւնը առաջադիմելու հեռանկար չունի:[12] Օսմանեան կայսրութիւնում նոյն վիճակում են գտնւում նաեւ չերքէզները: Նոյնիսկ եթէ համեմատելու լինենք թուրքերը թուով այդքան շատ լինելով հանդերձ, դեռեւս, ինչպէս որ հարկն է չեն կարողանում իրենց ազգութիւնը կուռ ամբողջականութիւն դարձնել: Ուր մնաց, որ քրտերը կարողանային այդ անել: Թրքութիւնը լքելով, քրտութեան երազներով տարուելը նշանակում է իրենց ձեռքում եղած հնարաւորութիւնն էլ բաց թողնել: «Ապաներէն լեզուով եմ ուսում առնելու» ասող «մեծ գիտակներին» էլ

տեսանք, թէ ինչպէս նրանք անընդունակութիւն հանդէս բերեցին նաեւ միւս բոլոր լեզուներում: Կը

ցանկանայինք, որ մեր քիւրտ եղբայրները խրատ վերցնէին այպանացիներից եւ իրենց երկրորդականութիւնը, ազգային զարգացումը տեսնեն ոչ թէ այլ զանազան մտքերի մէջ, այլ թրքութեան հետ ձեռք-ձեռքի տուած բարեկամութեան մէջ: Ես չեմ խօսում քրտերի քաղաքական, հասարակական, վարչական պահանջների մասին, քանի որ ես նրանց համարում եմ թուրքեր:[13] Մեզ հետ առնչուող ինչ հարցեր որ կան, բնականաբար եւ հարկադրաբար բոլորն էլ վերաբերում են նաեւ նրանց: Մի խօսքով, ես իմ մտքերը աւելի չեմ խորացնում, քանի որ թրքութեան ու մահմետականութեան միասնականութեան մէջ, ես թուրքի եւ քրտի միջեւ տարբերութիւն չեմ դնում: Կրկնում եմ. Ֆրանսիացու հետ համեմատած պասքը, արաբի հետ՝ պերպերը, անգլիացու հետ քանատացու համեմատութիւնը նոյնն է ինչ թուրքի հետ՝ քրտինը:[14]

ԲԱՑ ՆԱՄԱԿ «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ԻՆ

Ցարգելի գործընկեր.

Ձեր թերթում ինձ ուղղուած բաց նամակը կարդացի խորը ակնածանքով: Ձեր թոյլտուութեամբ կ'ուզէի պատասխանել այդ նամակի մի քանի կէտերին:

Այնտեղ խօսում էք իմ Կրետացի լինելու մասին եւ ինձ ամբաստանում յատկապէս այդ հողի վրայ ասելով, որ «Ձեզ մօտ ի յայտ են գալիս անցեալում ստեղծուած մի քաղաքակրթութեան ազդեցութիւնը»: Ես խորապէս շնորհակալ եմ այս մեծ գնահատանքի համար: Ծնուել եմ Կրետէ կղզում: Հայրս էլ ծագումով Կրետացի է: Քաղաքակրթութեան եւ այլ պարագաները զուգակցելով եթէ Ձեր ակնարկութիւնը իմ յոյն լինելու մասին է, ապա այդ կապակցութեամբ կարող եմ ասել, որ մեր սերնդի մէջ յունական ոչ մի կաթիլ արիւն չկայ:

Այնուհանդերձ մի կողմ թողնենք այս «նուրբ» սուբյեկտիւ մտածութիւնները: Ես հայերի հանդէպ միշտ խորը համակրանք եմ ունեցել եւ միշտ նրանց նկատի եմ ունեցել որպէս աշխատասէր, նախաձեռնող, կարգապահ, հետեւողական եւ չափազանց ընդունակ մի ժողովուրդի: Եթէ չեմ պախում, «Le Jeune Turc» (Երիտասարդ թուրքեր) թերթում աշխատակցելու ընթացքում մօտ 20-ի հասնող յօդուածներ գրելով բացայայտել եմ իմ տեսակէտները եւ ցոյց տուել թէ հայ ազգը

ինչպիսի մի կարեւոր տարր է Օսմանեան պաշտօնական ազգութիւնների շարքում: Հայկական ջարդերի համար ամենաշատ վշտացողը ես եղայ:[15] Այս մասին նոյնիսկ կարող է վկայել «Ազատամարտ»-ի հաւաքածուն:

Հետեւաբար իրաւացի չէք Ձեր այն հարցադրման մէջ, երբ ասում էք, որ մենք իբր հոգատար չենք եղել ձեր հանդէպ:

Դուք կատարեալ իրաւացի էք, երբ նշում էք հայերէն լեզուն չտիրապետելու մեր թերութիւնը:

Այնուհանդերձ մեր այդ թերութեան մէջ ինչ-որ չափով մխիթարուելու գրդապատճառներ կան: Հայերը այնքա՞ն լաւ են տիրապետում թուրքերէնին, որ...:

Մենք հայերին չենք մեկուսացրել մեզանից: 1327 (1909) թ. «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան Սալոնիկի խորհրդաժողովին ուղղուած գրութեան մէջ ներկայացրել էի իմ տեսակէտները:[16]

Օսմանցիութիւնը մի պաշտօնական ազգութիւն է: Թրքութիւնը, հայութիւնը ցկեանս իւրայատուկ ազգութիւններ են: Օսմանցիութեան գոյատեւումը պէտք է փնտռել այս իւրայատուկ ազգութիւնների յարատեւման մէջ: Առանց մեծամտութեան կարող եմ ասել, որ թուրքերի մէջ ամենաշատ «արմենոֆիլ» գրողը ես եմ: Եւ այս համակրանքն էլ կեղծ ու չինծու չէ: Դրա համար գրդապատճառներ կան: Դրանք բխում են հայ ազգի վեհանձն բնաւորութիւնից:

Գալով այն մասին, որ թուրքական մամուլը բանավէճի մէջ չի մտնում (մեզ հետաքրքրող հարցի շուրջ), իրաւացի էք: Այդ պարագան գրաւել է նաեւ իմ ուշադրութիւնը: Ինչ կարող եմ ասել, դեռեւս սազմնային վիճակում գտնուող մի ազգ ենք: Ձեր ասելով հայ երիտասարդութիւնը կարդում է հիմնականում մի շարք իմ կարեւոր ստեղծագործութիւնները: Ես այդպէս էլ գիտէի: Դա ապացոյցն է այն բանի, որ հայ երիտասարդները առաւել ողջամիտ են, եւ այդ երեւոյթը արժանի է գովասանքի:

Ես եւ ինձ նման մտածողները, որոնք կազմում են նոր պետութեան հիմքը, մեծ սպասելիքներ ունենք հայերի ծառայութիւններից:

Ձեր յօդուածից պարզւում է, որ մինչ այսօր իբր մենք չենք կարողացել հասկանալ ձեզ: Կը խնդրէի, որ ձեր մտքերը լաւ կշռադատէիք եւ այդ առթիւ պրպտէիք թուրք առաջաւոր մարդկանց միտքը, լինի գրականագէտ, բանաստեղծ, գիտնական, քաղաքագէտ, եւ վստահ եղէք, որ նրանք էլ ինձ նման ձեզ են նայում այն նոյն աչքերով:

Այնպէս որ, այդ ասպարէզում մեզ մի մեղադրէք: Եթէ ուզում էք ինչ-որ բանում քննադատել մեզ, ապա այն ասէք այլ ուղղութեամբ: Թուրքերի մի շարք վատ սովորութիւնները բնատուր են եւ գալիս են անցեալի վնասակար իւրայատկութիւններից: Մենք իւրայինների հանդէպ եւս գթութիւն ցուցաբերելու յատկութիւնը չունենք: Թուրքերը, ոչ միայն հայերի կամ ուրիշների, այլ միմիանց նկատմամբ էլ դաժանութիւն են ցուցաբերում: Կարող եմ պարզ ասել, որ թուրքերի եւ հայերի միատեղ, համերաշխ աշխատելը կը բերի նիւթական շահոյթ: Հայերը, եթէ կարողանան թուրքերի հետ լաւ վարուել, ապա կ'ազատուեն լքուած մի ժողովուրդ լինելուց: Նմանապէս, թուրքերն էլ եթէ կարողանան շահել հայերի աջակցութիւնը, ապա առաւել կը հզօրանան:

Դուք խօսելով իսլամի, համամիսլամիզմի քաղաքականութեան մասին, բաւականին կշտամբում էք ինձ: Մինչդեռ, այս հարցում իրաւացի չէք: Այս երկրում տանդապատումների, առասպելների եւ անոտիապաշտութեան դէմ ամենաշատ պայքարողներից մէկը, կարող եմ ասել, որ ես եմ եղել: Արդար եւ օբյեկտիւ լինելու խնդրում շատ եմ փորփկանտել եւ այժմ էլ շարունակում եմ այդ ուղղութեամբ աշխատել: Համամիսլամիզմի հարցում դուք սխալւում էք: Իսլամը լոկ կրօն չէ, այն քրիստոնէութեան հետ չհամեմատուող քաղաքական մի կոնֆեդերացիա է: Հետեւաբար մի նպատակային հասարակայնութիւն է: Իսլամը լոկ մի կրօն չ, այլ դրանից բացի մի ինչ-որ այլ բան, իր աւանդոյթներով, կղերականութեամբ, զանազան սերունդներից կազմուած մի ամբողջութիւն: Այս հարցում այստեղ չեմ խորասուզուելու, քանի որ հնարաւոր էլ չէ այդ բոլորը ամփոփել 400 տողանոց մի նամակում: Իմ միտքը առաւել պարզ լուսաբանուելու է հրատարակութեան պատրաստուող «Իսլամի Միութիւնը» վերնագիրը կրող հատորում: Համամիսլամիզմը միայն Օսմանեան պետութեամբ չի սահմանափակւում, վստահ եղէք, որ իմ նպատակը այլ է: Մի կարծէք, որ Օսմանեան պետութիւնը բաղկացած է միմիայն թուրքերից եւ մահմետականներից, այն կարող է յարատեւել հայերի հետ եւս. (իհարկէ միւս տարրերին ես չեմ անտեսում):

Ինչ վերաբերում է քրիստոնեաներին, ապա դա մի այլ խնդիր է: Այն յարձակումները, որոնք ուղղուած են մեզ հանդէպ, բնականաբար վերաբերում են նաեւ ինձ: Ինչ-որ հարցում եթէ դիւրահաւատ էք, մի անգամ եւս կարդացէք Գուլկարիայի թագաւոր Ֆերտինանտի զինուորին ուղղուած ուղերձը: Այդ մասին հասարակական գործերի մինիստր Բիսարիա էֆէնտին եւս ինձ քննադատելով "Jon Turk"-ի մէջ գրել էր այդ մասին: Այդ ժամանակ գրած իմ պատասխան յօդուածում յիշեալը ոչ մի արձագանգ չտուեց: Եթէ ուզում էք այդ ասպարէզում ձեզ հետ եւս կարող ենք բանավէճի մէջ մտնել, բայց ինչ օգուտ:

Այն ինչ որ յայտնի է, ապացուցման կարիքը չունի: Այդ մի շարք քրիստոնեաների թուում հայերը չեն ընդգրկւում: Եթէ կայ մի եկեղեցի, որը տուժել է մահմետականների ձեռքից, ապա դա էլ Սուրբ Գրիգոր Եկեղեցին է:[17] Ձեր նախընտրած սոցիալիզմի գաղափարները մեծ մասամբ համընկնում են մահմետականութեան տեսակէտների հետ:

Դուք կարդացէք մօտ օրերս հրապարակուող իմ մէկ ստեղծագործութիւնը, եւ կը համոզուէք դրանում: Ընդհանրապէս հաւատք ընծայէք հայ ժողովրդին եւ ձեր թերթին վերաբերող իմ եզրակացութիւններին:[18]

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջաբան

1. Տե՛ս Ռ. Սաֆրաստեան, Օսմանիզմի դոկտրինան Օսմանեան Կայսրութեան քաղաքական կեանքում, Երեւան, 1985, էջ 41 (ռուսերէն):

2. Հայերի Ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում: Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու Մ.Գ. Ներսիսեանի խմբագրութեամբ: Երեւան, 1982, էջ 202 (ռուսերէն):

3. Lepsius J. Der Todesgang des Armenischen Volkes, Potsdam, 1930, s. 222.

4. Տե՛ս «Ազգ», 30 Ապրիլ 1994, էջ 6:

Թարգմանութիւն

1. Օսմանեան Կայսրութեան եւրոպական տիրութիւններին տրուող անուանումը:

2. Նկատի ունի 1911-1913 թթ. պալքանեան պատերազմները:

3. 1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմի ընթացքում Ռոդոսը գրաւուեց իտալացիների կողմից: Ռոդոսը Յունաստանին միացաւ 1947 թ. Փարիզի հաշտութեան պայմանագրով:

4. Նկատի ունի սուլթան Ապտուլ Համիտ Երկրորդին (1842-1918): Իսկ սուլթանի բռնութիւնները առնչւում են 1894-96 թթ. Սասունում եւ այլ հայաբնակ վայրերում տեղի ունեցած կոտորածների հետ, որոնց զոհ գնացին 300,000 հայեր:

5. Ոչ միայն Ջելալ Նուրին, այլեւ միւս թուրք պատմաբաններն ու քաղաքական գործիչները դիտումնաւոր կերպով միշտ էլ աշխատել են նուազեցնել հայերի թիւը Արեւմտեան Հայաստանում:

6. Կրկին նկատի ունի 1894-96 թթ. Սասունի եւ այլ հայաբնակ վայրերում տեղի ունեցած հայերի կոտորածները, ինչպէս նաեւ 1909 թ. Ատանայի կոտորածը:

7. Շահրիկեան Ցարութիւն (Ատոմ)- հայ հրապարակախօս եւ հասարակական գործիչ: Տուեալ ժամանակ եղել է «Ազատամարտ» թերթի խմբագիրը: Հրատարակել է պատմական եւ հրապարակախօսային մի շարք աշխատութիւններ եւ յօդուածներ:

8. Հայերէն գրախօսականը նախ լոյս է տեսել «Ազատամարտ»ի էջերում, իսկ յետագայում՝ առանձին գրքով Կ. Պոլսում 1913 թ. հետեւեալ խորագրով. «Օսմանեան Կայսրութեան անկման պատմութիւնը. երիտասարդ թուրքերու վերանորոգուող դպրոցը»: 1913 թ. Ս. Սիրանեսը հայերէնից թուրքերէն է թարգմանել Ց. Շահրիկեանի վերոյիշեալ աշխատանքը եւ հրատարկաել առանձին գրքով (տե՛ս Osmanli Imparatorlgunun tarih-i tedennisi, Istanbul, 1913. (արաբատառ): Ց. Շահրիկեանի գրախօսականում մանրամասն վերլուծուել եւ քննադատուել է Ջելալ Նուրիի «Օսմանեան անկման պատմութիւնը» (Tarih-i tedenniat-i Osmaniye) աշխատութիւնը: Հեղինակը յատկապէս կանգ է առել Ջելալ Նուրիի փանիսլամիզմի եւ օսմանիզմի գաղափարախօսութեան սխալ տեսակէտների եւ յատկապէս կայսրութեան ժողովուրդների նկատմամբ կիրառուող միաձուլման քաղաքականութեան վրայ: «Ջելալ Նուրին չէ կրցեր ինքզլուծած նախապաշարումներէն ամբողջովին ազատիլ,- գրում է Ց. Շահրիկեանը,- եւ իր եզրակացութեանց մէջ հասեր է վերստին նախկին ժէօն-թուրքական շովինիզմին՝ թէեւ աւելի փափկացած եւ աւելի նրբացած ձեւով: (Տե՛ս Օսմանեան Կայսրութեան անկման պատմութիւնը, էջ 4):

9. Այսինքն՝ ուզում է ասել ոեւէ թուրք հեղինակի նախաձեռնութիւնը:

10. Բնականաբար Ջելալ Նուրիի այս մեկնաբանութիւնները սխալ են եւ անընդունելի, քանի որ ըստ նրան, բացայայտ դատապարտում է հայերի ազգային ինքնագիտակցութեան հարցն ու ազգային ազատագրական պայքարը:

11. Այո՛ պարտաւոր էիք: Դժբախտաբար կարճ ժամանակ անց կատարուեց ճիշդ հակառակը: Հայերի հալածանքների եւ կոտորածների հետեւանքով զոհ գնաց մէկուկէս միլիոն մարդ: Կատարուեց 20-րդ դարի սկզբին առաջին ահաւոր ցեղասպանութիւնը:

12. Բնականաբար քիւրտ ժողովրդի մասին Ջելալ Նուրիի այս դատողութիւնները եւս անիմաստ են եւ անընդունելի: Այսօր բոլորին յայտնի է, թէ ինչպիսի ճգնաժամային *հոգեվարք* է ապրում քրտական հարցը Թուրքիայում:

13. Իսկ յետագայում թուրքական հանրապետութեան շրջանում պաշտօնատար *անձինք* սկսեցին քրտերին անուանել «Լեռնային թուրքեր»:

14. Տե՛ս Tarih-i Istikbal, էջ 177-185:

15. Լաւ կը լինէր, որ ժամանակակից թուրք պատմաբաններն ու պետական գործիչները, որոնք *ուրանում եւ* հերքում են հայկական կոտորածները, ուշադրութիւն դարձնէին Ջելալ Նուրիի այս արտայայտութեան վրայ:

16. Իրականում այս եւ յաջորդ 1911 թ. «Միութիւն եւ առաջադիմութիւն» կուսակցութեան խորհրդաժողովում Ջելալ Նուրին առաջարկութիւններ է կատարել Օսմանեան Կայսրութեան ոչ մահմետական ժողովուրդների միաձուլման ծրագրի մասին (Տե՛ս Օսմանեան Կայսրութեան անկման պատմութիւնը, էջ 67):

17. Այստեղ Ջելալ Նուրին թոյլ է տուել բացայայտ սխալ, որովհետեւ միջնադարի հայկական եւ *թուրքական* պատմագրական աղբիւրներում *եկեղեցիների* քանդման կամ մզկիթի ձեւափոխման մասին կան բազմաթիւ փաստեր: Տե՛ս Աւետիս Փափազեան, Արեւմտահայութեան վիճակը ըստ Օսմանեան սուլթանական ֆիրմանների (XVI-XVIIդդ.), Պատմա-բանասիրական հանդէս, 1988, No 2, էջ 126-127:

18. Osmanli Imparatolugunun Tarih-i tedennisi, s. 96-100:

ՆՈՐ ՕՐ Եռօրեայ, Յունիս 1994,
Թիւ 47, 48, 49:

1915 Թ. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆԸ ՅՂՈՒԱԾ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(ՆՈՐԱՅԱՅՏ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ)

Սրանից մի քանի տարի առաջ, երբ ուսումնասիրում էինք Երեւանի Արուեստի եւ գրականութեան թանգարանում պահուող Գրիգոր Զօհրապի ձեռագրային ֆոնդը. օսմաներէն գրութիւնների մէջ (հին արաբատառ թուրքերէն) մեր ուշադրութիւնը գրաւեց Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից Բարձրագոյն Դրանը ուղղուած մի ուղերձ (takrir)*:*

Այն բաղկացած է 7 էջերից. լուսանցքներում կան որոշ ուղղումներ. իսկ վերջում խմբագրական մի դիտողութիւն. տարեթիւ եւ Գրիգոր Զօհրապի ստորագրութիւնը:

Ստորեւ տալիս ենք այդ դիտողութեան բնագրի պատճէնը. լատինատառ վերծանութիւնը եւ թարգմանութիւնը:



Vaziyeti temin kilmış diyerek Ermenilerin değil o kitada meskun diğer vatandaşlarımızın dahi seyanen refah ve saadetini kafil vaziyetin.

ZOHRAB (13)31 (1915)

Կացութիւնը կարգաւորելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ ոչ միայն հայերի, այլեւ այդ շրջանում բնակուող միւս հայրենակիցների բարօրութեան եւ երջանկութեան երաշխաւորումը հաւասարապէս:

Զօհրապ (13)31 (1915 թ.)

Մեզ յայտնի է, որ սովորաբար նման բարձրաոճ բնոյթի պաշտօնական գրութիւնները նախքան Բարձրագոյն Դուռ ուղարկելը մի վերջի անգամ նայւում եւ խմբագրւում էր Գրիգոր Զօհրապի կողմից, քանի որ նա գերազանց տիրապետում էր օսմաներէն լեզուին:

Ուղերձի բնագիրը բաւականին դժուարութեամբ վերծանելուց եւ ընթերցելուց յետոյ պարզուեց, որ այն գրուած է մեծ եղեռնի նախաշեմին (այդ է վկայում նաեւ Գրիգոր Զօհրապի կողմից նշուած տարեթիւը): Տուեալ ժամանակ պատրիարքարանը նկատի ունենալով հայութեան օրհասական ծանր կացութիւնը դիմում է բարձրագոյն դրանը կանխելու համար սպասուող ահաւոր վտանգը:

Նշենք, որ այդ ծանր տագնապալի օրերին պատրիարքարանը թուրքական կառավարութեանն է յղել մի այլ համառօտ շարադրուած գրութիւն եւս: Իր հերթին Գրիգոր Զօհրապը բուռն ջանքեր է գործադրել կանխելու արեւմտահայութեան վրայ ծանրացած մեծ վտանգը: Նա անձամբ տեսակցել եւ խնդրագրեր է ներկայացրել երիտթուրքական ղեկավար գործիչներին կանխելու համար հայերի զանգուածային կոտորածները: Գրիգոր Զօհրապի կողմից գրուած այդ պաշտօնական գրութիւններից մի քանիսը մենք թարգմանել եւ հրատարակել ենք՝ «Գրիգոր Զօհրապի հայոց եղեռնը կանխելու վերջին ճիգերը» խորագրով յօդուածում: (Տե՛ս «Նոր Օր» եռօրեայ, Նոյեմբեր 30, 1994, էջ 11):

Արխիւային հրատարակութիւններում վերոյիշեալ պատրիարքարանի կողմից Բարձրագոյն Դրանը յղուած ուղերձի թարգմանութեանը մենք չենք հանդիպել: Այնպէս որ ուղերձի ամբողջական թարգմանութիւնը հայ ընթերցողին է ներկայացւում առաջին անգամ, անհրաժեշտ ծանօթագրութիւններով:

Մենք համոզուած ենք, որ սոյն գրութեան մաքրագրուած օրինակը պէտք է գտնուի Թուրքիայի պետական արխիւներում:

Բնականաբար ուղերձը մեկնաբանութեան կարիք չունի, որովհետեւ բովանդակութիւնից կարելի է կռահել թէ տուեալ ժամանակ ինչպիսի ահաւոր վտանգի առաջ է կանգնած եղել արեւմտահայութիւնը: Այդ տեսակէտից սոյն գրութիւնը յոյժ կարեւոր է եւ հրատապ, քանի որ մեր օրերում թուրքական պատմագրութիւնը եւ պետական գործիչները աշխատում են ամէն կերպ խեղաթիւրել եւ աղաւաղել 1915 թ. հայերի ցեղասպանութիւնը:

Որոշ պատկերացում կազմելու համար ստորեւ ուղերձի բնագրից բերում ենք սկզբից մի հատուածի պատճէն, լատինատառ վերծանութեամբ եւ հայերէն թարգմանութիւնը ամբողջութեամբ:



HUZUR-I SENIYE CENAB-I SEDARET PINAHIYE
MARUZE-I DAGIYENEMDIR

Ermenilerle meskun vilayat-i Osmanyadan varid olan haberlerin can ve mal ve ırzın emniyetin fidkani nokta-i nazarından delalet eyledigi hal-i vehamete iştimal gettikce kesb-i şiddet ederek şu son günlerde bir tehlike-i aniyeden korkulmak derecesine geldiği halde nezd-i hükümet seniyede bu babda patrikhane tarafindan vuku bulan müracaat bir neticeyi fili hasil edemediği cehtle metbuğ-i mufehhamimiz olan sultanat-i seniye nisbetle ibrazi millet-i dağyenem için asir dide zeval napezir bir anane hükmünde bulunmak sadakat namına olarak maruzat-ı atiyanın hakipayi Ali sedaretpinahilerine ref ve ğarazi vecibe-i dikkat ad ediyorum.

ՆՈՐԻՆ ՄԵՆՈՒԹԻՒՆ ՆՊԱՐԳՈՍՈՒԹԵԱՆ(1)
ԱՂՕԹՈՂԻՍ ԽՆԴՐԱՆՔԸ

Հայերով բնակեցուած Օսմանեան նահանգներից եկող լուրերը ցոյց են տալիս, որ կեանքի, ունեցուածքի եւ պատուի ապահովութիւնը վերացել է եւ վտանգաւոր իրավիճակը գնալով առ աւելի վատթարացել։ Այս առթիւ Պատրիարքարանի կողմից Բարձրագոյն Դրանը ուղղուած խնդրագրերը(2) մի գործնական արդիւնք չեն տուել, եւ նոյնիսկ այս վերջին օրերին կանգնած ենք մի նոր վրահաս վտանգի վախի առաջ։ Դարերից ի վեր իմ հաւատացեալ ազգին աւանդական էր դարձել տեւապէս հանդէս բերելու իր հաւատարմութիւնը բարձր սուլթանութեանը։ Ուստի, կրկին անհրաժեշտ ենք գտնում Ձերդ վսեմ վեզիրութեան ուշադրութիւնը բեւեռել հետեւեալին։

Ձերդ վսեմափայլ վեզիրութեանը յայտնի է, թէ նախկին վեհապետի(3) ժամանակ ինչպիսի անտեղի կեղեքման ենթարկուեց իմ պատրիարքութեան(4) հովանու տակ գտնուող հայ ժողովուրդը։

Ամբողջ աշխարհին յայտնի է եւ ճշմարտութիւն, որ սահմանադրութեան(5) հռչակումով իմ հաւատացեալ ժողովուրդը ինչպիսի գործնական նուիրուածութիւն է հանդէս բերել կառավարութեան ամէն մի նախաձեռնութիւնը կեանքի կոչելու խնդրում, եւ ինչ աստիճանի ջանքեր է գործադրել մահմեդական ազգերի հետ կապերը ամրացնելու եւ եղբայրութիւնը պահպանելու համար։

Պատգամաւորների մէջլիսի(6) բացման ընթացքում հայերի պահանջով է կիրառուել զինուորական ծառայութիւնը։ Իսկ ներկայ պատերազմում հրամանատարների զեկուցագրերով եւս հաստատւում է, թէ հայերը հայրենիքի համար իրենց զինուորական պարտքը ինչպիսի անձնուիրութեամբ են կատարել եւ շատերն էլ ինչպիսի մարտիրոսութեամբ զոհուել։

Բոլոր գործերի դիւրացման խնդրում հայ ժողովուրդը իր նպաստը բերելով՝ ամենայն ճշմարտութեամբ կատարել է իր բոլոր պարտականութիւնները։

Հայ ժողովուրդը չափազանց վշտացած է օսմանեան պետութեան եւ ժողովրդի գլխին եկած այս աղէտից(7) եւ պատրաստ է կատարելու հայրենիքի ապահովութեան եւ փրկութեան համար իր վրայ ընկած կարեւոր պարտականութիւնները։ Այդ ուղղութեամբ կառավարութեան ձեռնարկած նախաձեռնութիւնները կատարելով հանդերձ, մի կողմից հայերով բնակեցուած օսմանեան նահանգներում հնուց ի վեր գոյատեւող անապահովութեան հարցին պատերազմի թոհուբոհի ընթացքում անուշադրութեան մատնելը, միւս կողմից, հայերի կամքից անկախ պատճառներով մահմետական զգացումների գրգռիչ դրսեւորումները յանգեցրել են շատ նուրբ եւ վերին աստիճանի վտանգաւոր մի կացութեան, եւ նոյնիսկ պատրիարքարան հասնող վերջին գրութիւններում եւ հեռագրերում մատնանշւում են մի շարք վայրերում տեղի ունեցած կոտորածների մասին։

Այս խնդրի վերաբերեալ տարբեր ժամանակներում Բարձրագոյն Դրանը յղուած թաֆիրների ամփոփագրերը ներկայացուել են նաեւ Ձերդ վսեմ վէզիրութեան ապաւինութեանը։

Այս մղձաւանջային պահին ժողովուրդն էլ սխալ մեկնաբանութիւններին հաւատք ընծայելով՝ կասկածի տակ է առնում իր (հայ) հայրենակիցների հաւատարմութիւնը եւ նրանում տեսնում է վատ մտադրութիւնների առկայութիւնը։ Մի խօսքով, իրականում ոչ մի պատճառ՝ եւ յանցանքն չլինելով հանդերձ, լուրեր են տարածում, որ իբր հայերը կոտորելու են մահմետականներին։ Իսկ միւս կողմից, անցեալում տեղի ունեցած դէպքերի նման, իսլամի սրբութիւնները չյարգելու ստապատիր յորդորանքներով, լուրեր են տարածում հայերին կոտորելու մասին։ Նման յայտարարութիւնների նկատմամբ հայերը ինքնապաշտպանութիւնից բացի այլ ելք չունենալով՝ ինչ-որ միջոցների դիմելը ապստամբութեան որակաւորում է ստանում, որը նոյնպէս հաստատւում է անցեալում տեղի ունեցած զարհուրելի դէպքերով։

Տարբեր նահանգների կրօնական առաջնորդներից, թեմերից եւ ընդհանրապէս առանձին հայերից պատրիարքարան հասած լուրերը ցոյց են տալիս, որ այսօր կրկին միեւնոյն վտանգաւոր իրավիճակն է տիրում յիշեալ նահանգներում։

Մի շարք վայրերում, ինչպէս օրինակ, Կ. Պոլսի, Անատոլիայի(8) եւ Ատանայի կոտորածներին ականատես հայերը, նկատի ունենալով՝ նոյն ողբերգութեան կրկնուելու հաւանականութիւնը, փոխանակ բնակչութեանը պարզաբանելու պաշտպանութեան միջոցների դիմելու հանգամանքը, առանձին պաշտօնեաների կողմից այն մտի փաթաթան է դարձուում։ Իսկ կառավարութիւնն էլ հայերի նկատմամբ անվստահութիւն դրսեւորելով եւ տեղի ունեցող դէպքերի նկատմամբ իր սպասողական դիրքորոշումով, ընթացք է տալիս (հայերի) ընդհանուր հալածանքին, որը առաւել ամրապնդում է մահմետական բնակչութեան կասկածանքը եւ իւղ է քսում կոտորած սանձազերծողների հացին։ Այնպէս որ վտանգը փարատելու փոխարէն առաւել բորբոքում են այն։

Ներկայ վիճակում անհրաժեշտ է, որ կենտրոնական կառավարութիւնը զգուշացնի պաշտօնեաներին եւ բնակչութեանը։ Օրինակի համար մի ընդհանուր յայտարարութեան հրապարակումով, առանց տարակուսանքի նշուի հայ ժողովրդի օսմանեան հայրենիքի հանդէպ ունեցած հաւատարմութեան եւ աչալրջութեան մասին։

Այսպիսի տագնապալի ժամանակում անհրաժեշտ է չափազանց զգոյշ գործել եւ անուշադրութեան չմատնել նման ապիկար պաշտօնեաներից ձերբազատուելու խնդիրը։ Բոլորին յայտնի է, թէ վերջերս թուրքական մամուլի ծանուցումները ինչպիսի իրավիճակ ստեղծեցին յատկապէս Ատանայում եւ Պիթլիսի նահանգներում։

(Հայերի) դէմ ուղղուած այս հալածանքները կանխելու միակ միջոցը, օրէնքի համապատասխան յօդուածների կիրառումն է, եւ նման խաւնակիչների խստագոյն պատժումը։ Անցեալի օրինակը ցոյց է տալիս, որ նման արտառոց իրադրութեան առկայութիւնը ձեռնտու է միմիայն աւազակներին, որոնք օգտուելով բնակչութեան համար ստեղծուած այս ծանր կացութիւնից, զբաղուում են կողոպուտով եւ այլ խայտառակ արարքներով։ Ըստ Անատոլիայի վիլայէթներից հասնող լուրերի, իբր թէ աւազակութեան մոլեգնումը համարեա թէ հանդարտուել է, այն ինչ, իրականում, նոր ստացուած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ աւազակների կատարած արարքները մնում են անպատիժ, որը եւ առաւել չփացնում է նրանց։

Կառավարութեանը ուղղուած այսքան յիշեցումներից, առաջարկութիւններից, հայերի տրտունջքներից եւ պաղատանքներից յետոյ, եթէ կոտորած տեղի ունենայ, ապա դրանում ակնյայտ է դառնում այդ խնդրի թողտուութիւնը եւ օրէնքի համաձայն դա համարւում է ոճրագործութիւններին դիտումնաւոր դիւրութիւն եւ օժանդակութիւն ցուցաբերել։ Ուստի անհրաժեշտ է մի պաշտօնական յայտարարութիւն հրապարակել, եւ, որպէս յանցագործութեան

մեղսակից պատժել այն պաշտօնեաներին(10), որոնց պարտականութեան մէջ է մտնում անդորրի ապահովումը։ Ամենակարեւոր խնդիրը, դա անձի անվտանգութեան պաշտպանութիւնն է, սակայն կենտրոնական կառավարութիւնը այդ ուղղութեամբ դեռեւս մի գործնական քայլ չի ձեռնարկել։ Ըստ մամուլի հաղորդագրութեան, միակ նախաձեռնութիւնը, որ այս անգամ կառավարութիւնը ձեռնարկեց, դա Ռումելիից(11) վերադարձող ժանտարմներին դէպի հայաբնակ նահանգներ ուղարկելն էր։ Մինչդեռ, Ռումելիում այդ ողբերգական դէպքերի զգացմունքներին խորը ազդեցութեան տակ գտնուող ժանտարմների առանց կարգապահական վիճակը ամրացնելու միանգամից Անատոլիա ուղարկելը, չէր կարող ապահովել կացութեան կարգաւորումը։ Այս պարագան հաստատում է Հաճընում տեղի ունեցած յայտնի դէպքերով։ Ատանայի դաժան ողբերգութեան ամենածանր էջը, դա, պաշտօնեաների նախաձեռնութեամբ իբր անդորրը վերահաստատելու համար Ռումելիից բերուած զինուորական միաւորումների առաջ բերած իրադրութիւնն էր։

Հայերը ոչ մի այլ նպատակ չունեն, քան՝ պետութեան օրինաչափ յարատեւումն ու հայերի կեանքի, ունեցուածքի եւ պատուի ապահովումը։

Անցեալ ժամանակաշրջանի բռնութիւններին դիմակայելու համար ստեղծուած յեղափոխական կազմակերպութիւնները, որոնք այսօր ընդունել են քաղաքական կուսակցութեան ձեւ, ոչ միայն չեն շեղուել օրինականութիւնից, այլ անժխտելի իրականութիւն է, որ ամբողջ էութեամբ 5 տարուց ի վեր նրանք ջանք են թափում օսմանեան սահմանադրութեան յարատեւութեան համար։ Եւ իմ ամբողջ ժողովուրդի անունից կարող եմ վստահեցնել, որ այսօր հայերի մօտ գոյութիւն չունի ոչ մի ապստամբական կազմակերպութիւն(12)։

Այս բոլորով հանդերձ բոլոր կողմերում նկատւում է, թէ կառավարութիւնը ինչպիսի անտարբեր վերաբերմունք է ցուցաբերում հայերին հալածողների եւ կողոպտիչների նկատմամբ։ Հայերի անդորրն ու անվտանգութիւնը խաթարողների նկատմամբ եթէ միջոցներ ձեռնարկուէին, ապա ներկայ վտանգաւոր իրավիճակը չէր լինի։

Ինչպէս Ձերդ վսեմ Եպարգոսութեանն էլ յայտնի է, հայերով բնակեցուած նահանգներում շարունակուող անապահովութիւնից բացի այսօր մի նոր վտանգ էլ է սպառնում նրանց։ Այսինքն՝ հայ ժողովուրդը այս ներկայ վտանգաւոր վիճակից դժգոհելով հանդերձ, երբ խնդրառու է բարեփոխութեան գործադրութեան նկատմամբ, գտնւում է պաշտօնեաների սպառնալիքի ճնշման տակ...։(13) Միւս կողմից ուժասպառ եւ յուսաբեկ բնակչութիւնը, նկատելով այս, ձգտում է նախկին իրավիճակի վերականգնման, բայց առանց կորցնելու յոյսը բարեփոխութեան հանդէպ։

Ներկայումս խոնարհաբար ծառայելով Աստծուն, վսեմ վեհապետութեան հանդէպ աղօթողիս պարտականութիւնն է, գթութիւն հայցելով պայծառափայլ Եպարգոսութիւնից Ձեր ուշադրութիւնը հրաւիրել հետեւեալի վրայ։

Օսմանեան կայսրութեան ամենաաշխատասէր եւ օրինակայուն ազգը հա-

մարուող հայ ժողովրդին այս վտանգներից ապահովելու խնդիրը բխում է պետութեան շահերից եւ մտնում է կառավարութեան պարտականութեան մէջ։ Հայերով բնակեցուած նահանգներում իսկական եւ հիմնական, ինչպէս նաեւ բոլոր սատանումներից գերծ պահելու համար բարեփոխութեան անհրաժեշտութիւնը եւ գործադրումը պէտք է լինի վսեմ կառավարութեան ուշադրութեան կենտրոնում։

Չնայած, որ տուեալ բարեփոխութեան մասին կան այլ մեկնաբանութիւններ տուողներ եւս, սակայն, իրականում այդ բարեփոխութիւնից օգտուելու են յիշեալ նահանգների բոլոր բնակիչները հաւասարապէս։

Հետեւաբար, նվաստս աղերսում է շուտափոյթ կերպով միջոցներ ձեռնարկել իր ժողովրդի նիւթական եւ բարոյական ապահովութեան խնդրում։ Այս հարցում...(14)։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Բարձրագոյն Դուռ, մեծ վէզիրի պաշտօնատեղին։ Տուեալ ժամանակ մեծ վէզիրի պաշտօնում էր գտնւում Սայիտ Հալիմ փաշան (1863-1921)։

2. Նման խնդրագրեր եւ պաշտօնական գրութիւններ յանախակի էին յղում Բարձրագոյն Դրանը յատկապէս 1909 թ. Ատանայի կոտորածից յետոյ։ Ելնելով հայերի օրհասական ծանր վիճակից Պատրիարքարանը բազմիցս բանաւոր եւ գրաւոր բողոքագրեր է յղել Բարձրագոյն Դրանը, որտեղ փաստացի տուեալներով յայտնւում էր տեղի ունեցող անարդարութիւնների, չարաշահումների, կողոպտի, բռնաբարութեան, սպանութիւնների եւ ընդհանրապէս հայերի դէմ նախապատրաստուող զանգուածային կոտորածի մասին։

3. Նկատի ունի սուլթան Ապտիւլ Համիտ 2-րդին (1842-1918)։

4. Տուեալ ժամանակ Կ. Պոլսոյ պատրիարքն էր Զաւէն Արք. Տ. Եղիայեանը։

5. Խօսքը վերաբերում է 1908 թ. Յունիսի 24-ին երիտթուրքերի կողմից կեանքի կոչուած սահմանադրութեան մասին։

6. Պառլամենտ։

7. Նկատի ունի Առաջին Համաշխարհային Պատերազմը։

8. Նկատի ունի հայաբնակ նահանգները։

9. Նկատի ունի 1894-96 թթ. Սասունի եւ հայաբնակ այլ վայրերի կոտորածները, ինչպէս նաեւ 1909 թ. Ատանայի հայութեան յայտնի կոտորածը։

10. Ըստ կատարուած ուղղման, նկատի ունի ոստիկաններին։

11. Թուրքիայի եւրոպական մասի տիրոյթների ընդհանուր անուանումը։

12. Բնագրում գրուած է ջեմիէթ (cemiyet), որը կարելի է թարգմանել նաեւ կոմիտէ։

13. Այստեղ բնագրում կան անընթեռնելի բառեր, որոնք հնարաւոր չեղաւ վերծանել։

14. Սովորաբար նման պաշտօնական գրութիւնները աւարտւում են հետեւեալ ընդունուած արտայայտութեամբ. «Այս հարցում կամքն ու հրամանը նորին վսեմութիւն սուլթանին է»։

ՆՈՐ ՕՐ, Դեկտեմբեր 30, 1995

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊԻ ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՎԵՐՋԻՆ ՃԻԳԵՐԸ

(ԵՒ ՆՐԱ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԸ ԱՔՍՈՐԻՑ)

Մեծ Եղեռնի նախաշեմին մտատանջութիւններով լի, խորը մղձաւանջային ապրումներ է ունեցել հայ մեծանուն գրող, հրապարակախօս, միջազգային համբաւի արժանացած իրաւաբան եւ 1908–1915 թթ. Թուրքական մէջլիսի (պառլամենտ) պատգամաւոր Գրիգոր Զօհրապը: Ցատկապէս Մեծ Եղեռնի նախաշեմին ականատես լինելով եւ զգալով երիտթուրքական կառավարութեան հայերի նկատմամբ տածած թշնամական քաղաքականութիւնը, բուռն ջանքեր է գործադրել կանխելու արեւմտահայութեան վրայ ծանրացած մեծ վտանգը:

Դեռեւս 1911 թ. Նոյեմբերի 28-ին, Օսմանեան մէջլիսի պատգամաւորի իրաւունքից ելնելով Գրիգոր Զօհրապը մեծ վէզիր Սայիդ փաշային ներկայացնում է մի խնդրագիր, որտեղ անհերքելի փաստերի հիման վրայ բացայայտում է կառավարութեան անբարեացակամ վերաբերմունքը, կամայականութիւնն ու զեղծումները հայերի հանդէպ եւ Թուրքիայի հայաբնակ նահանգների ծանր դրութիւնը բարելաւելու եւ հողային հարցը լուծելու միտումներով առաջարկում է հաւանական թուացող միջոցառումներ:

Ահա այդ խնդրագրի օսմաներէն բնագրից մի հատուած.

«Զնայած սահմանադրութեան հռչակումից անցել է չորս տարի, սակայն հայերով բնակեցուած վիլայէթներում բարեփոխման ոչ մի նշան չի երեւացել: Ընդհակառակը, վերջին երկու տարիներին հայերի վիճակը անտանելի է դարձել: Ցիշեալ վիլայէթներում ունեցուածքի, պատուի եւ կեանքի ապահովութեան մասին խօսք անգամ լինել չի կարող, ջարդի սպառնալիքները բնակչութեանը պահում են մշտական սարսափի մթնոլորտում: Ստացուած տեղեկութիւններից պարզւում է, որ կան մարդիկ, որոնց ջանքերով բնակչութեան համար տեւական վտանգաւոր իրավիճակ է ստեղծւում: Ակնյայտ է, որ ամբողջապէս հայերով բնակեցուած այդ վիլայէթները կրկին նետւում են արեան յորձանուտը...»: (Տե՛ս Աւետիս Փափազեան, Վաւերագրական նիւթեր արեւմտահայերի մասին (ՀՍՍՀ ԳԱ, հասարակական գիտութիւնների գիտական տեղեկատուութեան բաժին) Երեւան, 1983, թիւ 2, էջ 5):

Գր. Զօհրապի ներդրած բոլոր ջանքերը ինչպէս նաեւ Կ. Պոլսի հայ Պատրիարքութեան ձեռնարկած միջոցառումները անցան ապարդիւն

եւ հայերի վիճակը աստիճանաբար դարձաւ աւելի վտանգաւոր եւ օրհասական:

Գր. Զօհրապը նոյնիսկ արեւմտահայերի գլխին կախուած մօտալուտ վտանգը գրի է առել իր օրագրութեան մէջ: Այսպէս, 1915 թ. Ապրիլի 25-ին կիրակի օրը նա արձանագրել է հետեւեալը.

«Պատահեցաւ ինչ որ պիտի պատահէր, երէկ գիշեր ոստիկանութիւնը շատ մը ձերբակալութիւններ ըրաւ հայերէն, բոլոր գլխաւոր դաշնակցականները: Նախ Ակնունի, Զարդարեան, Փաշայեան (Զարդարեանի տղան առտուն կանուխ տուն եկաւ հաղորդելու այս լուրը): Յետոյ շատ մը բժիշկներ եւ դեղագործներ: Ի՞նչ պատճառով: Դաւադրութի՞ւն- անհիմն: Զգուշութեա՞ն, կամ հակահարուա՞ծ, այլուր պատահած դէպքերու զոր կ'անգիտանանք այստեղ այս ժամուս: Քիչ ատենէն պիտի իմանանք:

Եւ ահա, ես, ազատ. գիտեմ թէ, իրօք, այս ձերբակալուածներու գլուխը կը գտնուիմ, եւ գիտեմ թէ ինչ պատճառով ինծի խնայուած է:

Հիմա Վարդգէսը եկաւ. ան միայն ազատ է... գացինք քաղաքական պետերու տունը: Խօսեցանք, անօգուտ»:

Իսկ 1 Մայիս, 1915 թ. Կիրակի օրը Գր. Զօհրապը գրել է հետեւեալը.

«Գաւառներէն գաղտնապէս հասած լուրերը ամէն տեղ ձերբակալութիւններ կ'իմացնեն: Պատանդներու այս գործը գերման զինուորական մտայնութեան արդիւնք: Ո՞ր օրին վերապահուած է հայոց ջարդը»: (Տե՛ս Զօհրապի օրագիրը եղեռնի նախօրեակին, Նայիրի, Մայիս, 1975, թիւ 46–50, էջ 5):

Գր. Զօհրապը գրի առնելով այս տագնապալի իրավիճակը, միեւնոյն ժամանակ առանց յապաղելու անցնում է գործի, տեսակցում եւ խնդրագրեր է ներկայացնում երիտթուրքական ղեկավար գործիչներին կանխելու համար սպասուող մեծ աղէտը:

Արեւմտահայութեան գանգուածային կոտորածների նախաշեմին տեղի ունեցած Կ. Պոլսի առաջին մահասարսուռ դէպքերի ժամանակակից Արշակ Ալպոյաճեանը ահա թէ ինչ է յայտնում այդ մասին.

«Առաջին ազդանշանը ու անդրանիկ սարսափը, որ Կ. Պոլսոյ բնակչութիւնը անակնկալի մը առջեւ կը դնէր, 1915 Ապրիլ 11-ի (24) ձերբակալութիւնները եղան: Մէկ գիշերուան մէջ Կ. Պոլսոյ մտաւորական դասակարգին ամէնէն կարկառուն դէմքերը եւ ժողովրդին ամէն դասակարգերէն 250 հոգիի չափ անձեր, ձերբակալուեցան եւ Զանկլրը եւ Այաշ տարագրուեցան: Գր. Զօհրապի նախազգացած վտանգը իր գոյութիւնը զգալի կ'ընէր: Զօհրապ, գերագոյն ճիգով մը փորձեց փրկել ինչ որ կարելի էր: Ինքն առաջիններէն մէկը եղաւ, որ փութաց պատրիարքին մօտ, եւ սրտապնդեց: Այս առթիւ իր ձեռքով խմբագրած է եպարգոսին (մեծ վէզիր) ուղղուած պաշտօնագիր մը, որ նոյնութեամբ

Գրիգոր Զօհրապի պատգամաւորական վկայականը: Նկարի տակ գրուած է.- Istanbul Mebusu Zohrab efendi. (Ստամպոլի պատգամաւոր Զօհրապ էֆէնտի: Միւս երեսին՝ Meclis-i Mebusan Osmani (Օսմանեան պատգամաւորական մէջլիս). ucuncu devreye intihabi,- (ընտրուած երրորդ նստաշրջանի համար): 1330-1334 (1914-1918)

կը ներկայացնենք ի ստորեւ լուսանկարեալ: Ձեռագիրն իրն է, իսկ ստորագրութիւնները խառն ժողովի մէջ կատարուած, խորհրդակցութեամբ եղած են»: (Տե՛ս Արշակ Ալպոյաճեան, Անհետացող դէմքեր, Գրիգոր Զօհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 240):

Ցիշեալ՝ խնդրագիրը Զաւէն պատրիարքը, Գր. Զօհրապի մասնակցութեամբ ներկայացնում է մեծ վէզիր Սայիդ փաշային: Երկու օր անց Գր. Զօհրապը մի այլ խնդրագիր է ներկայացնում ներքին գործերի նախարարութիւն: Հակառակ ձեռք առնուած միջոցառումներին, ձերբակալութիւններն ու աքսորները շարունակւում են:

Նշենք, որ Արշակ Ալպոյաճեանը իր գրքում զետեղել է այդ խնդրագրերի հայատառ թուրքերէն փոխագրութիւնները: Մեր այս յօդուածի վերջում մենք առաջին անգամ ընթերցողին ենք ներկայացնում մեր կողմից կատարուած այդ խնդրագրերի հայերէն թարգմանութիւնները:

Ինչպէս տեսանք վերեւում Գր. Զօհրապը եւ Վարդգէս Սերանդիվեանը՝ Օսմանեան մէջլիսի պատգամաւոր լինելու հանգամանքով Կ. Պոլսի հայ մտաւորականների առաջին ձերբակալուածների թուում չէին: Նրանց ձերբակալութիւնը տեղի ունեցաւ 1915 թ. Յունիսի 3-ին եւ երկուսն էլ թուրք ժանդարմաների հսկողութեան տակ աքսորուեցին Տիարպէքիրի ուղղութեամբ:

Այդ չարանենգ օրուանից սկսւում է Գր. Զօհրապի եւ Վարդգէսի տանջալից ուղեւորութիւնը դէպի աքսոր:

Աքսորի ճանապարհին Գր. Զօհրապի իր կնոջը, ինչպէս նաեւ երիտթուրքական ղեկավար գործիչներին գրած նամակներն ու հեռագրերը պահւում են Երեւանի Արուեստի եւ Գրականութեան թանգարանում: Այդ բոլորը թանգարանին է յանձնել Գր. Զօհրապի դուստրը Տիկին Տոլորես Զօհրապ – Լիպմանը: Այդ նամակները բոլորն էլ գրուած են օսմաներէն լեզուով, որովհետեւ պատերազմի ժամանակ գրաքննութեան կանոններով արգիլուած էր այլ լեզուներով գրելը: Տարիներ առաջ, (մօտ 1977 թ.) դրանց մի մասը թարգմանել եւ ներկայացրել էինք թանգարանի տնօրէնութեանը: Բանը նրանում է, որ այդ նիւթերը խիստ անհրաժեշտ էին թանգարանի աւագ գիտնական Գոհար Ազնաւուրեանին, քանի որ տուեալ ժամանակ նա ուսումնասիրութեան նիւթ էր դարձրել Գր. Զօհրապի աքսորավայրի ոգիսականը:

Աքսորավայրից իր սիրեցեալ կողակցին՝ Գլարա Զօհրապին ուղղուած նամակներով եւ հեռագրերով Գր. Զօհրապը տեւապէս տեղեկութիւն է տուել իր գտնուելու վայրի, վիճակի եւ անարդարացի կալանքի համար: Յորդորել է, որ միջոցներ ձեռնարկեն, ուղիներ որոնեն, որպէսզի դատաքննութիւնը տեղի ունենայ ոչ թէ Տիարպէքիրում այլ Կ. Պոլսում:

Գր. Զօհրապը նամակներ է յղել նաեւ հետեւեալ հասցէատէրերին:

1) Ներքին գործերի նախարարութիւն, Թալեաթ պէյին: 2) «Միութիւն եւ յառաջադիմութիւն» կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անդամ՝ Դոկտ. Նազիմին: 3) Արդարադատութեան եւ արտաքին գործերի նախարար՝ Խալիլ պէյին: Սա այն Խալիլ պէյն է, որին Գր. Զօհրապը երիտթուրքական յեղափոխութեան օրերին ապահովութեան համար թացքրել էր իր տան մէջ: Աքսորի օրերին Գր. Զօհրապը շատ մեծ յոյսեր է ունեցել, որ իրեն կ'օժանդակի, բայց Խալիլ պէյը մերժել է միջամտել նրա գործին: 4) Կառավարական բարձրաստիճան գործիչներ՝ Նեճիմեթտին էֆէնտիին, Հիւսէյն Ճահիտ պէյին, Հալաճեան էֆէնտիին, Տիլպեր էֆէնտիին:

Պաշտօնատար այս անձանց ուղղուած նամակներում Գր. Զօհրապը հիմնականում մատնանշում է, որ ինքը անմեղ է, իսկ իր ձերբակալութիւնը անարդարացի եւ հետեւանք է դաւադրութեան: Ուստի, պահանջում է, որ դատաքննութիւնը տեղի ունենայ Կ. Պոլսում: Նշում է նաեւ, որ ինքը պատուով եւ հաւատարմութեամբ է կատարել իր պարտականութիւնը պետութեան հանդէպ: Փաստացի տուեալներով ապացուցում է իր անմեղութիւնը, նշում է, որ ինքը ոչ մի յանցանք չի գործել, այլ ընդհակառակը գործնականապէս բարոյական եւ նիւթական օգնութիւն է ցուցաբերել պետութեանը:

Ահա մի հատուած ներքին գործերի նախարարութեան ուղղուած նամակից.

«Ցատուկ հարցաքննութեան համար ինձ ուղարկում են Տիարպէքիր: Ցօդուածիս ինչ լինելը չգիտեմ: Ըստ տարածուած լուրերի, իբր թէ ես հակագործունէութիւն եմ ունեցել կառավարութեան հանդէպ: Այս մեղադրանքը մերժում եմ ամբողջ խղճով: Որեւէ գործի կատարեալ քննութեան եւ արդարացի ընթացքի համար անհրաժեշտ է, որ քննուողը տեղեակ լինի մեղադրական հարցերին: Ես ոչ մէկ խմբաւորման եւ կուսակցութեան չեմ պատկանել: Երեսփոխանական ժողովներում տեւապէս ծառայել եմ պետութեանը եւ այլ գործունէութիւն չեմ ունեցել»:

Ի միջի այլոց Գր. Զօհրապը, Վարդգէսի հետ Հալէպում գտնուելու ընթացքում, մի նամակ է գրել նաեւ Ճեմալ փաշային եւ կարողացել են տեսակցել նրա հետ «Պարոն» հիւրանոցում: Սակայն այդ հանդիպումը, ինչպէս նաեւ վերոյիշեալ հասցէատէրերին գրուած նամակները ոչ մի դրական արդիւնք չեն տուել: Եւ վերջապէս հետեւանքը եղաւ այն, որ Վարդգէսն ու Գր. Զօհրապը դաւադրաբար սպանուեցին աքսորի ճանապարհին:

Ահա թէ ինչ է ասում այդ մասին երիտթուրքական գործիչ Ֆալիհ Ռիֆքը Ատայը իր «Զէյթինտաղը» գրքում.

«...Որոշ ժամանակ անց լսեցինք, որ Զօհրապն ու Վարդգէսը ճանապարհին սպաննուել են Զէրքէզ Ահմետ եւ Նազըմ չեթեների կողմից: Ճեմալ փաշան հրամայեց, որ երկուսն էլ անմիջապէս ձերբակալուեն: Սակայն Զէրքէզ Ահմետը եւ Նազըմը, տեղեկանալով այդ մասին, առաջին իսկ գնացքով փախել էին Ստամպուլ, քանի որ Ստամպուլից հովանաւորում էին նրանց»: (Ընդգծումը մերն է,– Ա.Փ.): Տե՛ս Falih Rifki Atay, Zeytindağı, Istanbul, 1957, s. 78-80):

Կարծում ենք, որ այստեղ մեկնաբանութիւնները աւելորդ են:

Գրիգոր Զօհրապի վերոյիշեալ նամակները գրուած են համեմատաբար յստակ եւ մելանով սպիտակաւուն թղթերի վրայ: Բոլորը ունեն թուագրութիւններ եւ հասցէատէրեր: Սակայն, թանգարանում պահուող Գր. Զօհրապի ձեռագրերի մէջ կայ մի նամակ եւս «Ֆերյատնամէ» (օգնութեան աղերսագիր) վերնագրով, որը առ այսօր հնարաւոր չէր եղել թարգմանել, որովհետեւ այն գրուած է բաւականին դժուար ընթեռնելի ձեռագրով. մի քիչ հաստոտ, դեղնաւուն թղթի վրայ, այն էլ մատիտով: Զուտի թուագրութիւն:

Այն չի հասցէագրուած ոեւէ մէկին, այլ ուղղուած է բոլորին: Աւելի ճիշդ մարդկային խիղճը կորցրած նախկին իր «գործընկերներին»:

Կարծում ենք, որ այդ նրա վերջին օրերին գրուած նամակներից մէկը պէտք է լինի (եթէ ոչ վերջինը), որովհետեւ բովանդակութիւնից այդպէս է հասկացւում. յուսահատութիւն եւ փրկութեան ոչ մի նշոյլ...:

Ստորեւ առաջին անգամ հրատարակում ենք նաեւ նամակի բնագիրը, լատինատառ թուրքերէն վերծանութեամբ եւ հայերէն թարգմանութիւնը:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Խնդրագիր առ Զեր պայծառափայլ վէզիրութեան

Թէեւ ներկայումս զէնքի տակ գտնուող 50 հազարից աւելի հայ զինուորների մի մասը կուում եւ արիւն է թափում մեր սահմաններում, իսկ միւս մասը պատրաստ է պատերազմի մէջ մտնել եւ կատարել իր բաղաքացիական պարտքը, այսուհանդերձ, տարածուած չարամիտ լուրերի հետեւանքով կառավարական շրջաններում նկատւում են մի շարք նշաններ, որոնք վկայում են հայերի հանդէպ նրանց ունեցած անվստահութեան մասին:

Աւելին, պատրիարքարանի ընդհանուր ժողովի նախագահը մի քանի անդամների հետ միատեղ, ինչպէս նաեւ աշխարհիկ ժողովի անդամներից երկուսը, Կ. Պոլսում բնակուող երեւելի մի քանի անձանց հետ կալանքի առնելով ամսոր են ուղարկուել: Դէպքերն այս խորապէս վրդովել են իմ ժողովրդին: Եթէ օրէնքի պահանջից ելնելով ոչինչ չենք կարող ասել զինուորական դասալիքներին ձերբակալելիս գործադրուող հետապնդումներին եւ խստութիւնների առթիւ, ապա ցայսօր իմ ժողովրդի նկատմամբ ինչ

որ չափով մեղմ վարուելու խնդիրը չենք կարող անիրաւացի համարել: (Քրիստոնեաների) համար անանախադէպ այս զօրահաւաքի առթիւ հայերի շփոթմունքը թուրքերի համեմատութեամբ, եթէ մի քիչ աւելի խորն է ապա մեր վսեմափայլ կառավարութիւնը պէտք է որ ընկալի դրա բնական լինելը:

Դասալիքների դիմադրութիւնը հետախուզական զօրքերին մեծ յանցանք լինելով հանդերձ մարդկայնօրէն բնական է եւ հեռու է քաղաքական մտայնութիւնից: Պատերազմը եւ պատերազմական թատերաբեմի մերձաւորութիւնը հայաբնակ վայրերին այն մտայնութիւնն է ծնել, թէ իբր այդ դասալիքները քաղաքական նպատակ հետապնդող փետայիներ են: Դժբախտաբար կասկածի տակ են առնուել ոչ միայն մեծ թուով ընտանիքներ եւ գիւղացիներ, այլ ընդհանրապէս այդ շրջանի ամբողջ հայ բնակչութիւնը եւ նոյնիսկ հայ զինուորները: Դրա հետեւանքն են բնակչութեան նկատմամբ գործադրուող բռնութիւնները եւ նոյնիսկ հայ զինուորների զինաթափումը: Երկրի հազարաւոր զաւակների հետ մէկտեղ հայրենիքի պաշտպանութեան համար մարտնչող իմ ժողովրդին բոլոր այս ահաբեկումները խորին վրդովմունք եւ վիշտ պատճառելով, յուսաբեկել են նրան: Եւ այս արարքը ջուր է լցնում այն մարդկանց ջրաղացին, որոնք ցանկանում են պառակտել մինչեւ հիմա եղբօր պէս ապրող հայ եւ թուրք բնակչութեանը:

Վսեմափայլ կառավարութեան այն կասկածը թէ հայերը պատրաստ են եւ կամ թէ նախապատրաստւում են ապստամբութեան, իսկ միւս կողմից հայերի այն մտավախութիւնը թէ իրենք ենթարկուելով անիրաւացի ահաբեկումների կարող են կանգնել ընդհանուր ջարդի առաջ, երկու ըստ էութեան իրար հակասող մտքեր են, որից էլ ծայր են առնում վերոյիշեալ պատահարները: Օրըստօրէ հակասական եւ չարածին այս ըմբռնումներին անյապաղ վերջ տալու համար անհրաժեշտ է հրատապ քննութիւն կատարել: Եւ ես պատրաստ եմ առանց վարանման հարկ եղած երաշխաւորութիւնը տալ, որ խաղաղութեան ու անդորրի կարօտ իմ ժողովրդի մէջ գոյութիւն չունի անհաւատարմութեան ոչ մի նշան:

Ցարգանք մատուցելով հայրենիքի ու պետութեան պաշտպանութեան համար իրենց կեանքը նուիրած հայ զինուորների յիշատակին, թախանձագին խնդրում եմ եւ աղաչում Ձերդ վսեմափայլ կառավարութեան գթութիւնը եւ բարի կամեցողութիւնը ապահովութեան վերականգնման գործում:

Այս հարցում կամքն ու հրամանը Նորին Վսեմութիւն սուլթանին է:

13 *Ապրիլի* 1331 (26 *Ապրիլ* 1915 *թ.*)

Խնդրագիր առ Ներքին գործերի վսեմափայլ նախարարութեան

Անցեալ Կիրակի գիշերը ձերբակալուած հարիւրաւոր հայերի բանտից ազատելու վերաբերեալ տրուած վսեմ. խոստումը գործի վերածելու հարցը առայժմ մի կողմ թողնենք, քանի որ, մինչեւ այսօր նոյնիսկ անհնար է դարձել որեւէ տեղեկութիւն ստանալ ձերբակալուածների կալանավայրի եւ վիճակի մասին:

Միւս կողմից պատրիարքարանի տրուած երաշխաւորութեան անհետեւանք լինելը ցոյց է տալիս, որ հայերի մասին տարածուած յոռի կարծիքը խոր արմատ է գցել: Եւ բոլորովին կասկածից դուրս է, որ այդ յոռի կարծիքը կարող է հայերին մի նոր աղէտի առաջ կանգնեցնել:

Թէեւ, այսպիսի ժամանակներում է, որ պատրիարքարանը պէտք է ծառայութիւն մատուցի պետութեան եւ ազգին, սակայն նա ոչ միայն չի կարողանում իր օգտաւէտ ներդրումը բերել գործին այլեւ գտնուելով խորը վշտի եւ մտատանջութեան մէջ ի վիճակի չէ ապահովել իր ժողովրդի անվտանգութիւնը:

Ինքս եւս, այս կապակցութեամբ գտնուելով անելանելի եւ շուարած վիճակում համարձակւում եմ խորին ակնածանքով խնդրել Ձերդ պայծառափայլութեան օգնութիւնն ու գթութիւնը:

Այս հարցում կամքն ու հրամանը Նորին վսեմութիւն սուլթանինն է:

Ապրիլ 15, 1331 (*Ապրիլ* 28, 1915 *թ.*)

FERYADNAME

Konyadan Adanaya, Adanadan Halebe ve oradan Diarbekire sürükleniyorum. Kalb hastalığım o derece teşeddüd etmişdirki günde üç defa fenalik geliyor. Bir tarafdan maliçat veriyorlar bir tarafdan kolumdan tutmuş sürükliyorlar. Ne için, hangi cürmüm (.....) için. Elde bir mukaddeme-i subut, bir şüphe, bir sahihen cürm olmaksizin savt-i müadil, bilcümle bu yolculuğu yapdirilirmi ? Cenabi Hak namına ve evlad ve ayal baş uğruna kasam ediyor, hele her gün her dakika devlete hizmettem başka bir şey yapmamişim. Hele hafi,işine heç karişmamişim. Bir tahkikat-i iptida yapilsin. Zerre kadar bir şüphe bir mahal görülürse o halde sevk ediniz, ne yaparsaniz yapiniz. Merhametinize iltica ediyorum.

ŞÜKÜR
ZOHRAB

• Անընթեռնելի

Գծ. Զոհրապի նամակի բնագրի պատճէն եւ լատինատառ վերծանութիւնը

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՂԵՐՍԱԳԻՐ

Գոնիայից Ատանա, Ատանայից Հալէպ՝ եւ այնտեղից էլ դէպի Տիարպէքիր քարշ եմ գալիս: Սրտի հիւանդութիւնս այն աստիճան սաստկացաւ, որ օրուայ մէջ երեք անգամ տագնապ եմ ունենում:

Մի կողմից դեղորայք են տալիս մի կողմից թեւիցս բռնած քարշ են տալիս: Ինչո՞ւ համար, ո՞ր յանցանքիս (....) համար: Այն դէպքում երբ առկայ չեն նախնական ոչ մի ապացոյց, կասկած եւ կամ մի փաստաթղթի յանցանշան: Մի խօսքով միթէ՞ կարելի է անարդարացիօրէն կատարել այս ճամբորդութիւնը:

Աստծոյ անունով, ընտանիքիս եւ զաւակներիս անունով երդւում եմ, ամէն օր, ամէն վայրկեան պետութեանը ծառայելուց բացի ոչ մի այլ բան չեմ արել: Իսկ գաղտնի գործի մէջ բոլորովին չեմ խառնուել:

Թող որ մի նախնական հետաքննութիւն կատարուի: Եթէ աննշան մի կասկած էլ ի յայտ գայ, այդ դէպքում ախորէք, ինչ ուզում էք արէք:

Ապաւինում եմ ձեր խղճին:

Շնորհակալութիւն

ԶՕՀՐԱՊ

«ՉԱՅՆ ՏԱՌԱՊԵԼՈՑ»

Հայոց Մեծ Եղեռնի կենդանի պատկերը արտայայտելու տեսանկիւնից խիստ կարեւոր նշանակութիւն ունեն թուրքական ջարդերից մազապուրծ ազատուած վերապրողների աղիողորմ պատմածներն ու զառը յուշերը: Մի կողմից իրենց վրայ կրելով թուրքական արիւնոտ եաթաղանի մահասարսուռ վտանգները եւ ականատես լինելով իրենց հարազատների ահաւոր սպանդին, վերապրողների համար այնքան էլ հեշտ չի եղել յետագայում վերյիշել 1915 թ. սարսափները: Այնուհանդերձ, չնայած հոգեբանական ծանր վիճակին, նրանցից շատերը իրենց նամակներում եւ յուշագրութիւններում անդրադարձել են դէպի Տէր Զօրի աքսորի ճանապարհին կրած տանջանքների, ինչպէս նաեւ մօտիկ հարազատների զառը կորստի մասին:

Իսկ ոմանք, միայնակ մնալով իրենց գերդաստանից, նոյնիսկ ընկել են խորը յուսահատութեան եւ յոռետեսութեան մէջ եւ անիմաստ համարել շարունակելու Աստծոյ պարգեւած կեանքը: Եւ զուր չէ, որ ստորեւ խօսակցութեան նիւթ դարձող գրքի հեղինակը իր առաջաբանում հետեւեալ բնութագրումն է տուել նրանց ծանր վիճակի մասին:

«Նոքա ապրեցան միշտ իրենց երեւակայութեան հանդէպ պատկերացած ունենալով իշխող թուրքերի խելագար անգթութեան, զոհ ընկած իրենց ազգակիցների յուսահատական մահուան տեսարանը: Նոցա կեանքի դառն բաժակը շատ աւելի դառնացաւ որովհետեւ կոտորածների վերապրեալ իրենց շրջապատի թշուառ բաղդակիցների մահուան փոթորիկն ընկերացաւ իրենց մինչեւ գերեզման»:

Այո՛, այսօր ըստ արժանւոյն եւ բարձր պէտք է գնահատել Պետրոս Տօնապետեանի իր ժամանակին կատարած քրտնաջան աշխատանքը, եղեռնից վերապրողների նամակներն հաւաքելու եւ հրատարակելու գործում, քանի որ նա առաջինն էր, որ լծուեց դրանք կորուստից փրկելու նուիրական գործին:

«Ինձ վիճակուեցաւ,- գրում է նա,- կորստեան յորձանքի մէջէն յարութիւն տալ ոչնչացեալին՝ անմահացնելով իմ այս բազմատանջ պարզ հեղինակների անուններն...»:

Եւ այդպէս 1922 թուականին Պետրոս Տօնապետեանը Փարիզում հրատարակում է Զայն Տառապելոց (Այս է Արձան հայ տանջանաց 1915-1918) խորագիրը կրող նամակների ժողովածուն, որտեղ ընդգրկուած են բռնագաղթից եւ

ջարդերից հրաշքով ազատուած տարբեր տարիքի եւ սեռի հայ տառապեալների թուով 280 սրտամորմոք նամակները: Ժողովածուն սկսւում է համառօտ յառաջաբանով իսկ վերջում զետեղուած է պատմագիտական ընդարձակ մի ուսումնասիրութիւն հայկական հարցի եւ հայոց ցեղասպանութեան խնդրի շուրջ «Անդունդէ անդունդ» վերնագրով:

Հարկ է նշել, որ Պետրոս Տօնապետեանի «Զայն Տառապելոց» ժողովածուն, այսօր մատենագիտական հազուագիւտ ճարուող գրքերից է: (Այստեղ տեղին ենք համարում շնորհակալութիւն յայտնելու մեր գործընկերոջ, արեւելագէտ-պատմաբան Ալիշան Պայրամեանին, որը սիրով տրամադրեց մեզ իր համար էլ մասունք դարձած այս «կարմիր» շապիկով գիրքը):

Հետեւաբար, առանց տարակուսելու կարող եմ նշել, որ մեզանից

շատերը, յատկապէս նոր սերունդը ծանօթ կամ տեղեակ չէ այս գրքի մասին: Ուստի, Մեծ Եղեռնի 80-ամեայ տարելիցի նախաշեմին յարգանքի խորը տուրք մատուցելով մեր անմեղ զոհերի եւ վերապրողների յիշատակին ձգտեցինք մեր համայնքին աւելի մօտից ծանօթացնել այս աշխատանքին եւ միեւնոյն ժամանակ կատարել հետեւեալ առաջարկութիւնը:

Բանը նրանում է, որ մեր արիւրում արդէն մատների վրայ կարելի է հաշուել եղեռնից վերապրողներին, որովհետեւ անցել է 80 տարի եւ նրանց մէջ եթէ կան երկարակեացներ, նրանք էլ այսօր զարամեալ ծերութեան մէջ են: Բայց, մեր հայրենակիցների մօտ, դեռեւս որպէս մասունք պահուած կարող են լինել նման նամակներ կամ յուշեր, որոնց հրապարակումը կարեւոր նշանակութիւն կ'ունենար հայոց Մեծ Եղեռնի ողբերգութեան ուսումնասիրութեան համար, քանի որ դրանք գրուած են ականատեսի աչքով եւ այդ արիւնալի դէպքերից անմիջապէս յետոյ: Հետեւաբար եթէ կան այդպիսիները, որոնք Արեւմտեան Հայաստանից բռնագաղթուած իրենց պապերից ժառանգել են նման նամակներ կամ յուշեր կարող են դրանց բնագրերը կամ պատճէները ուղարկել «Նոր Օր» եռօրեայի խմբագրութեանը: Գուցէ այդ նամակները գրուած լինեն հայատառ թուրքերէնով, կամ էլ օսմաներէնով (արաբատառ թուրքերէն) մենք պատրաստ ենք դրանք վերծանելու, թարգմանելու եւ հայերէն հրատարակելու:

Բնականաբար Մեծ Եղեռնի յորձանուտներից անցած վերապրողների հարցով յետագայում զբաղուել են թէ հայրենի եւ թէ սփիւռքի գիտնականներն ու մտաւորականութիւնը: Յատկապէս վերջին տասնամեակներում Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի հասարակական գիտութիւնների գիտական տեղեկատուական բաժնում այդ հարցով յատուկ զբաղւում է արաբագէտ-պատմաբան Դոկտ. Նուպար Զալբմեանը, որը

վերապրողներին տեսագրելու եւ նրանց յուշերը գրի առնելու գործում կատարել է զգալի աշխատանք:

Իսկ «Զայն Տառապելոց» գրքում ընդգրկուած վերապրող նամակագիրների կամ նրանց ազգականների տեղը յայտնաբերելու, խնդրութիւնը հաստատելու եւ ընդհանրապէս աւելի ընդարձակ տեղեկութիւններ քաղելու նպատակով Զօրեան Ինստիտուտը դեռեւս Ապրիլ 11, 1987 թ. «Ասպարէզ» օրաթերթի անգլերէն բաժնում հրատարակել էր նամակների հեղինակների անուններն ու գրուած վայրերի ցանկը: Կարծում ենք, որ այդ ուղղութեամբ ինստիտուտը հասել է ակնկալուած գրական արդիւնքին:

Մենք մեր հերթին մանրամասն ուսումնասիրեցինք այդ նամակները եւ աշխատեցինք ընտրութիւն կատարել դրանցից մի քանիսը հրատարակելու համար, որպէսզի ընթերցողը անմիջական պատկերացում կազմի թէ նամակների բովանդակութեան եւ թէ հայոց Մեծ Եղեռնի ընթացքում Երիտթուրքերի Արեւմտահայութեան նկատմամբ կիրառած ցեղասպան քաղաքականութեան մանրամասնութիւնների մասին: Իհարկէ ընտրութիւն կատարելը այնքան էլ հեշտ չեղաւ, որովհետեւ բոլորն էլ կարեւոր են եւ ճշմարտացի արտայայտում են տուեալ ժամանակաշրջանի իրավիճակը: Այնուհանդերձ, այսօրուայ ընթերցողին ծանր հոգեկան ապրումներ չպատճառելու միտումով մենք այստեղ խուսափեցինք ընդգրկել կոտորածի ահաւոր պատկերները նկարագրող նամակները: Իսկ ընդհանուր առմամբ այդ նամակներում խօսւում է հետեւեալի մասին.

Բռնագաղթի եւ բարբարոսային ջարդերի, խոշտանգումների նկարագրութիւններ. կանանց եւ երեխաների բռնի յափշտակում եւ թուրքացնելու քաղաքականութեան բազմաթիւ փաստեր. դէպի Տէր Զօր աքսորի ճանապարհին, կիզիչ անապատներում սովի, ծառաւի, վառակիչ հիւանդութիւնների հետեւանքով տեղի ունեցած մահացութիւններ. իրենց երեխաների, ծնողի եւ հարազատ ազգականների կորստեան ողբ. օգնութեան աղերսներ որբ երեխաների եւ ծայրաստիճան հիւծուած եւ ոսկրացած մարդկանց կեանքը փրկելու համար. կարօտը՝ կորցրած հայրենիքի հանդէպ եւ անհուն կսկիծով վերյիշումը իրենց բնակավայրերի, տան, գիւղի, քաղաքի, եկեղեցու, վանքի, օղի, ջրի եւայլնի մասին, եւ հաւատքով եւ յոյսով ներշնչուած կրկին հայրենիք վերադառնալու պատրանքը: Եւ վերջապէս մի կողմից տրւում է ինքնապաշտպանական կռիւների հերոսական դրսեւորման գովքը, իսկ միւս կողմից դառը մեղադրանքի խօսքեր առանձին վայրերում տեղի ունեցած անկազմակերպուածութեան մասին եւ այլ հարցեր:

Ստորեւ «Զայն Տառապելոց» գրքից քաղուած ընթերցողի ուշադրութեան ենք ներկայացնում վերապրողների նամակներից ամբողջական եւ առանձին հատուածներ. դրանք թուով 12-ն են եւ գրուած 1916–1917 թթ.:

1.

Կարին, Դեկտեմբեր 10, 1916

Եղբայրս,

Ցաւալի է մեր վիճակը վերբերով լեցուն մեր սրտերը. ո՞հ որքան ցաւալի եւ տխուր է մեր անցուցած կեանքը, որ բաժանուած ենք մեր սիրելիներէն. ո՞հ որքան արցունքներ թափած եմ եւ պիտի թափեմ մինչեւ վերջ որ կորուսեր եմ եւ պիտի չտեսնեմ. եւ աչքերէս թափուած արցունքներ մաշեցին երեսս եւ խոր ակօսներ բացին այտերուս վրայ: Ինչպէս գրեմ եւ ինչպէս հասկցնեմ, շշորած ապշած կը մնամ թէ ինչպէս գրեմ մեր սիրելի մայրի մասին կամ մեր ազնիւ հոյրի համար կամ մեր միւս ազգականաց համար թէ ուր մեռան կամ ուր մնացին...:

ԶԱՐԹԻԿ ՍՈՂԻԿԵԱՆ

(էջ 1)

2

Տէր Զօր

Ադրարիկս,

Արիւնի ճամբէն սկսանք բալել յառաջանալով դէպի Մալաթիա ուր Կարինէն մեզի ընկերացող թուրք պաշտօնէութիւնը յանձնեց մեզի Մալաթիոյ կառավարութեան: Այս վերջինս ալ Ատիամանի գայմագամին որուն հրամանին ներքեւ կը գտնուէր բաւական ժանտարմաներ ինչպէս բաղեշցի հրամանատար Էմին էֆէնտի եւ Աշէյնալ անուն մի քիւրտ պէյ իր գազանաբարոյ արբանեակներով: Հոս մեր դժբախտ կարաւանէն խլուեցան հարիւր եօթանասունէ աւելի այրեր, որոնք ամէնն ալ վերոյիշեալ քիւրտ պէյի հրամանով չարաչար մահուամբ փակեցին իրենց աչքերն իրենց սիրելիներու ներկայութեամբ իսկ: Մեր ընտանիքէն մինակ ես կամ. մնացած մէկ առ մէկ աչքովս տեսայ ամէն մէկուն սոսկալի սպանուիլը կամ տառապանքէ ու անօթութենէ մեռնիլը, ես ալ նոյն ճակատագիրը պիտի ունենամ: Ինչ կ'երազէր մեր ազգը եւ ինչ եղանք:

Թշուառ քոյրդ՝
ՍԱԹԵՆԻԿ

(էջ 5)

3

Էրզրում, Զիթող գիւղ, Նոյմ. 10, 1917

Սիրելի Ցովհաննէս,

...Թուրք եւ քիւրտ զինուորներով մեր գիւղը պաշարեցին այնպէս որ ազատելու հնար չկար. սուրը դեռ մեր վրայ չբարձրացած մեր մահը կը տեսնէինք. եւ ժողովուրդի աղաղակի ձայնը երկինք կը թնդացնէր. մայրերու, քոյրերու եւ փոքրիկ երեխայաց հեկեկանքը բոլորովին երկիր կը շարժէր, եւ երբ հոս ու հոն մարդիկ կը զարնուէին ու վար կ'իյնային եւ արիւնը կը վազէր ամէն ոք խելքերնին կորսուած կը փախչէր, եղբայրը քոյրը կը ձգէր, մայրն իւր երեխան գետինը կը թողուր կամ ջուրը կը նետէր եւ անանկ մը կու գայ ինձ թէ ամէնքս խելագարածի պէս եղած էինք սարսափէն. ինչպէս փախայ եւ ինչպէս ազատեցայ չգիտեմ, բայց ինձ նման ազատած հայերու շատ հանդիպեցայ ձորերու եւ լեռներու մէջ ուրիշ գիւղերէ...:

ՎԱՀԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆ

4

Ումուտում գիւղ Կարնոյ, Ապրիլ 10, 1917

Գրիչս ձեռք առնելով չեմ գիտեր թէ ինչ պէտք է գրել, նկարագրել հասարակ դէպք մը, նկարագրել ցեղի մը բնաջնջումը, նկարագրել անմեղ եւ մատաղատի երեխայից քարաջախջախո՞ւմը, թէ՛ մանկամարդ եւ փափկասուն օրիորդաց բռնաբարո՞ւմը, լկո՞ւմը եւ խեղդամա՞հը. ասոնց եւ ոչ մէկը չեմ կարող նկարագրել, որովհետեւ միայն ու միայն Բղիի շրջանէն 50.000 հայ ժողովուրդ կոտորուած է, այլազան տեսակներով եւ չարչարանքով որով իւրաքանչիւր մարդ կամ անհատ, ունի իրեն առանձինն երկար եւ ցաւալի դէպքերով պատմութիւնը. որո՞ւ պատմութիւնը աղեխարշ եւ անլսելի ու ցաւելու արժանի չէ: Վաթսուն տարեկան հասակէն յետոյ հոգեկան անմխիթար վիճակի մը հասայ եւ կենդանի մեռածի նման կ'ապրիմ առ այժմ. չկան զաւակներս, չկան եղբայր, եղբօրորդիներս, չկայ ընտանիք եւ սիրելիներս:

ՆԱԶԱՐԷԹ ՓՈՍՏՈՑԵԱՆ

(էջ 116

5

Խնուս, Ցունուար 1917

Սիրելիք,

...(Բղիի) գաւառի 18000 հայ բնակչութիւնը խումբ խումբ իրար ետեւէ քարաւանի նման կը բռնէին մարտիրոսութեան անծայրածիր ճանապարհը: Ցունիս 1-ին (1915 թ.) տեղահանուեցան քաղաքի հայ բնակչութեան մի մեծ մասը եւ Խուրսի, Սերկեւիլի, Ճըպլըրգիւղի հայերը: Օր մը յետոյ Առէֆցիներն, յետոյ Քեմրանցիներն, յետոյ Ծերմաք, Օսնակ, Ապողնաք, Սեղանք,

Աստղաբերդ, Զարիպաշ եւ Օրօր գիւղերու հայերն եւ այսպէս շարունակաբար...:

Երեք օր վերջը, մինչ գաւառի հայ ազգաբնակչութեան քարաւանի մէկ ծայրը հերթի կը սպասէր ճանապարհորդելու, տեղահանումներու առաջին խումբը կը հասնէր Ագփունդարի ձորերը, կանխապատրաստուած ողջակէզի սեղանի վրայ: Հոն հրացաններով եւ թուրերով կը սպասէին դահիճները հայերու քարի դրացի քիւրտերն՝ ղեկավարութեամբ կառավարութենէն նշանակուած պարագլուխներու: Տեղահանուածներու քարաւանին կը հրամայուի կանգ առնել: Տանջանքի, յոգնածութեան բեռան տակ ճնշուած կիներն, երեխաները կը փռուին գետին պահ մը հանգստանալու. եւ տղամարդիկ ալ պահակներու նման գլխիկոր կը հսկեն անոնց վրայ... Վիշապն յանկարծ կը շարժի, դժոխքը կ'որոտայ եւ դժոխքի դռներէն կրակ կը տեղայ զոհերու գլխին... Ահաբեկած երեխաներու ճիչն ու լացը, խելակորոյս մայրերու ողբն ու կոծը, սարսափած եւ նուաղող կոյսերու աղաղակն ու շիւանը, անզէն տղամարդկանց գոռում գոչումը, խառնուելով հրացաններու որոտումներուն հետ կը ստեղծէին երկնային գահը սասանեցնող մարդկային փոթորիկը: Բնագդը գերագոյն թափով երեւան կու գար զոհերուն մէջ, եւ բանականութիւնը յաղթահարուած տեղի կու տար. մայրը իր մանուկը կը ձգէր, սիրահարն՝ իր սիրուհին, ամուսինն իր կինը եւ իրար կոխոտելով կը վազէին, կը փախչէին, մոլեգին հսկայ ալիքներու նման բաղխելով մէկ կրակէ շրջապատէն միւսը..., Զեմ գիտեր քանի վայրկեան տեւեց այս վիճակը, որու ընթացքին զոհերու շարքերը զգալի չափով կը նոսրանային: Այս քիւրտերը սկսան իրենց դիրքերէն ցած վազել իրենց զոհերուն մէջ: Քիւրտ կիներն ալ անոնց կը հետեւէին զինուած մանգաղով եւ թոնրի շիշերով: Փախչելու չյաջողած տղամարդիկ կը սպանուէին, գեղեցիկ կիներն ու աղջիկներն կ'առեւանգուէին, երեխաները կը յափշտակուէին, դիակները կը կողոպտուէին, եւ կէս-ողջերն կը մերկացուէին... վե՞րջը: Երեսի վրայ մնացած մի քանի կիներ, մանուկներ կը հաւաքուէին շարունակելու իրենց ընդմիջուած ճանապարհը: Կը տարուէին անոնք, աւելի ճիշդը կը հալածուէին փայտերով եւ հրացաններով մինչեւ հարուածներու տակ բոլորովին անզօրներն, յոգի կնայք, կ'իյնային կէս ճանապարհին այլեւս չկանգնելու համար...:

ՊՕՂՈՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ

(էջ 259-260)

6

Պաղտատ, Ապրիլ 3, 1917

Սիրելի եղբայր Վահան

...Նախնիքներու պատմութիւնը չպիտի ընեմ քեզ, որովհետեւ վստահեմ, թէ բաւական ծանօթութիւն ունիս ու կորուստին մեծութիւնը կը զգաս: Իրրեւ ազգ գոյութիւն չունինք այլեւս Թուրքիոյ մէջ. վեց կուսակալութիւններու ժողովուրդը անխնայ ոչնչացուցին եւ իրենց քաղաքէն հազիւ 1-2 օրուան ճամբայ, բոլոր այրերը դժոխային միջոցներով սպաննուեցան իսկ, Թուրքիոյ միւս կողմերը գտնուող հայերը ոչնչացուցին, ջարդուեցան մինչեւ որ հասան իրենց համար որոշուած ոչնչացումը...:

Ս. ՇԻՐՎԱՆԵԱՆ

(էջ 128)

7

Երեւան, Հոկտ. 10, 1917

Մարգար ջան,

...Մուշը բոլորովին տուն չէ մնացած. քաղաքը բոլորովին դաշտի է նման. իսկ այդ սոսկալի կոտորածից ազատուած հատ ու կտոր ժողովուրդն էլ հիմա ապրում է Գիւմրի եւ Ղարս...:

Մի տարի առաջ որ Մուշ գնացի, մի օր ելայ տեսնելու գիւղերուն վիճակն. ահա քեզ արդիւնքը. մինչ Մօկունք հասնելուս անկարելի էր որ ձիս մի քայլ առնէր առանց ոտքը մի կնոջ կամ երեխայի ոսկորներուն դպելու: Վերջապէս հասայ գիւղն. ինչ տեսնեմ, փողոցներ, տուներ եւ ձորեր լիքն են հայերու անթաղ ոսկորներով. շատ չկրցայ հոն մնալ, անցայ Սոխգոմ ուր տարուած եւ վառուած էին Մշոյ բոլոր կին ու երեխեքը. մի 30 հատ մեծ մարաքներ այրուած. երբ փայտովդ կը խցես մարաքը ալ հոտից պէտք է ժամերով փախիս. էհ Մարգար ջան էլ էդ մասին ներէ որ երկար չպիտի կրնամ գրել, աչքերս նորից լեցուեցան, արիւնս գլուխս թռաւ...:

Արիւնոտ սրտով

Եղբայրդ ՀԱՅԿ ՄԻՐԻՃԱՆԵԱՆ

(էջ 164-165)

8

Երուսաղէմ, Դեկտ. 17, 1917

Վեհափառ Տէր, Կաթողիկոս

Ամենայն Հայոց,

...Ժողովուրդը ուղիղ գծով Սուրիոյ անապատները չեն քշած, այլ խոտոր ճամբաներով անմատչելի լեռներէ, անդնդախոր ձորերէ եւ անանցանելի գետերէ առաջնորդելով, անոնց մեծ մասը ճամբուն վրայ մեռած, գետերու մէջ խեղդուած, անօթութեան եւ համաճարակ հիւանդութիւններու զոհ գացած են:

Հայ աֆսորականները ամբողջ մէկ ու կէս տարի հանգիստ առնելու հաստատուն կայան մը չեն ունեցած նոյնիսկ Սուրիոյ ամայի անապատներուն մէջ: Դահիճները խարազան ի ձեռին հալածած են զանոնք տեղէ տեղ, մերկ, հիւանդ, սոված վիճակի մէջ: Հայու բնաջնջումին գլխաւոր ազդակներէն մէկը այդ տեւական թափառումին մէջ պէտք է փնտռել...:

Պատրիարքական փոխանորդ

Հայոց Կ. Պոլսոյ՝

ԵՐՈՒԱՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ

(էջ 248)

9

Կաթողիկոսական Դիւանատուն

Դեկտ. 8, 1917 Ս. Էջմիածին

Սիրեցեալ Պետրէ,

...Եւրոպական գաղութը կարծես մոռցաւ Ս. Էջմիածինն ու գաղթականական գործը: Կարճ պիտի գրեմ: Սովը իւր ահռելի բերանը բացած կեցած է դիմացնիս հայութեան փրկուած բեկորները կլանելու: Եթէ կարող էք՝ անմիջապէս դրամական օգնութիւն հասցրէք թէ այդ տեղիցն թէ Մանչեսթրրից եւ այլ տեղերից... դրութիւնը սոսկալի է, ապագան մութ, դաժան ու յուսահատ աստիճանի: Մեր մտաց աչքերի առաջ հայութեան մահուան խաչարձանն է կանգնած: Մնացածը դուք ինքներդ կը կռահէք:

Կաթող. Դիւանապետ

ՏԻՐԱՑՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(էջ 211-212)

10

Թիֆլիս, Նոյեմբեր 12, 1917

Յեղափոխական ընկերս,

...Այդ ամէն մեծաքանութիւններէ յետոյ, երբ կարգը եկաւ ժողովուրդը պաշտպանելու անխուսափելի կոտորածէն կամ գէթ ինքնապաշտպանութիւն ընելու, մէջտեղը մարդ չմնաց: Միթէ՞ այս դաւանանել չէր մեր նուիրական պարտականութեան: Բայց ինչ արած, մեր մէջ ամէն ինչ խօսք՝ ոչ թէ գործ...:

ԲԵՆԻԱՄԻՆ ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ

(էջ 194)

11

Իգտիր, Ապրիլ 8, 1917

Սիրելի եղբայրս,

Կը գրես թէ միտք ունիս Ամերիկայէն դառնալով Պոլիս հաստատուիլ երբ պատերազմը վերջանայ: Բայց արդեօք բաւական չէ որ փոխանակ Պոլիս երթալու հաւաքուինք Հայաստանի հողին վրայ: Մենք որ փորձեցինք վարժուած եւ սնած ենք հայրենիքի նախանձախնդրութիւններով, մինչեւ ե՞րբ պանդխտութեան նիրաններուն մէջ տառապինք. չէ՞ որ օտար երկրի հարուստը իր հայրենիքէն զրկուած աֆսորական մը կը սեպուի. հապա ո՞ւր մնաց մեր նախանձախնդրութիւնը, որ ուրիշներուն Հայաստանը կը քարոզենք: Մտածենք եւ յետոյ խօսինք: Ո՞վ պիտի լեցնէ աւերակ եւ հայէ ամայացեալ Հայաստանը եթէ մենք չ'որոշենք մեր կեանքը տնկելու անոր սուրբ հողին վրայ:

ՔԱՂԷՔ ՇԱՀՊԱԶԵԱՆ

(էջ 11-12)

ՆՈՐ ՕՐ, Օգոստոս 17, 1994

12

Երուսաղէմ, Դեկտ. 21, 1917

Սիրելի աղջիկս,

...Այլեւս չունինք տուն տեղ, չունինք ինչք եւ ապրանք, չունինք պատիւ եւ բարոյական: Ասոնց ամէնքն ալ կորսուինք: Տուներնիս յափշտակուեցաւ. պատիւնիս եւ բարոյականնիս բռնաբարուեցան. իսկ ընտանեկան եւ կրօնական սրբութիւններս իսպառ եւ իսպառ պղծուեցաւ. եւ որ ամէնէն ահռելին եւ սոսկալին է, այն է որ միլիոն ու կէս անմեղ հայ հոգիներ ոչնչացան. սպաննուեցան, խողխողուեցան, սրոյ եւ հրոյ ճարակ եղան, ողջ ողջ գետերը թափուեցան: Ո՞ր մէկն ըսեմ եւ որ մէկը թողում: Մենք ալ մեր կարգին բաժին ունեցանք խմելու այս դառն բաժակէն. ամէն բան կորցնելէ վերջ մեծ զաւակս եւ հարսս ալ նահատակուեցան բարբարոսներէն. միայն ես եւ երկու աղջիկ թոռներս նախախնամութեան վերին տնօրէնութեամբ ազատուելով տարիէ մը աւելի Երուսաղէմ կը գտնուինք հայոց Ս. Յակոբայ Վանքը, բոլորովին աղքատ տնանկ, մերկ եւ բոպիկ, անօթի ծառաւ...:

Սնուցիչ կաթնամայրդ
ԲՐԱԲԻՈՆ ԿՏԱԿԵԱՆ
Իզմիտցի

(էջ 294-295)

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ